ԳԻՐՔ XLIX



ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՆՐԱՅԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

1908 № 3—4 ՆՈՅԵՄԲ.-ԴԵԿՏ.

ԹԻՖԼԻՍ
ԵԼԵՔՏՐԱՅԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՑ՝ ՊՕԼԻՍ. 7.
1908

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

«Լուման» առաջիկայ տարին . . . . . Գ.
Ամենայն հայոց կաթողիկոսի ընտրութիւն . . . Զ.
† Մուրացան . . . . . Ը.
Գարնան ծաղիկներ. բանաստ. Մուրացան 3
Քօսա-դաղ լերան վկան, Լեոն Խանզադէ 5
Տէր Գաբրիէլ Պատկանեանցը. Եր. Շահազիզ . . . 24
Խրիմեան Հայրիկի յիշատակին. Արամ Գիւրջեան . . 62
Միրէյօ. Պրովանսական քերթուած Ֆրեոտերի Միսթրա-
լի. Ֆր. թրգմ. Արշակ Զոպանեան 73
Աշխատելու արուեստը. Կ. Հելտի. թարգմ. Արտակ Վ. 114
Երազեալ ոսկեդար. Մինաս Բերբերեան . . . . .
Ցուշեր, բանաստ. Զօն 120
Յայտարարութիւններ (կազմի վերայ)

ԳԻՐՔ XLIX



ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՆՐԱՅԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

1908 № 3—4 ՆՈՅԵՄԲ.-ԴԵԿՏ.

ԹԻՖԼԻՍ
ԵԼԵՔՏՐԱՇԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆԻ՝ ՊՕԼԻՑ. 7.
1908

„ԼՈՒՄԱՆ“ ԺԴ. ՏԱՐԵԾՐՋԱՆԻՆ

Տասն և երեք տարի առաջ ծնունդ առաւ «Լուման», որի XLIX գիրքը այսօր է լոյս տեսնում...

1896 թուի սկիզբն էր, երբ «Լումայի» I գիրքը լոյս տեսաւ, բովանդակելով իւր մէջ պատմական և գրական նիւթեր, և այդ օրից Լուման—սակաւաթիւ ամսագիրներից մինը—գրաւեց իւր տեղը պարբերական հրատարակութիւնների շարքում. երկար տարիներ անցան այն օրից և շատ ու շատ տառապալից օրեր պատեցին հայ ազգի և գրական աշխարհի առանց այն էլ մառախլապատ թանձր հորիզոնը։

Բայց «Լուման» մնաց իւր դերում երկար տարիներ, մինչև որ համառուսական ցաւալի ելք ունեցող յեղափոխութիւնը թուլացրեց «Լումայի» վաղուց ի վեր թուլացած նիւթականը. այո, կրկնում ենք, միայն նիւթականը, որովհետև բարոյական աջակցութիւնից «Լուման» մինչև օրս էլ զուրկ չէ և կարող ենք վստահ կերպով ասել, որ մենք բարոյականը աւելին չենք ցանկացել։

1905 թուի արիւնալից փոթորիկը իր բազմաթիւ տնտեսական ու այլ խիստ կարևոր հարցերով արգելաւոիթ եղաւ «Լուման» կանոնաւոր շարունակելու, բայց խմբագրութիւնը, չնայելով նախընթաց տարիներից բաց մնացած մի քանի հազար ռուբլու հասնող դիֆիցիտին, շարունակեց առանց յուսահատուելու հրատարակել «Լումա»։ Բայց հանգամանքները միշտ ուժեղ են մարդուց և մանաւանդ մի ուժասպառ մարդուց (մեր խօսքը ի հարկէ նիւթական ուժասպառութեան մասին է)։

Ահա այստեղ է միմիայն այն խորը և քչերին մատչելի պատճառը, որ «Լուման» վերջին երկու տարուայ ընթացքում անկարող եղաւ նոյնպիսի կանոնաւոր կերպով առատ նիւթ մատակարարել հայ ընթերցող հասարակութեան, որպէս նա ռոկուն կերպով շարունակեց տասը տարուց աւելի. Հայ մամուլի դժբաղդ վիճակն է եղել միշտ վերջացնել իւր գոյութիւնը դիֆիցիտով, այն էլ ծանր, և կամ նիւթականի պակասութիւնից դրդուած. և շատ քիչ առևտրական ու այլ հանճարներ կարողանում են իրենց գոյութիւնը պահպանել քիչ թէ շատ յարատև ժամանակ։

Հայ աղան միշտ վախեցել է գրչից և բարոք է համարել իւր սնդուկի առատ գանձը ծառայեցնել այնպիսի գործի, ուր կարելի է կրկնակի յետ ստանալ. հեռու է հայ ազգից այն օրը, երբ նրա ամեն մի անհատ պարտաւորապէս իւրովսանն կըմտածի մայրենի գրականութեան և գիտութեան բարգաւաճման համար։

Իսկ մինչ այն, թող անսասան կորովով առաջ ընթանայ գրչի հայ աշխատաւորը և իւր վարձատրութիւնը փնտռէ սնանկ հայ խմբագրութիւններում։ Լոյսը պիտի վերջի վերջոյ բնաջինջ անի խաւարը ու իւր շլացնող ճառագայթները նետելովդէ-

պի մութ անկիւն, անշնչացնի լոյսից խորշող անհատներին և կամ նրանց սերունդները լոյսի ընտելացնի։

Բայց մենք շեղուեցինք։ Մեր խօսքը «Լումայի» մասին էր. մենք խօսեցինք նրա անկանոն հրատարակութեան մասին. բայց մենք պիտի լռենք այն առթիւ, թէ ինչ տուեց «Լուման» հայ ընթերցողին և ինչ դեր խաղաց նա հայ գրականութեան մէջ։ Այդ մասին իւր կոմպետենտ և ուժեղ խօսքը թող ասի պատմական քննադատը, որի առաջ մենք պիտի լռենք։

Մի երկու խօսք էլ Լումայի ապագայի մասին։

1909 թուին մենք փորձում ենք նորից վերսկսել Լումայի շարունակութիւնը և ինչպէս միշտ՝ յուսազուրկ որևէ ապահովութիւն ստանալուց. իսկ եթէ հայ լուրջ մամուլի և գրականութեան իսկական բարեկամները գտնում են, որ Լուման իբրեւ միակ գրական պատմական ամսագիր անհրաժեշտ է հայ գրականութեան, թող շտապեն ապահովել ամսագրի հրատարակութիւնը և ցոյց տան, որ արհամարհանքի դրոշը վերացել է հայ մամուլի ճակատից։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

«Լուսայ»-ի ընթերցողներին ծանօթ է արդէն, որ Խրիմեան Հայրիկի առ տէր փոխուելով Հայաստանեայց Մայր Աթոռը թափուր մնաց և կաթողիկոսական նոր ընտրութիւն նշանակուեց անցեալ հոկտեմբերի 30-ին։

Չնայելով, որ ընտրական հրաւիրագրերը Էջմիածնի սինօդը իւր ժամանակին ուղարկեց ներքին գործերի նախարարութեան, որ, ըստ պալաժէնիայի Կ. Պոլսի ռուսական դեսպանի միջոցով ուղարկում է Տաճկահայ թեմերին, այնուամենայնիւ հրաւիրագրերը բաւական ուշ տեղ հասան, այնպէս որ տաճկահայ թեմերում պատգամաւորական ընտրութիւնները կատարուեցին շատ հապճեպ կերպով և շատերն իսկ ստիպուած եղան պատգամաւորներ նշանակել մեր կողմերից հեռագիրներով, որպէս զի ծայնի իրաւունքից զրկուած չմնան։

Այս ուշացնելու պատճառը, ինչպէս վերջը պարզուեց այն էր, որ ռուս կառավարութիւնը դիտաւորութիւն էր ունեցել կաթողիկոսական ընտրութիւնը յետաձգել, մինչև որ Հայոց եկեղեցու կառավարութեան վերաբերեալ նոր կանոններ մշակէ, բայց վերջը լսելով Կովկասեան Փոխարքայի հակառակ կարծիքն այդ մասին՝ փոխել էր իւր դիտաւորութիւնը։

Սինօդը այս խնդրում մի զեղծում գործեց. Կիլիկիոյ 7 թեմերից 7 հոգևոր և 7 աշխարհական պատգամաւոր հրաւիրելու փոխարէն միմիայն մի հոգևորի և մի աշխարհականի

հրաւիրագրեր ուղարկեց, որի դէմ ոչ միայն բողոքեց տեղւոյս մամուլը, այլ որ գլխաւորն է բողոքեց ինքը Կիլիկիոյ կաթողիկոսը և նոյն իսկ չմասնակցեց կաթողիկոսական ընտրութեան։ Այս խնդիրը մնաց առ կախ, որովհետև Էջմիածնի Համադումարը ուշադրութեան առարկայ չդարձրեց այս կարևոր խնդիրը, մինչ դա ազգային լրութեան տեսակէտով կարևորագոյն խնդիրներից մէկն է և առաջիկայում կարող է շօշափելի տարաձայնութիւնների առիթ լինել։

Հոկտեմբերի 25-ին արդէն գրեթէ ամեն կողմերից ժողովուել էին հոգևորական և աշխարհական պատգամաւորները։

Մամուլի, ինչպէս նաև պատգամաւորների մէջ երկու խոշոր հատուածներ կային։ Մի մասը իրանց ընտրելի ներկայացնում էին Ամեն. Իզմիրլեան սրբազանին և Դուրեան եպիսկոպոսին, իսկ միւսը դարձեալ Իզմիրլեան սրբազանին և Օրմանեան արքեպիսկոպոսին։

Վերջին ամիսների Տաճկաստանում տեղի ունեցած կառավարական եղանակի փոփոխութեան պատճառով հրաժարուած էր Օրմանեան պատրիարքը, ուստի և նորա թեկնածութեան հաւանականութիւնը յայտնի չափով նուազել էր, և այս իսկ պատճառով վերոյիշեալ երկու հատուածների մէջ պայքարը շատ մեծ չափով տեղի ունեցաւ։

Տաճկահայ պատգամաւորները, ազատութեան հովերին սիրահար, հեռացել էին Օրմանեանից, իբրև միմիայն կուլտուրական զարգացման հետևող անձից, և դեռ Էջմիածին չհասած, Վոսփորի ափերից դէպի մեզ լողացող շոգենաւի վերայ արդէն կատարել էին իրանց նախնական որոշումը։

Նոյեմբերի 1-ի Համադումարը սրբագործեց այդ որոշումը և Մայր տաճարում ընտրութիւն կատարելով ամենայն Հայոց կաթողիկոսական ընտրեալ հռչակեց ամեն. Տ. Մատթէոս եպս. Իզմիրլեանին 73 ձայնով և նորան կանդիդատ Տ. Եղիշէ եպս. Դուրեանին 55 ձայնով։

Օրհնեալ է Աստուած, Հայաստանեայց առաքելական եկեղեցին շուտով կպատռէ իւր սգոյ քօղը և նորընտիր վեհ. կաթողիկոսը ժամանելով ս. Էջմիածին՝ կմատչի ի հովութիւն Հայաստան ժողովրդոյ։

† ՄՈՒՐԱՑԱՆ

Յոգնած կեանքի արհաւիրքներից և ուժասպառ՝ հիւանդ ուղեղը դադարեց գործելուց...

Հասարակական բուժարանի մի մռայլ ու առանձնացած սենեակում մեռաւ հայ ազգի արժանաւոր անդամներից մինը։—

Փակ սենեակից՝ միայնակ նայում էր նա դէպի ազատ աշխարհ ու իւր խիստ յոգնած ուղեղով մերթ զուարթ յոյսեր ներշնչում իրեն, մերթ՝ ընկնելով չար ոյժի պողպատի ճանկերը, զարհոյրի ու հոգեկան ալեկոծութեան փրփուրն էր թափում բերանից. ծանր էր պատկերը ինչպէս և վիճակը և բնութեան վեհ ոյժը խղճաց յոգնած մարմնին, ու զգայուն հոգին իւր գիրկն առնելով յաւիտենական հանգիստ տուեց նորան։

—Բայց ո՞վ էր նա։

—Հայոց գեղեցիկ գրականութեան աշխատաւորներից մինը՝ Մուրացանը (Գրիգոր Տէր-Յովհաննիսեան), որ իւր կեանքը նուիրեց հայ գրականութեան, ապրեց մինչև իւր վերջին շունչը նրանով։

Պատմութիւնն է միայն այն ուժեղ ձայնը, որ Sine iura et studio կարող է արժանի հատուցում տալ ամէն մի գրողին և այս դէպքում Մուրացանին։

Բացի այլ պարբերական հրատարակութիւններից Մուրացանը եռանդուն կերպով աշխատակցել է նաև Լումային առաջին տարուց սկսած և մինչև իւր հիւանդութեան վերջին օրը և մենք հետևեալ համարում կտանք նրա պատկերը կենսագրական տեղեկութիւններով միասին։

Իսկ այժմ մենք յայտնում ենք մեր սրտի կսկիծը երկարամեայ աշխատակցի ցաւալի կորստի առթիւ։

ԳԱՐՆԱՆ ԾԱՂԻԿՆԵՐԻՆ

Գողտրիկ, զուարթ ծաղիկներ՝
Գարնան մուտքին շքադիր
Դուք պճնել էք դաշտ, արօտ,
Առուի ափեր գեղադիր։

Ծածանում էք մարգերում,
Զարդարում լեռ ու քարափ,
Արևից շող կորզելով՝
Գիշերից ցող ու տարափ։

Փայլում էք հա՜ շուրջ բուրում
Այդքան քնքոյշ ու սիրուն՝
Որ ձեր տեսքին զմայլած
Սիրտը՝ սիրով պատարուն

Արհամարհէ վշտերը,
Գրկէ կեանքը ջերմագին,
Եւ սիրաշուրթ համբուրին
Զոհէ իւր սիրտն ու հոգին...

Կար ժամանակ որ ես էլ
Գարնան ժպտին սիրահար,
Մնում էի անհամբեր
Ձեր բացուելուն գունավառ.

Պտրում էի դաշտերում
Ձիւնածաղիկ, մանիշակ,
Իսկ ծաղկոցում՝ վարդ, քրքում,
Յասմիկ, շուշան ու մեխակ։

Կապում էի նոցանից
Փնջեր բուրեան ու քնքոյշ՝

Եւ խանդավառ, ժպտադէմ
Նուէր տանում սիրուհուս.
Եւ աչերը սէգ կուսին
Պայծառ երկնից համատիպ,
Ձեր երփներանգ թերթերին
Նայում էին լուսաբիբ։
Ապ՝ ժպտալով ինձ անոյշ՝
Փունջն հոտոտում քաղցրաբոյր,
Եւ սերտ սիրոյն ի նշան
Տալիս ինձ ջերմ, հուր համբոյր...
Աւաղ, բաղդիս նախանձեց
Զարագուշակ, սև ոգին,
Ջերմ սրտի մէջ դրաւ ցուրտ,
Սէրը դարձուց արեան գին։
Ժպիտ, թէ ջերմ համբոյրներ,
Գգուանք, թէ խանդ գեղանու
Սիրապատար հոգւոյն հետ
Թռան ինձնից, ոհ, հեռու...
Ինչո՞ւ այլ ևս՝ Փլօրայի
Պսակին զարդ ծաղիկներ,
Բացւում էք ու հրապուրում
Արտասուացող իմ աչեր.
Ո՞ւմ համար ես կթեմ ձեզ,
Ո՞ւմ համար փունջ պատրաստեմ,
Իմ դիցուհին էլ չըկայ,
Փակուեց արդէն իմ եդեմ...
Թառամեցէք, ոհ, դուք էլ,
Կամ խնդրեցէք Աստծուն
Որ աչքերիս վարագոյր՝
Իսկ սրտիս տայ թմրութիւն,
Զը տեսնեմ ձեր վառ պատկեր,
Ոչ էլ զգամ անոյշ բոյր...

ՄՈՒՐԱՑԱՆ

ՔՕՍԱ-ԴԱՂ ԼԵՐԱՆ ՎԿԱՆ

ԵՂԵՐԱԿԱՆ ՎԷՊ

(Թրքահայ գաղթականների կեանքից)

I

Արշալոյսը բացւում էր։ Վաղորդեան աղջամուղջը անհամարելի կերպով ասես հալւում, անհետանում էր, իր թևերի տակից մէկ-մէկ բաց թողնելով Տըրխ գիւղի սար ու ձորը, դաշտ ու արտորայքը, քար ու թուփը, որոնք հետզհետէ երևան էին գալիս և իրանց քնաթաթախ դէմքով ցցւում առաջիդ ու, կարծես, մինչև դետին խոնարհելով՝ բարի առաւօտ քեզ մաղթում. ապա, ուղղուելով, երկարացնում իրանց հասակը ու քո հրամանիդ սպասում։

Կեանքը արագ-արագ սփռւում էր ամեն տեղ. դիշերային խաւարի չար ոգին հալածւում, փախչում, անհետանում էր և ամեն ինչ արթնանում, ոտքի էր կանգնում և իր սովորական դերի մէջ մտնում. այլ ևս չը կային խաւարային շրջիկ, նենգամիտ ոգիներ. ամեն տեղ չքանում էին նրանց նոյնքան նենգամիտ, ծուռ ու մուռ շարժումները, նրանց ահ ու սարսափ տարածող ուրուականը։ Դեռ մի երկու ժամ առաջ քեզանից ոչ հեռու կանգնած ուռենին, որը քեզ վրայ ահ ու դող էր սփռում, հանդարտ շւալով, շարժում էր իր տերևները և քթի տակին ծիծաղում քո երկչոտութեան, թուլասրտութեան վրայ։ Եւ այսպէս, քեզ սատանայ, դև, գայլ ու արջ թուացող իրերը մէկ-մէկ դուրս էին պրծնում խաւարի գրկից և մանր ու բարակ շարժումներով իրենց աչքերը տրորում։ Դեռ արևը չէր դուրս եկել տօնելու իր յաղթանակը. դեռ դիշերային աղ-

ջամուղջը տենդային կռիւ էր մղում նրա հետ և ջանքեր գործ դնում՝ նրա ճանապարհը կտրելու. սակայն միայն խիտ մացառներում և ծորերի խուլ խոռոչներումն էր փոքր ինչ աչքի ընկնում նրա սրտամաշ գոյութիւնը։

Հազարաւոր կենդանիներ՝ սաես բնաղդմամբ զգալով երկրի թագուհու այդ յաղթութիւնը՝ սկսեցին իրանց ձայներով ողջունել նրան իր տարած յաղթանակը և պատրաստուեցին գործի կպչելու։ Միայն Տրրխցի գեղջուկն էր, որ դեռ չէր համարձակւում իր դռան ճռռոցով մասնակցել բնութեան այդ համերգին. առօրեայ սհաբեկող երկիւղը վաղուց մեռցրել, գերեզման էր տարել նրա մէջ վստահութեան, համարձակութեան զգացմունքը։ Բայց և այնպէս նա էլ էր զարթնել և դեռ իր աղքատիկ անկողնում պարկած՝ զրոյց անում իր թշուառ ամուսնու հետ և այդ օրուայ անելիքի մասին խորհրդածում։ Վերջապէս, նա էլ սկսեց հագնուել և, կժից մի ման ջուր վերցնելով, դուրս եկաւ դուռը, երեսը լուաց, իր հնամաշ չուխի փէշով սրբեց ու, դէպի աղօթարան դառնալով, խաչակնքեց երեսը և իր ամենօրեայ աղօթքը մրմնջաց։ Նա էլ կամաց-կամաց դաշտը դուրս եկաւ իր եզ ու գոմշուկով իր դաշտը հերկելու։

Արևը դուրս եկաւ։ Ամեն ինչ գործի կպաւ։ Տրրխ գիւղը ամբողջապէս ծածկուեց ծուխերի քուլաներով. հայ գեղջկուհին թոնրի կողքին նստած՝ գոգնոցի շարժումներով սկսեց աւելի ևս բորբոքել աթարի կրակը։ Կեանքը ոտքի էր կանգնել ամեն տեղ. միայն մի տան երդիկից ո՛չ ծուխ էր բարձրանում և ոչ դուռը բացւում։ Դռան փարթամ կերտուածքից և բազի մեծութիւնից երևում էր, որ այդ տունը ունեցել է իր փառաւոր անցեալը և գիւղի աչքի ընկնող տներից մէկն է եղել երբեմն։ Սակայն ինչ-ինչ փոթորիկների և անողոք ճակատագրի հարուածից, ըստ երևոյթին, այդ շէնքը զրկուել է իր մի ժամանակ պանծալի դրութիւնից։ Նրա տէրը այժմ մի պառաւ էր մնացել իր մատաղահաս աղջիկ թոռան հետ, որոնք օրուայ այդ պահուն դեռ նոր էին ոտքի կանգնում. նրանց հանդիստը խանգարել էին այդ գիշերը նրանց բարեկամ այցե-

լուները։ Խրճթի վերի մասում երկու հնամաշ անկողնի մէջ իրարից ոչ հեռու դեռ պարկած էին երկու հոգի և, ինչպէս երևում էր, կենդանութեան ոչ մի նշոյլ ցոյց չէին տալիս. երկուսն էլ դեռ նոր էին մտել կեանքի դեռափթիթ այն շրջանը, որը խոստանում է ամեն բան։

Ուշ դիշերին նրանց բերին այդտեղ նրանց խորհրդաւոր ընկերները և իրանք անյայտացան իսկոյն։ Պառկածներից մէկը յանկարծ սկսեց ծանր տնքալ և խրոխրոացնել. տան մատաղահաս աղջիկն իսկոյն մօտ վազեց, քնքշութեամբ ուղղեց նրա գլխատակի բարձը և մնաց նստած գլխավերևը։

Պառկածը ծանր վիրաւորուած էր. նա զառանցանքների աշխարհումն էր գտնւում.—այդ թշուառ... զոհը... իմս է՛է՛... բռնութիւն էք... գործ դնում... տեսնենք, ո՛վ... ո՛վ կը խլի նրան... կրկնում էր նա։ Ապա յանկարծ աչքերը լայն բաց անելով, նա սկսեց նայել իր գլխավերև նստած աղջկան և կարծես ճանաչեց նրան։

—Սօնա՛, այդ դո՞ւ ես, ո՛հ, իմ կեանք, այդ դո՞ւ ես... ինչո՞ւ ենք մենք այստեղ, ո՞ւր է դրօգչի Տրոթլամէն, այդ հրէշը,—ծանր կերպով հարցրեց վիրաւորը։

—Սօնան հրէս կողքիդ պառկած, քնած է. Տրոթլամէն այլ ևս չը կայ, մի՛ մտածի՛ր. ամեն բան լաւ է. իսկ ես Սալվին եմ. ճիշտ է, ես շատ նման եմ քո Սօնային, դու սխալուած չես։ Ձեզ Յարութն է բերել, որին դուք Արթօ էք ասում և որը ինձ ազատեց Ուսօ-բէկից։

—Սա՞լվին... հա՛, հա՛ Արթօն... ա՞խ...։ Հիւանդը լռեց և դարձեալ զառանցանքների մէջ ընկաւ։ Երկու օր էր, ինչ նրանց մի կերպ այդտեղ էին հասցրել։ Դրանք իրանց սիրահարութեամբ գրգռել էին չար մարդկանցը, որոնք և վիրաւորել էին այդ անմեղ սիրահարներին, որոնց Արթօն իր ընկերների հետ Տրրիս էր փախցրել, յոյս ունենալով դեռ կեանք պարգևել նրանց։ Այն եղերական օրից երեք-չորս օր էր անցել, և այդ մի քանի օրուայ մէջ նրանք համարեա ոչինչ չէին կերել։ Խնամողները միայն ստէպ-ստէպ մի քանի կաթիլ կաթ կամ ջուր էին կաթեցնում նրանց պապանձուած շրթունքներին թէ՛

քաղցը, թէ ծարաւը յագեցնելու։ Վիրաւորներից մէկը՝ Վահէն, դարձեալ աչքերը բաց արեց. այս անգամ տան պառաւն էլ մօտ եկաւ ուրախացած և, ձեռքը սիրալիր մօր պէս նրա ճակատին դնելով, հանդիստ կերպով հարցրեց.

—Ի՞նչպէս ես քեզ զգում, Վահէ ջան։

—Ի՞նչպէս... կրկնեց նրա հարցը կցկտուր կերպով Վահէն,—ի՞նչպէս... ինչո՞ւ Սօնան չի զարթնում... ես... ես... օ՜... լաւ եմ... ինձ ոչինչ չի եղել... այժմ ես, ես, օ՜... կը լսեմ Արթօյին. օ՜, ի՜նչ օրի ենք հասել... Ապա գլուխը շուռ տուեց դէպի Սոնան և երկար, շատ երկար նրա դալկացած դէմքին նայեց, յետոյ, կարծես անցեալի դառն պատկերները իրանց եղերական իրողութեան հետ մտաբերեց և, ժողովելով իր բոլոր ոյժերը, վեր ցատկեց դէպի Սօնայի կողմը, բարձր ճչալով,—Սօնա՛, ա՛յ Սօնա՛, վե՛ր, վե՛ր, մեզ այլ ևս ո՞վ կը բաժանի—մենք միասին ենք։ Սակայն իսկոյն և եթ թուլացած վայր ընկաւ. դեռ երեկ գիշեր նրանից ճանապարհին այնքան արիւն էր գնացել, որ համարեա ուժասպառ էր եղել. այժմ էլ ցատկելու ժամանակ վիրակապն արձակուեց և արիւնը դարձեալ հոսել սկսեց վերքից։

Սալվին և իր տատը զգուշութեամբ կապեցին նրա վերքը։ Նրանք անհամբեր Արթօյին էին սպասում, որը, այդ դժբաղդ սիրահարներին նրանց յանձնելով, շտապել էր հէքիմի ետևից իր ընկերների հետ միասին։ Այդ Արթօն մի քանի շաբաթ առաջ ազատել էր Սալվիին քուրդ բէկերի ճանկերից։ Վերքերը ճանապարհին մի կերպ կապել էր նա, ուստի անհրաժեշտ էր հէքիմի օգնութիւն։

Վերջապէս, Արթօն հէքիմի հետ վերադարձաւ։ Տեսնելով պարկածներին, հէքիմը ցնցուեց. մի քանի ամիս էր, ինչ նա բաժանուել էր Վահէից, իր սիրելի ընկերից, և, առանձնանալով այդ կողմերը, պարապում էր իր արհեստով։ Սա, նկատելով Վահէի այդ ողբերգական դրութիւնը, արտասուել սկսեց, ապա մօտ գալով, բռնեց նրա զարկերակը ու գլուխը թափ տուեց։ Արթօյի օգնութեամբ նա վերքը բաց արեց, ուշի ուշով զննեց և դառն հոգոց քաշելով, քթի տակին կրկնեց մի

քանի անգամ.—«արիւն շատ է դնացել. բացի այդ վերքը ինքնրստինքեան շատ վտանգաւոր է».—և նա սկսեց վերքը լուանալ, մաքրել զանազան կեղտոտութիւններից ու կապել։ Միևնոյնը արեց Սօնայի հետ. սակայն սրա մասին բացասական կարծիք յայտնեց—«ես յոյս չունեմ, որ այս թշուառ զոհը նորից կեանք ստանայ, ոտքի կանգնի. ինչ էլ որ լինի, ես պիտի մնամ այստեղ և ամեն կարելին անեմ, գուցէ մի անյայտ ծեռք օգնութեան դայ այս անբաղդ զոհերին։»

Հէքիմը օրական մի քանի անգամ այցելում էր իր բարեկամ հիւանդներին և հարազատ մօր պէս ոչինչ չէր խնայում այդ թշուառներին։ Շնորհիւ նրա տոկուն և խելացի հոգացողութեան, Վահէն օրէցօր սկսեց դէպի լաւը գնալ այնպէս, որ նրան շրջապատողները յաճախ ուրախութեամբ կրկնում էին՝ «յոյս ունինք Վահէին դարձեալ առողջացած տեսնել և նա զոհ չի դնայ տիրող տգէտ պայմաններին»։ Եւ իրօք, ո՞րքան թշուառ զոհեր են դերեզման իջնում տիրող պայմանների շնորհիւ այն մթնոլորտներում, ուր ամեն բան դեռ բարձրիցն է կախուած համարւում, ուր դեռ թագաւորում է «առանց Տիրոջ կամքի ծառի տերևն էլ չի պոկ գալիս»-ի գաղն հասկացողութիւնը։ Եւ դեռ, գուցէ, շատ և շատ տարիներ սահեն երկրիս վրայով, չկարողանալով վախճան պատրաստել այդպիսի կսկծեցուցիչ հեաևանքներ ունեցող հասկացողութիւնների համար։

Սակայն մխիթարական էր Վահէի ներկան, նրա վերքը այժմ վտանգ չէր սպառնում կեանքին. ամենքը համոզուած էին, որ նա շնորհիւ իր հէքիմ ընկերին էր կեանք ստացել։

Այդպէս չեղաւ թշուառ Սօնայի ճակատագիրը. նա սևացաւ այդ անբաղդ աղջկայ համար և իր սև գոյներով դերեզման պատրաստեց նրան։ Հէքիմի ճիգ ու ջանքերը ապարդիւն անցան։ Անհուն կսկծի հարուածի տակ այդ տաքարիւն աղջիկը անխնայ էր գործ դրել դաշոյնի մեխումն, որից ոչ մի միջոց փրկել չը կարողացաւ նրան։ Այո՛, անխնայ էր գործ դրած դաշոյնի հարուածը, և այդպէս անխնայ միայն անկեղծ սիրահարներ վարուել գիտեն. նրանց երևակայութեան մէջ միայն

երկու ծայրեր գոյութիւն ունեն, երկու ծայրեր միայն տեղ բռնած ունին՝ սիրել անսահման սիրով, ատել նողկանքի անհուն դառնութեամբ. ապրել միայն սիրելիի համար, մեռնել դարձեալ միայն նրա համար: Այդպիսիներից էր և Սօնան: Արդէն ութերորդ օրն էր, ինչ հէքիմը Տրրխ գիւղումն էր. այդ օր նա վաղ առաւօտեանից ոտքը չէր հեռացրել Սօնայի մօտից, այլ ամեն կերպ աշխատում էր մեղմել նրա տանջանքները, որոնք հետզհետէ թուլանում էին: Սօնան մեռնում էր. նա վերջին անգամ բաց արեց իր չքնաղ աչքերը, այս ու այն կողմը նայեց, կցկտուր կերպով արտասանեց մի քանի անուններ և գլուխը դնելով Սալվիի ծնկների վրայ, որ նրանից նոյնպէս չէր հեռանում այդ օր, և ցոյց տալով իր գրպանը, խնդրեց միջի թղթի ծրարը Վահէին յանձնել, երբ նա կը վերադառնայ: Հէքիմը նրան համոզել էր, որ Վահէն առողջացել և գնացել է նոր բժիշկ հրաւիրելու. այն ինչ նա նրանց առաջի օրուանից առանձին-առանձին սենեակներում էր պահում:

II

Գէս գիշեր էր: Լուսինը վաղուց անհետացել էր երկնակամարի վրայից: Գիշերային անթափանցելի աղջամուղջը լռելեայն իր թևերի տակն էր առել Մասիսի շրջակայքը: Ամեն ինչ սև ու խաւար էր. ամեն ինչ ծածկուած գիշերային մութ սաւանով: Ոչ մի բան աղատ չէր խաւարի ընդհանուր տիրապետութիւնից: Ամեն արարած, կարծես, աղջամղջի ընդհանուր թագաւորութիւնը աւելի զօրեղացնելու, հզօր դարձնելու համար՝ փակել էր վաղուց իր աչքերը և անտարբեր կերպով մշշում, խռմփացնում էր:

Դուրսը կեանք ասած բան, կարծես, վաղուց անհետացել էր երկրի երեսից. ո՛չ մի շարժում, ո՛չ մի ծայն-ծպտուն չը կար. միայն ստէպ-ստէպ հաղիւ լսւում էին ծառերի սօսափիւնը, խշշոցը, որոնք իրանց տերևների այդ միակերպ ողբերգութեամբ ասես բողոքում էին աղջամղջի անողոք և սրտամաշ տիրապետութեան դէմ:

Հեռու արևելքում մի ինչ որ բան մարուող, հանգչող աստղերի պէս փայլում, կարմիր բոցեր էր արձակում, ապա կորչում, անհետանում էր տիրող խաւարի մէջ։ Դա հանգչող աստղ չէր՝ երկինքը մթին էր տալիս. սև-սև բարակ թուխպերը վաղուց ծածկել էին նրա երեսը, աստղերը չը կային։

Դա Գ. գիւղի բանտի լապտերն էր, որը դրան ցցուած սեան վրայ ամրացրած, այս կողմ այն կողմ արձակելով իր տգեղ լոյսը, ասես կռւում էր գիշերային չար ոգիների հետ և աշխատում պատռել խաւարի դաժան երեսը։

Լռութիւնը թագաւորում էր և բանտի շրջակայքում, որը մերթ ընդհատւում էր գիշերապահի ոտքերի թրմփոցներով, որը բանտի պատի տակին հրացանն ուսին դրած՝ հանդարտ և համաչափ քայլերով երթևեկում էր, աչքերը շուռ-շուռ այս ու այն կէտին ուղղելով, երբեմն էլ փոքր ինչ կանգ առնում, ականջ դնում այս ու այն շշուկին և, բերանը լոյն բաց տնելով, օրօշտում ու նորից շարժում իր քայլերը։

Նրանից ոչ հեռու երևում էր մի սև ահագին զանգուած, որի երկարութեամբ միշտ երթևեկում էր գիշերապահը. դա բանտն էր։ Այստեղ վաղուց արդէն տիրում էր գերեզմանային լռութիւն. կալանաւորներն այս ու այն անկիւնում կուչ եկած, դառը հոգսերի տակ ճնշուած՝ նիրհում էին։ Որը վաղը պիտի կախաղան բարձրանար, որը դատի պիտի կանչուէր, որի դատավճիռը արդէն կարդացուած էր աքսորի, կամ սաժանակիր աշխատանքների ենթարկութեամբ։ Բայց որքա՞ն արդարացի էր այդ. շատերը կրում էին այդ սոսկալի տանջանքները, պատիժները լոկ պատրաստուած վկաների սուտ ցուցմունքներով. շատերը չէին կարողացել ժամանակին տեսնուել սրա-նրա հետ և բերանները իւղել, որ մեղադրական արձանագրութիւնները խիստ և չարադուշակ չը կազմուին։ Ինչևիցէ, նրանք անողոք բաղդի հարուածներին թողած իրանց տուն-տեղը և սիրելիները՝ այսօր հեծում էին բանտի մութ խորշերում։ Այդպէս է մարդկանց ճակատագիրը, որը գիտէ իր անհուն քաղցրութեամբ շոյել մարդկանց և բաղդի դագաթնակէտին հասցնելով ոմանց կորդալ տալ. դիտէ և այդ վիթխարի բարձրու-

թիւնից զլորել ցածը իր զոհերին այն անյատակ վիհը, խորխորատը, ուր թաղաւորում է արցունքների, տանջանքների, լաց ու հեծեծանքի քարանձրա իշխանութիւնը: Իսկ եթէ դրանց վրայ աւելանում են բանտ ու կապանքներ, ուր ազատութիւնը իւրաքանչիւր քայլափոխում սրբապղծւում է, ուր անհատը զրկվում է ամեն մի բարոյական սկզբունք կրող իրաւունքից, այն ժամանակ սև ճակատագրի դաւաճանութեան պատկերը կատարեալ կարելի է համարել...

Բանտե՞ր... ո՞րքան սրտամաշ է այդ անունը. ո՞րքան քարասիրտ է ձեր միջավայր կազմող մթնոլորտը, և ո՞րքան խուլ հառաչանքներ են լսուել ձեր անողոք յարկի տակ: Բանտե՞ր... որքան անմեղ զոհեր էք դուք յաւիտենականութեան գիրկը զրկել և ո՞րքան արցունքների, վիշտ ու տառապանքի սկզբնապատճառ էք դարձել: Դուք ձեր թունալից մթնոլորտում սնուցել էք սկսած սար ու ձոր դողացնող աշխարհակալներից մինչև վերջին հացի փշրանքի կարօտ մուրացկանին: Դուք ձեր զազրելի տանջանքներին ենթարկել էք արդարութեան աւետարան քարոզող պետերին: Քա՞նի-քա՞նի դարեր են սահել յաւիտենականութեան գիրկը, բայց այսօր դուք դարձեալ նոյնն էք: Խաղացե՞լ էք արդեօք դուք ոևէ ուղղիչ դեր մարդկայնութեան ընդհանուր զարգացման և քաղաքակրթութեան պատմութեան էջերում: Եղե՞լ են արդեօք որևէ բարձրման և կուլտուրական սկզբունք տարածող ձեր թողած հետքերը ազգերի և մարդկութեան պատմութեան մէջ:—Ո՛չ, ո՛չ, չեն եղել: Խաբուսիկ է ձեր գոյութիւնը. ծով ու ովկիաններ կը կազմէին ձեր քամած արցունքները. սուգ ու շիւան են ձեր թողած հետքերը: Եւ դուցէ նոյնը մնաք դուք, քանի որ ձեզ չեն փոխարինել որոշ սկզբունք կրող տներ...

Գիշերապահը ինչ որ մի փսփսոց լսեց բանտի լուսամուտից ու այն կողմը առաջ գնաց: Լուսամտից ոչ հեռու նստել էր մի տարիքաւոր կալանաւոր և սաղմոսն առաջը դրած՝ կամացուկ կարդում-աղօթում էր: Նա աչքերը երկինք բարձրացնելով, մրմնջաց.—Տէ՛ր, հան ի բանտէ զանձն իմ, զոհանամ զանուանէ քումմէ... Գիշերապահը նայեց նրան ու վերադար-

ծաւ. առաջին անգամ չէր նա նրան աեսնում այդ դրութեան մէջ։ Ապա կալանաւորը, վերջացնելով իր առօրեայ աղօթքը, յենուեց իր ձեռքի վրայ և սկսեց դուրս նայել լուսամուտից։ Այնտեղ ամեն ինչ մութ ու խաւար էր, ինչպէս իր վիրաւոր սիրտը. ոչինչ չէր երևում, և նա շարունակում էր նայել։ Նա ընկղմուել էր մտատանջութեան մէջ և. իր փառաւոր անցեալն էր մտաբերում ու դառն վշտի տակ արցունքներ թափում։ Նա յիշեց իր հոյակապ պալատները, որոնք մի ժամանակ մայրաքաղաքի զարդն ու պճրանքն էին կազմում. յիշեց, թէ որտեղից այժմ ո՞ւր է հասել. յիշեց, թէ ո՞րքան անդութ է վարուել իր հետ անողոք ճակատագիրը։ Նա աւելի ևս հեռու անցաւ, երբ ինքն այդ մայրաքաղաքի աչքի ընկնող և առաջնակարգ վաճառականների շարքում պատկառելի տեղ ունէր բռնած և միլիոնների հետ էր խաղում։ Յիշեց և դառն հոգոց քաշեց, որ այդ բոլորը կորել են անդառնալի։ Ո՞րպիսի փոփոխութիւն, որպիսի անողոք հարուած... Իսկ այդքան անփոխարինելի կորուստից յետոյ վիճակուած են իրան բանտ ու կապանքներ... Նիւթականի կորուստը նրան այնքան վիշտ չէր պատճառում։ Մի քանի ամսուայ մէջ ինչ-ինչ անյաջող հանգամանքներ միմեանց ետևից զրկեցին նրան իր նիւթական բարձրութիւնից, և նա վերադարձաւ իր հայրենի Բ. քաղաքը, ուր աշխատում էր փոքր ինչ ապահովել իր և ընտանիքի նիւթական դրութիւնը։ Նա շուտով հիմնեց ներկարարի դործարան քաղաքի ծայրում և իրան երջանիկ էր համարում, որ մի կերպ կարողացաւ ապահովել իր դրութիւնը։ Սակայն այստեղ էլ նրան բաղդը հալածեց։ Զուր չէ ասած քրդական առածը թէ՝ «խէր դա բը-ռէզ, շառ դա բը ռէզ... (խէրն էլ իրար ետևից կը դայ, շառն էլ)։ Միևնոյնը կատարուեց և նրա հետ։ Շուտով մայրաքաղաքից վերադարձաւ այդտեղ Տրաթլամէի որդի Վռամը և հօր թողած կտակի համաձայն՝ սկսեց բողոք-բողոքի ետևից տալ պատշաճաւոր իշխանութեան, թէ իր տները շատ հեռու չեն այդ գործարանից, ուստի ներկերի վատ ազդեցութիւնը զանազան հիւանդութիւններ է պատճառում թէ՛ իրան և թէ իր ընտանիքին և օրէնքի համաձայն պահանջում էր քանդել այդ

գործարանը: Իսկ գործարանի տիրոջ բարեկամներն սկսեցին օրինաւոր փաստեր բերել, որ գործարանը գտնուում է որոշ հեռաւորութեան վրայ, այդ պատճառով չի կարող ոչ մի վնաս տալ բողոքատուին: Թէև այս վերջիններիը տարան յաղթանակը. սակայն ամեն տեղ հալածուած այդ հարուստը անչափ վիրաւորուած համարեց իրան, որ զրկուելով ամեն ինչից, այժմ իր հայրենի քաղաքումն էլ մի անկիւն չեն ուզում տալ իրան. այն էլ ո՞վ չէ ուզում.—նա, որը իր շնորհիւն է մտել բարձրագոյն դպրոց, աւարտել և այժմ տղայական կապրիզներով բռնկուած, հալածում է իր մի ժամանակ բարերարին: Ուստի և լցուած վշտի անհուն դառնութեամբ դէպի մարդկանց այդչափ լպիրշ ապերախտութիւնը, որ պարզ տեսաւ Վռամի մէջ և որը այնքան զզուելի ձևով արտայայտուեց իր դէմ, վրճռեց այդ իր հայրենի նուիրական վայրիցն էլ հեռանալ: Այդքան ծանր էր ազդել նրա վրայ ապերախտութեան զգացմունքը, և այդ միայն եղաւ պատճառ, որ նա գլուխն առաւ ու հեռացաւ այդտեղից, աւերելով գործարանը, որը ճիշտ որ ոչ մի վնաս չէր տալիս Վռամին: Թափառելով երկրէ-երկիր, այդ հալածական անբաղդը վերջապէս բնակութիւն հաստատեց մի պղնձհանքի շրջակայքում, Գ... գիւղի մէջ, ձեռք բերելով այդ պղնձհանքի կառավարչի պաշտօնը, ուր և մնաց մինչև եկաւ մի այլ ծախորդութիւն լցնելու նրա անբաղդութեան բաժակը, և նա կորանաւորուեց ու նետուեց Գ... գիւղի բանտը, ուր և ամեն դիշեր արտասուքի հետ լսում էր նրա աղօթքը.—Տէր, հան՛ի բանտէ... Իբրև պղնձհանքի կառավարիչ, նա պատասխանատու էր այնտեղ պատահելիք ամեն ինչի: Մի օր պղնձհանքի գործարանից գողացել էին մի պատկառելի գումար: Կասկածը ծանրացաւ մի տաճկահայ բանուորի վրայ, և նա առանց քննութեան պղնձհանքի բանտը նետուեց, ուր և յուսահատութեան միջոցին, թէ ինչից զրգռուած՝ խեղդամահ եղաւ, թէ խեղդամահ արին նրան: Այդ բանը մութը մնաց. ուստի կառավարութիւնը, տեսնելով այդտեղ օրէնքի խախտում և ինքնահաճ վարմունք այլոց կեանքի դէմ, յանցաւոր ճանաչեց կառավարչին և բանտարկեց նրան:

—Ո՛հ, իմ այս անբաղդութեան պատճառը Վռամը եղաւ, —կրկնում էր յաճախ դժբաղդ կալանաւորը,—եթէ նա չը յուսահատեցնէր ինձ, ես ընդ միշտ հաստատուած կը լինէի իմ հայրենի քաղաքում, ուր և գնացի մինչև կեանքիս վերջին օրերը ապրելու. բայց նա, այն իժի ծնունդը, մոռացաւ ամեն բան, մոռացաւ այն ամեն բարիքը, որոնց ես չը խնայեցի նրան և իր հօրը, և իր ապերախտ վարվեցողութեամբ հեռացրեց ինձ իմ սիրած վայրերից և այստեղ հասցրեց։ Նա իր անզգամ հօր կրտակն է կատարում. իժից իժ է ծնուելու։ Անողորմ Բրուտոս, դու յանդգնեցիր ձեռք բարձրացնել քո բարերարի վրայ։ Մի՞թէ մոռացար, երբ տրեխները հագիդ, խաչագող հօրդ փէշերից բռնած՝ մի առաւօտ հօրդ խաչագողութեան սայլակով իմ դռանը կանգնեցիք։ Ես պատսպարեցի ձեզ, ձեզ հետ եղած յանձնարարական նամակին ոյժ տուեցի իմ անթիւ բարեկամների միջոցով, առանց որոց այդ նամակը ո՞վ գիտէ ինչի հարկաւոր լինէր։ Այո՛, ես այստեղ ընկայ, այնտեղ զարնուեցի և յանուն վեհ զգացմունքի, վեհ գաղափարի քեզ բարձրագոյն դպրոցի հիմնարկութեան մէջ սան դարձրի, հովանաւորեցի, որ ապագայում քո լրբութեան անարգ դաւազանը իմ վրայ փորձե՞ս. քեզ նետ դարձրեցի, որ քո սլաքները դէպի սիրտս ուղղէ՞իր, հա՞։ Անաստուած։ արդեօք ի՞նչ է լինելու քո վերջը...

Մինչ սա այսպէս մտածում էր, յանկարծ գիւղից ոչ հեռու ճանապարհի վրայ երևացին մի խումբ ձիաւորներ։ Խմբի առաջից հանգարտ գնում էր նրա հրամանատարը։ Ահա՛, նրանք հասան գիւղի այգիներին և խմբապետի հրամանի համաձայն վայր իջան ձիերից և անյայտացան այգիներում տիրող խաւարի մէջ։ Քիչ յետոյ այնտեղից դուրս եկաւ մի կարճահասակ մարդ իր երեք ընկերների հետ և բոլորը միասին ուղևորուեցին դէպի Գ... գիւղի բանտը։

—Տղերքը չեն քնել, մի՛ վախէ՛ք, ես նրանց խստիւ պատուիրեցի զգոյշ լինել և մեզ սպասել ու ձիերին լաւ կրշտացնել, որ կարողանանք մինչ առաւօտ բաւականին ճանապարհ կտրել. իմ թառլանս չի խրխնջալ. ես նրան լաւ եմ պատուիրել։ Եթէ նա լուռ մնայ, բոլոր միւս ձիերը կը հե-

տեսին նրա օրինակին, առաջին անգամ չէ այս,—փսփսում էր իր ընկերներին կարճահասակը։

Վերջապէս, նրանք մօտեցան բանտին և կանգ առին։ Կարճահասակը մօտեցաւ գիշերապահին և ինչոր հասկացրեց նրան։ Գիշերապահը սկզբում գլուխը բացասական շարժեց, բայց երբ նրա կարճահասակ խօսակիցը բաց արեց իր համոզեցուցիչ լեզուն և ցոյց տուեց նրան իր ձեռքում եղած թղթադրամները, նա մեղմացաւ և համաձայնուեց նրա հետ։ Շուտով գիշերապահի թոյլտուութեամբ կարճահասակը մօտեցաւ բանտի լուսամուտին և թրխկացրեց, իսկ նրա ընկերները բարձրացան բանտի տանիքը։

Կալանաւորը գլուխը բարձրացրեց և ճնաց տեղն ու տեղը սառած՝ իրանից փոքր ինչ հեռու կանգնած էր Արթօն, որը հազիւ լսելի ձայնով փսփսալ սկսեց նրա հետ։

—Թորոս-բիձա, մի՛ մտածի՛ր, ես եմ. այսօր դու ազատուած կը լինես. քո լուսամուտի վերև այժմ մի ծակ կը բացուի. բարձրացի՛ր լուսամուտդ և ձեռդ մեկնի՛ր դէպի այդ ծակը. այնտեղից քեզ դուրս կը հանեն և դու բարեկամներիդ շրջանում կը լինես. զգոյշ։

Կալանաւորը Գ... գիւղում ապրող Թորոս-բիձան էր, որի տանը իւրաքանչիւր տարի սահմանից անցնելիս, կամ այնտեղից գալիս ապաստան էին գտնում զանազան անցորդներ։ Ինչպէս տեսաք, նա ընկնելով իր նիւթական բարձրութիւնից, մայրաքաղաքից վերադարձաւ Բ... քաղաքը, իր հայրենիքը, սակայն Վռամի կապրիզներին չը կարողանալով դիմանալ, հեռացաւ այնտեղից և ապրում էր այդ գիւղում, կատարելով պղընձահանքի կառավարչի պաշտօն, որի պաշտօնակատարութեան ընթացքում և բանտարկուեց։

Շուտով Թորոս-բիձայի գլխիվերև ճիշտ որ առաստաղը ծակուեց, և սա ուրախացած իր ձեռքը մեկնեց դէպի այդ ծակը։ Մի երկու րոպէ ևս, նա արդէն տանիքումն էր։ Անծանօթները առաջնորդեցին նրան և Արթօյի հետ կորան խաւարի մէջ։

Մի ժամից յետոյ լսուեց գիշերապահի հրացանի պայթիւ-

ՆԸ և հարաշ տալը թէ՝ կալանաւորներից մարդ փախաւ։ Սկսուեց մի չտեսնուած իրարանցում բանտի մէջ, բայց ի՛նչ. գիշերապահը Արթօյի ցոյց տուած ժամանակին էր հարաշ տուել. ուստի վերջինս արդէն բաւականին ճանապարհ էր կարել, այնպէս, որ այլևս երկիւղ չէր սպառնում նրանց։ Անընդհատ արշաւելով, Արթօն երկու օրից յետոյ Թորոս-բիծայի հետ արդէր Տրրխ գիւղումն էր, ուր էին Սօնան և Վահէն անյուսալի վիրաւոր դրութեան մէջ։

—Ո՛հ, ի՞նչ լաւ բան կը լինէր, եթէ սրան էլ փրկել կարողանայի,—կրկնում էր հէքիմը, նայելով Սօնայի թուլացած դէմքին։

—Գուցէ բարին այս է, հէքիմ, չիք չարիք առանց բարեաց,—նկատեց նրան Թորոս-բիծան,—գուցէ դրա մահն է բարի. է՛հ, ի՞նչ կարող ենք անել։

—Ո՛չ, ես ցաւում եմ հոգոյս ամեն էութեամբ, որ այսպիսի սնկեղծ սրտի տէր անհատներ շատ սակաւ թիւ են կազմում մեր դժբաղդ միջավայրում։

—Ճիշտ է։

—Խեղդել զաւակների, մարդկանց զգացմունքները, դա ծնողների գործ չէ, այլ հրէշների. սակայն, տարաբաղդաբար, այնպիսի հրէշներով տակաւին վխթում են մեր խաղաղ խրրհիթները։

—Աւօյին, ա՜յ, հիմի պիտի էստեղ քաշ տայ, որ տեսնի իր աղջկան և հասկանայ թէ՝ ի՛նչ է եղել իր արածը։

—Մի՞թէ կարծում էք, որ նա կը խղճահարուի։ Քանի-քանի այսպիսի օրինակներ են տեղի ունեցել. բայց մեր ծնողդաղանները գրեթէ սթափուելու նշաններ անգամ չեն արել։ Դեռ մի տարի չի անցել, ինչ մեր գիւղի Տանծոտենց Կարօյի աղջիկ, Սանդուխտը, ծգուեց իրանց ջրհորը և այնտեղ էլ իր մահը գտաւ, որովհետև հայրը նշանեց նրան առանց հարցնելու աղջկայ կամքը։ Երկու տարի չի անցել, ինչ Զ... գիւղացի Բոստանչոնց Մակին պարանով խեղդամահ եղաւ, որովհետև հայրը պսակում էր նրան հասակն առած մի այրի վաշխառուի հետ։ Դեռ չեմ ասում Թոփանչոնց Ծովելի, Կրճիենց Զարդարի, Զի-

թանցոց Անուշի, Գիւլօինց Փիւլի, Մուզսոնց Համասի մահը, որոնք միայն մեր գիւղումն են տեղի ունեցել այս քանի տարուայ մէջ և որոնց դիակները հաղիւ-հաղ են գտել մեր լճի միջից։ Բայց քանի-քանի այսպիսի գիւղեր կան, որոնց մասին մենք տեղեկութիւն անգամ չունենք։

—Էդ թուածդ զոհերի մասին ոչինչ չը գիտեմ. բայց այս թշուառ աղջկայ կորստեան պատճառը, գրեթէ, ամբողջովին Տրաթլամէն է եղել. եթէ նա խելքահան չանէր Աւօյին, նա դժուար թէ էդքան անսիրտ զտնուէր դէպի իր աղջիկը։ Դեռ սա մեռնում է, ազատւում է էս վերան աշխարհի դարդերից. իսկ ի՞նչ անեն նրա այն անթիւ զոհերը, որոնք մինչև իրանց կեանքի վերջը պիտի հեծեն խեղճութեան տանջանքների բովում։ Դրանցից, այդ անմեղ զոհերից, մէկն էլ ես եմ. ի՞նչ անեմ ես. ի՞նչ անէ իմ անբաղդ ընտանիքը. ի՞նչ անէ վիրաւոր Վահէն, որը սրա մահից յետոյ, չը դիտեմ, ի՞նչպէս պիտի կենդանի մնայ, եթէ կենդանի էլ մնայ, մի՞թէ կենդանութիւն կարելի կը լինի անուանել այն՝ այս անգնահատելի կորուստից յետոյ...

Սօնան մի քանի ջղաձգական շարժումներ գործեց. ապա ժանր-ժանր խռխռալ սկսեց. նա իր այդ ցնցումներով վերջին հրաժեշտն էր տալիս կեանքին։

—Ո՜վ, Վահէ, բուռն զգացմունքով ցանկանում էի քեզ խաչաղբեր լինել. սակայն ճակատագիրը այլ կերպ տնօրինեց քո ապագան։ Վաղը թերևս քո Սօնայիդ հետ դերեզման ուղարկեմ քո կեանքը, քո սիրտն ու հոգին։ Ինչու այդ դերը ինձ վիճակուեց,—կրկնում էր հէքիմը։

III

Վէսօրուայ տօթը վաղուց էր մեղմացել։ Երեկոյ էր. արևը արագ-արագ մօտենում էր հորիզոնին, իր ետևից թողնելով անթիւ ու անհամար ստուերներ։ Իւրաքանչիւր առարկայ աշխատում էր՝ իր ստուերով որքան կարելի է աւելի ևս ծգուել երկրի վրայ։ Բացառութիւն էին կազմում և Տրրխ գիւղի դերեզ-

մանոցի հաղարաւոր դամբարանաքարերը, որոնք իրանց սև-սև ստուերներով դաժան կերպարանք էին տալիս գերեզմանոցին և աւելի ևս սոսկում, ահ ու դող տարածում մարդու վրայ։ Զարմանալի է հայի ազգային յատկութիւնը՝ ինչպէս և լինի ծածկել իր սիրելիների շիրիմները յաճախ վիթխարի ժայռերով, եթէ նիւթականը չէ ներում նրան սեպաձև քարեր ձեռք բերելու։ Գերեզմանոցում միայն մի շիրիմ էր երևում առանց տապանաքարի։ Շիրիմը նոր էր, որը պարզ աչքի էր ընկնում նրա թարմ հողից։ Դա, ընթերցող, Սօնայի շիրիմն էր։ Այդ թշուառ զոհը մի քանի օր մաշուելով տանջանքների բովում, վերջապէս փոխուեց յաւիտենականութեան գիրկը և իր թարմ հողաթմբով հեռուից աչքի էր ընկնում այդ գերեզմանոցում։

Գերեզմաններ... ո՞վ չէ արտասուոր ահաբեկող երկիւղ զգում իր երակներում, ակամայ զանազան ցնցումների ենթակայ լինում, երբ տեսնում է ձեզ և շրջում է ձեր մէջը։ Ո՞ր իրան անմահ կարծեցող անհատ, ձեր շուրջը դտնուելով, չի հնազանդում բնութեան ընդհանուր օրէնքին և ակամայ աչքերը երկինք դարձնում, իր ոչնչութիւնն զգում և ինքնիրան մրմնջում՝ «ունայնութիւն ունայնութեանց, ամենայն ինչ ընդ ունայն է»։ և իրան էլ մահկանացուների թուում հաշուում։ Ո՛հ, դառն են ձեր թողած տպաւորութիւնները, ծանր է և մաշող ձեր ներկայութիւնը։ Քանի-քանի սիրեցեալ սրտեր էք դուք բաժանել իրարից՝ բուռն փափագը անկատար թողնելով նրանց սրտերում։ Քանի-քանի վեհ դաղափարներով տոգորուած սրտեր էք կուլ տուել, որոնք, դուցէ, և ընդ միշտ կորել են մարդկութեան համար։ Որչա՜փ անյաղթ հսկաներ են լուռ ու մունջ ձեր հասցրած խոցերից ձեր գիրկը մտել և կորել յաւիտենական ովկիանոսում։

Անողոք և կսկծեցուցիչ են եղել ձեր տուած հարուածները... Դուք քամել էք և քամում էք վշտի արտասուքներ սկսած զառամեալ ծերերի աչքերից մինչև վերջին թոթովախօս մանուկի աչքերը։ Սակայն և ո՞րքան սթափուեցուցիչ դեր էք խաղացել և պիտի խաղաք անհատի և մարդկութեան

վրայ։ Գերեզմաննե՞ր... որքա՞ն շատ բան էք դուք մեզ ասում։ Սրտերի, զգացմունքի ծովեր կը կազմէիք դուք, եթէ գէթ մի օր ձեր տարած այդ զոհերը կարողանային դուրս պրծնել ձեր սպանիչ կապանքներից։ Դառն է, դառը ձեր լռութիւնը... Դուք ձեր լռութեամբ հազարաւոր պերճախօս լեզուներից լաւ ապացոյց էք տալիս ձեր ինչ լինելու, ձեր էութեան մասին...

Օրուայ այդ պահուն գերեզմանոցում միակ մի մարդ էր երևում։ Տեսնողը անշուշտ կը կարծէր, որ դա մահուան ճիրաններից փախուստ տուած բաղդաւոր մահկանացու է։ Նրա դէմքը վշտից, լաց ու կսկծից, սուգ ու շիւանից թոշոմած մի բան էր ներկայացնում իր աննկարագրելի այլայլութեամբ։ Նա դունատ էր և մաշուած։ Նա յուսահատուած էր և լուռ։ Նրա ներքին աշխարհը այդ ժամին հազարաւոր փոթորիկներից երերուած ծովի նման ծփում էր յուզմունքի ալիքների տարափի տակ և ոչ մի տեղ հանգիստ չէր կարողանում առնել։ Ստէպ ստէպ նրա կրծքի խորքերից լսւում էին խուլ հառաչանքների ձայներ, որը ասես ընդհատւում էր շնչարգելութեամբ։ Նա այնքան էր ընկղմուած վշտի ինքնամոռացութեան մէջ, որ ուշադրութիւն անգամ չէր դարձնում իրան շրջապատող հազարաւոր շիրիմների վրայ. ըստ երևութին նա վաղուց, շատ վաղուց ծանօթ էր լռութեան այդ աշխարհի հետ և առաջին անգամ չէր, որ շրջում էր գերեզմանոցում։

Նա կամաց-կամաց մօտեցաւ Սօնայի գերեզմանին և յանկարծ միանգամից իր ահեղ ձայնով թնդացրեց տիրող լռութիւնը, ասես մի ահագին գետ արգելուած լինէր երկրի խորքերում, որը ներքին մի ոյժի բռնկումով քանդում է իր արգելքները և ձայների, խշշոցների, գոռոցների ահագին տարափով դուրս է վազում, այդպէս և նրա հոնգորոցի շիւանի հետ արտասուքը հեղեղի նման սկսեց վազել նրա աչքերից և նա ծունկ չոքեց այդ գերեզմանի առաջ ու անհամար համբոյրներով ծածկեց անբաղդ զոհի շիրիմը։ Երկար նա գրլուխը խոնարհած հողակոյտի վրայ մնաց ընկած. բայց յանկարծ մի ինչ որ բան յիշեց և իսկոյն ուղղուեց, ձեռքը գրպանը տարաւ և այդտեղից դուրս բերեց այն թղթի ծրարը,

որը Սօնան հոգեվարքի բոպէներին կտակել էր Սալվիին՝ յանձնել Վահէին։ Դա ոչ այլ ինչ էր, եթէ ոչ մի նամակ։ Նա բաց արեց և կարդաց մի քանի անգամ։

Ընդ միշտ իմ՝ Վահէ.

Այս նամակս ես միշտ գրպանումս եմ պահելիս եղել իմ նշանադրութեան հէնց առաջին օրից։ Հաւատացած եմ մեռնում, որ ինձանից յետոյ քո օրը՝ օր չի լինի, և քո կեանքը՝ կեանք չի լինի։ Բայց խնդրում եմ ոյժ ունենաս գէթ՝ եթէ ոչ սէր, գոնէ մի մխիթարութիւն ձեռք բերես քեզ համար, որով և մասամբ կը մեղմես դառն օրերիդ տանջանքները։ Մի՛ յուսահատուի՛ր, մի՛ վշտանա՛ր, իմ անսահման անկեղծ սէրը և ես կը լինենք քեզ միշտ պահապան։

Քո Սօնա։

«Գէթ սէր, մի մխիթարութիւն ձեռք բերես...», մրմնջաց այդ հոգեպէս դժբաղդ հիւանդը, որը, չեմ կասկածում, ընթերցող, հասկացաք, որ Վահէն էր։

Այդ թշուառ երիտասարդը չը մեռաւ. բժիշկը կարողացաւ զանազան դժուարութիւնների, բարդութիւնների առաջն առնել, որի շնորհիւ, համարեա, նոր կեանք ստացաւ նա.—Քեզանից յետոյ, իմ վաղամեռիկ Սօնա ջան, ինձ ի՞նչ մխիթարութիւն կայ. ի՞նչ սէր կարող է բուն դնել իմ վիրաւոր սրտում, որ ես կարողանամ մեղմել թունալի օրերս»,—կրկնում էր Վահէն,—ո՛չ, ո՛չ, չկայ այս աշխարհումը ինձ մխիթարութիւն. չկայ այս վերան երկրում ինձ համար մի այլ սէր, բացի քո սիրուց. բայց դու, իմ հոգեակս, ո՞ւր ես, ո՞ւր... Վերջին բառերն արտասանելիս, նա, համարեա, թուլացած ընկաւ Սօնայի գերեզմանի վրայ։ Նա ոչ մեռած էր, ոչ կենդանի. ընկած էր ցնորքների, երազների աշխարհում։ Նրան թւում էր, որ իրանից ոչ հեռու երևում է մի սև ամպ, որը հետզհետէ ցածրանալով սև մշուշով ծածկում շրջակայքը։ Այս մշուշի միջից Վահէն պարզ տեսնում էր ամեն բան. նրանից ոչ հեռու երևում էր վայելչագեղ հասակով և գեղազան դէմքով մի

համեստագոյն կոյս, որը գաղտագնաց քայլերով դէպի իրան էր գալիս։ Վշտաբեկ երիտասարդը չը կարողացաւ որոշակի ճանաչել՝ Սօնան էր այդ, թէ մի ուրիշը, նրան նմանակից։ Վէ՛ր բարձրացաւ ընկած տեղից և ուզում էր դէպի նրան ընթանալ. բայց աւա՜ղ, որտեղից որ էր դղրդաց ամբողջ մթնոլորդը, աղջամուղջը պատեց շրջակայքը և ահաբեկող որոտումները, գոռում-գոչումը, քամիների սուլոցը վայր գլորեցին թէ իրան և թէ հրաշագեղ կոյսին։ Վահէն ուշաթափուեց. երբ ուշքի եկաւ, զարմանքից թէ կսկծից մնաց տեղն ու տեղը քարացած. վայելչակազմ այդ կոյսը վիրաւորուած և անգամահատուած ընկած էր գետնի վրայ զանազան տեղերում։ Նրա վրայ ընկած էին զանազան թշնամիներ և խելակորոյսի նման չը գիտէին՝ ինչպէս յագուրդ տային իրանց տուփանքին։

Վահէն զզուեց այդ անախորժ տեսարանից և պատրաստուեց հեռանալ. սակայն յանկարծ կոյսի յօշոտուած մարմնի իւրաքանչիւր մասից այնպիսի սուր ճիչ լսեց, որ ամբողջ մարմնով դողաց ու փշաքաղուեց։

—Ո՞ւր, ո՞ւր ես հեռանում, ո՛վ երիտասարդ,—ծայն էին տալիս նրան կո՛յսի մարմնի անդամները,—ես դեռ չեմ մեռած. երակներումս տակաւին կենդանութեան կայծեր կան։ Շատերը եկան և ինձ այսպէս վիրաւոր տեսնելով, դլխակոր փախուստ տուին. դրանցից ամեն մէկը զուրկ էր անձնազոհութեան ընդունակութիւնից. ամեն մէկը որևէ անձնական հաշիւներով էր զբաղուած։ Դու էլ եկար և այսքանը տեսնելուց յետոյ, պատրաստուում ես հեռանալ. դու ես մնացել իմ վերջին յոյսն ու ապաւէն. դու ես օժտուած ուսման—քաղաքակրթութեան պաշարով, սակայն դու էլ տակաւին քո Սօնայովդ ես զբաղուած։ Թո՛ղ, թո՛ղ աղաչում եմ. ես հազարաւոր Սօնաներ եմ տեսել, հազարաւոր ընկածի օգնութեան հասել. բայց, տարաբաղդաբար, այսօր ոչ ոք ինձ մօտ չի գալիս։ Ինչո՞ւ ես զարմանում, միթէ՞ չը գիտես թոյլին, ընկածին, անարգուածին օգնութեան հասնել, ոտքի կանգնացնել մեծ առաքինութիւն է և վիրաւոր սրտի համար մխիթարութիւն ու սփոփանք։

Ինչո՞ւ ես զմայլուած և ինձ դիտում. միթէ՞ կարծում ես Սօնայիդ սէրից բարձր սէր չը կայ. միթէ՞ հաւատացած ես որ բացի Սօնայիդ քեզ մի այլ մխիթարութիւն չը կայ։ Կայ. բայց դու տակաւին չես ըմբռնած. զգաստացի՛ր և քեզ նուիրի՛ր այլոց օգնութեան, ընկածի, անարգուածի փրկութեան և դու մխիթարուած կը լինես ու բաղդաւոր։ Հինգ-վեց տարի տոկունութիւն ունեցար չը տեսնուել Սօնայիդ հետ և նուիրուել թոյլի, անարգուածի բաղդաւորութեան, այժմ էլ հաւատացած եղի՛ր, որ այն սէրը դարձեալ կը ղեկավարի քեզ և աւելի ևս երջանիկ կը լինես..... Ցիշի՛ր տուածդ երդումը, ուխտը, երբ դեռ նոր աւարտած տուն էիր վերադառնում.....

Վահէն ոգևորուեց և վազեց դէպի նա. բայց իսկոյն կանգնեց, որովհետև նրան վայրկենաբար շրջապատեցին սուիններով զինուած սպաներ, որոնք դէպի նա ուղղեցին իրանց սուիների ծայրերը։ Թշուառ երիտասարդը մնաց շուարած, բայց այդ ժամին նա դարձեալ լսեց վիրաւոր կոյսի հառաչանքի ձայնը։

— Անմտութիւն է, Վահէ, քո գործածը. սրանցից իւրաքանչիւրը ունի իր թիկնապահները, որոնք մահի և կեանքի դիմադրութիւն ցոյց կը տան քեզ, եթէ դու ձեռնունայն մարտնչելու լինես։ Վերադարձի՛ր, զինուի՛ր նման զէնքերով, ապա շտապի՛ր այստեղ։ Օրինակելի է իմ անդամների յատկութիւնը. նրանք գիտեն իմ նախկին գեղեցկութիւնը ինձ վերադարձնել։

Վահէն զորթնեց։ Մութը նոր էր սկսել և կամաց-կամաց տարածուել։ Նա մնաց զարմացած թէ՝ այդ ինչ երազ էր. յիշեց իր անցեալը, իր տուած ուխտը և տխրութեամբ լուեց. նա սթափուած էր։ Մինչ սա այս պրութեան մէջ էր գտնուում, նրան մօտեցան հէքիմը Արթօյի, Թորոս-Բիծայի և Սալվիի հետ, որոնք և միմիանց եաւիից սկսեցին մխիթարել նրան։ Սրանք բոլորն եկել էին Սօնայի գերեզմանը համբուրելու, որովհետև միւս օրը ճանապարհ էին գնալու, թողնելով Սալվիի տատին և Վահէին Տրխ գիւղում։

ԼԵՒՈՆ ԽԱՆԶԱԴԷ

(Կը շարունակուի)

ՏԷՐ-ԳԱԲՐԻԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆՑԸ[1]

Գլուխ Ը.

Խալիբի քաղաքագլխութեան առաջին եռամեակին դալիս է Նախիջևան յայտնի Սկթունեան Մանուէլ վարդապետ Գիւմուշխանցին, որ իբր թէ Ներսէսի վիճակից փախչելով, գնում էր այդ ժամանակները Ս. Էջմիածին. նա հասնում է Զատկի հրազալուցին, կէս գիշերից անց, առաւօտեան դէմ, և ուղղակի գնում է եկեղեցի և հրամայում առաւօտեան ժամն սկսել, այնպէս որ երբ Տէր-Գաբրիէլը, որ սխառին պատարագիչ պիտի լինէր, դալիս է ժամ, տեսնում է, որ արդէն գիշերային ժամն սկսել են և երգում են «Տէր, զի բազում»-ը և որ դասում մի վեղարաւոր կայ կանգնած, որ հրամայել է այդպէս վաղ սկսել ժամերգութիւնը և ասել է, թէ ինքը պիտի լինի պատարագիչ: Նա խոնարհութեամբ մօտենում է վարդապետին և ողջունում է, իսկ նա սկսում է յանդիմանել ու նախատինք թափել նորա գլխին և, ի միջի այլոց, կոչում է նորան «չարագրգիռ խանգարիչ ազգի՝ դև Գաբրիէլ»: Տէր-Գաբրիէլը չի դժկամակում, չի վրդովուում, այլ միշտ քաղցրութեամբ է պատասխանում, որովհետև հասկանում է նորա հոգու որպիսութիւնը, հասկանում է, որ նա նոյնպէս մոլորուած ու սխալուած է, ինչպէս շատերը, որոնք կարծում էին, որ նա Նախիջևանում

---

[1]) «Լումայ» Բ.

իսկապէս պատկերն է Ներսէսի և յօժարութեամբ է կատարում նորա բոլոր հրամանները։

Այս Մանուէլ վարդապետը քանի որ Գրիգորուպոլում գործել էր Ներսէսի ծրագրով, հաճոյ էր եղել նորան, բայց երբ սկսել էր հակառակ գնալ, իսկոյն և էթ նա գրել էր Ս. Էջմիածնից Յովհաննէս Գառնակերեանին, որ նա փոխադրէ նորան Ղրիմ, իսկ նորա տեղ Գրիգորուպոլում կարգէ Գրիգոր Խուդաբաշեանին աթոռակալ։ Այդ եղել էր Պատկանեանցի Հաշտարխանում կոնսիստորի ատենադպիր եղած ժամանակը։ Յովհաննէս սրբազանը հրամայել էր, որ մի խիստ հրաման գրուի Մանուէլին դուրս գալու Գրիգորուպոլից և երթալու Ղրիմ, իսկ Խուդաբաշեանին նորա տեղը կառավարելու աթոռակալ անունով։ Տէր-Գաբրիէլը այն ժամանակ գործ էր դրել մի «խարդախ հնարիմացութիւն». նա գրել էր երկու հրաման, բայց Խուդաբաշեանի հրամանի մէջ դրել էր մի կատր թուղթ, որի վերայ գրել էր, թէ այս հրամանը սխալմամբ ձեր սրբութեան ձեռքը կը հասնի, և կնքել ու, իբրև թէ սխալմամբ, հասցէները փոխել էր, այնպէս որ վարդապետի հրամանը պիտի ստանար Խուդաբաշեանը, իսկ Խուդաբաշեանինը—վարդապետը։ Մանուէլ վարդապետը հասկանալով Պատկանեանի միտքը, այն ժամանակ մի շնորհակալութիւն էր գրել Սերովբէ վարժապետին և տիրացու Գաբրիէլին և մի կծու նամակ էլ Յովհաննէս սրբազանին, որի մէջ նորա քիթը մի լաւ քորելուց յետոյ, գրել էր, թէ ինքը Գրիգորուպոլը ստացել է իբրև վարձատրութիւն, որովհետև Ներսէսի հետ միասին Դանիէլին էր յանձնել կաթողիկոսական գահը, կորզելով Դաւթի ձեռքից, և Ռուսաստանի առաջնորդութիւնը տուել էր Եփրեմին, հանելով այն Գրիգորի ձեռքից։

Գիւմուշխանցու Նախիջևանից մեկնելուց յետոյ, գալիս է Մոսկովից Միքայէլ Սալլանթեանը և իջևանում է իւր աշակերտ Դաւիթ Օդաբաշեանի տանը. նա թէև թշնամի էր Տէր-Գաբրիէլին և բարեկամ Խալիբին, որի հետ ծանօթացել էր Մոսկովում, բայց շատ է խօսում ու դատապարտում այն ատելութիւնը, որ կար Խալիբի ու նորա համախոհների մէջ Պատ-

կանեանցի դէմ։ Սալլանթեանի թշնամութիւնը դէպի Տէր-Գաբրիէլը սկսուել էր Հաշտարխանում 1817 թուին, երբ նա դեռ Լիբանանցի Յովակիմ վարդապետ անունով նոր միայն եկել էր Հաշտարխան և բնակուել կապուչինների վանքում իբրև հովիւ և քահանայ հռոմէադաւան հայերի, որ ժամանակ այնտեղ էր գտնուում Երուսաղէմի նուիրակ պօլսեցի Կարապետ վարդապետը, որ յետոյ ծեռնադրուեց եպիսկոպոս Եփրեմից և եղաւ պատրիարք Ադրիանապօլսեցի Պողոսից յետոյ, և Սերովբէ վարդապետ Կարնեցին, որ եկել էր Ս. Էջմիածնից և գնում էր Մոսկով Լազարեան ճեմարանի հայոց լեզուի ուսուցչի պաշտօնով։ Հաշտարխանի այդ հայ կաթոլիկները, որոնք Կղեմէս Գալանոսի և նորա ժամանակակից մարդադող որսորդների ջանքով դարձած էին, և «Ողջոյն քեզ, Մարիամ», ասելով և մի ծնգան վերայ կաղալով ու ստէպ Յիսուս և Մարիամ կրկնելով, կարծում էին, թէ արդէն իսկ ֆրանկ եղան, վերջացան, դոքա չեն հաւանում Յովակիմ վարդապետին, որովհետև դա պատարագի խորհուրդը խատարում էր հայոց լեզուով և ոչ լատինէրէն, ինչպէս նորանից առաջ կատարում էին լեհացի կսեօնզները, որից և՛ ինքեանք, և՛ ժողովուրդը բան չէին հասկանում։ Այդ այն ժամանակն էր, երբ դեռ նոր էր բացուել Հոգևոր վարժարանը և 15 տարեկան Պատկանեանցը կարդուել էր վարժապետ և ուսուցանում էր և՛ քերական, և՛ քերականութիւն և միևնոյն ընդարձակ դահլիճում։

Հայադաւան երիտասարդներից ոմանք սկսել էին յաճախել Յովակիմ վարդապետի խուցը, որոնց միջնորդութեամբ ծանօթացել էր նորա հետ և Պատկանեանցը։ Սալլանթեանը լսելով նորա գիտութեան մասին պատուիրել էր երիտասարդներին բերել նորա գրուածներից մի պատառ բան, սոքա էլ այդ մասին ասել էին Գաբրիէլին։ և նա տուել էր նոցա տանելու իւր ռուս լեզուից թարգմանած Դիոդորոս Սիկիլլացու մատենադարան կոչուած հնախօսութիւնից «Ալէքսանդր Մակեդոնացու արկածները» և խնդրել էր, որ եթէ վարդապետը մի սխալ գտնէ լեզուի դէմ, նշանակէ ծեռագրի վերայ։ Գաբրիէլը թարգմանութեան կցել էր մի վերջաբան, որ սկսուում էր՝ «Փառք

երկրավարութեան» խօսքերով։ Սալլանթեանն ասել էր, որ չը-պէտք է ասել երկրավարութիւն, այլ «աշխարհավարութիւն», և այլն։ Շուտով Պատկանեանցը և անձամբ տեսնուել ու ծանօթացել էր Սալլանթեանի հետ. նա նորան հրաւիրել էր իւրեանց տունը, ուր եկել էին Սերովբէ Կարնեցին և Կարապետ վարդապետը և մինչև լոյս ուրախութիւն էին արել։ Սորանից յետոյ շուտով սառնութիւն է ընկել Կարապետ վարդապետի և Սալլանթեանի մէջ և դորա պատճառն եղել էր վերոյիշեալ երիտասարդներից մէկը—Յովհաննէս Շամքորեանցը, որ տարածել էր, թէ Սալլանթեանը ասել է, թէ Կարապետ վարդապետի գիտութիւնը մի կատուի բեռ կ'լինի, և լատինների եկեղեցում քարոզել է հայոց եկեղեցու և նորա կարգաւորների դէմ և ասել է, թէ հայոց եկեղեցում հոգու փրկութիւն չկայ, և այլն։

Մի օր ժողովուրդը խափանել է Սալլանթեանի հայ պատարագը և նա եկել, մտել է հայոց եկեղեցին, ցանկանալով տեսնել Պատկանեանցին։ Այդ ժամանակ Կարապետ վարդապետը քարոզ է խօսել և մի լաւ յանդիմանել Սալլանթեանին, որի մասին և նա յետոյ գանգատուել է Պատկանեանցին, ասելով, թէ ինքն եկել էր, որ միասին երթան առաջնորդի մօտ՝ հայ եկեղեցու ծոցը մտնելու, բայց Կարապետ վարդապետն իւր քարոզով այնպէս խոցել է նորա սիրտը, որ նա թողել է իւր այդ մտադրութիւնը։ Սերովբէ վարժապետը հարցրել է նորան, թէ քանի որ դու քարոզում ես, թէ հայոց եկեղեցում հոգու փրկութիւն չ'կայ, ինչո՞ւ ես ուզում հայոց եկեղեցին մտնել. նա պատասխանել է, թէ այո՛, չկայ, բայց ինքն ուզում է «դինիմ իշին դէյիլ, գիւնրմ իշին», այսինքն ոչ հաւատի, այլ կեանքի համար։ Այնուհետև Պատկանեանցը վարձել է նորա համար մի փոքրիկ բնակարան, ուր նա փոխադրուել է կապուչինների վանքից և կերակրուել հայերի հայթայթած ապրուստով։ Այս տևել է մի քանի ամիս, և նա սկսել է քարոզել ու տարածել ժողովրդի մէջ, թէ Պատկանեանք հայր ու որդի կաթոլիկ են։ Սորանից յետոյ Յովակիմ վարդապետը քանիցս գժտուել ու հաշտուել է իւր կաթոլիկ ծխի հետ, մինչև որ դարձել է հայոց եկեղեցու ծոցը և դադար գտել Մոսկովում Լազարեան ճեմա-

բանում։ Եւ այդ ժամանակամիջոցում, չնայելով, որ նա պատճառ է եղել Լուզարեանների սառնութեան դէպի Պատկանեանցը, նա, Յովհաննէս սրբազանի հրամանով, ուղարկել է նորան վեղարի, գաւազանի և խաչի հետ միասին և մի ընտիր վկայական, որի մէջ նորա անունը փոխուած էր Միքայէլ։

Խալիբի քաղաքագլխութեան եռամեակից յետոյ, հետևեալ 1836, 37 և 38 եռամեակի համար ընտրուում է նոյն Խալիբի ջանքով Գաբրիէլ աղա Խոջայեանը, որ Մարկոս աղայի պէս միայն քաղաքագլխի անուն էր կրում, իսկ իրօք պաշտօնը կատարում էր ինքը Խալիբը։ Այդ Խոջայեանի քաղաքագլխութեան առաջին տարին—1836 թուին, գալիս է Ս. Էջմիածնից նուիրակութեան պաշտօնով «Փոքր» կոչուած Յովսէփ արքեպիսկոպոս Վեհապետեանը, որ ունէր իւր ձեռին երկու կոնդակ՝ և՛ հրաժարուած Եփրեմից, որի սպասաւորն էր եղել ժամանակով, և՛ ընտրուած կաթուղիկոս Կարբեցուց։ Սա բերել էր Պատկանեանցին երկու նամակ՝ Կեսարացի Բարսեղ արքեպիսկոպոսից և Յովսէփ արքեպիսկոպոս Մարուքեանից, որոնք իւրեանց ազդեցութեամբ Ս. Էջմիածնի սիւներն էին համարուում։ Ահա՛ այդ նամակներն առիթ են տալիս Թադէոս վարդապետին ամբաստանելու Ներսէսի առաջ Պատկանեանցին, թէ նա յարաբերութեան մէջ է մտել Կարբեցու հետ։ Ներսէսը պահանջում է կոնդակներն ու նամակները և կարդալով ու համոզուելով, որ Թադէոս վարդապետի ակնարկածները նոցա մէջ չկան, վերադարձնում է, պատուիրելով Պատկանեանցին իւր տալիք պատասխանը նամակներին նախապէս իրան հաղորդել։ Յովսէփ Փոքրի տիրացուն էր Աբել անունով մէկը, որին նա իւր հետ տանում է Քիշինև, որտեղ նա, այդ տիրացուն, աշակերտում է Մսեր սարկաւագին և ստանում այնքան գիտութիւն, որ յետոյ լինում է յայտնի Աբել արքեպիսկոպոսը, Ատրպատականի ժամանակաւոր առաջնորդը և «Արարատի» խմբագրութեան անդամ ու օգնականը։

Մրկրը Պօպովի հաշուի գործը, վերջապէս, լուծուում է և Թադէոս վարդապետը Ներսէսի հրամանով 15,000 սօմ ծախս անելուց յետոյ, 1838-ի մարտին վերադառնում է Ղրիմ և Պատ-

կանեանցն երեք տարի արդելուած մնալուց յետոյ, վերստին իրաւունք է ստանում քահանայագործելու. նա աւագ ուրբաթ օրը քարոզ է խօսում, զատկին էլ տնօրհնէք շրջում, սկսելով Խալիբի և իւր միւս հակառակորդների տներից, և լաւ արդիւնաւորուում։ Գաբրիէլ Խաչայեանից յետոյ, 1839, 40 և 41 եռամեակի համար ընտրուում է քաղաքագլուխ դարձեալ Խաչատուր Խռմաչեանը, որ արդէն առաջնանը չէր, այլ անցել էր Խալիբի կողմը։ Սորա կառավարութեան առաջին տարին վերջանալու վերայ էր, երբ Ներսէսից ստացուում է մի ծրար Հոգևոր կառավարութեան և. Խռմաչեանի անունով, որ երբ բաց են անում, միջից դուրս է գալիս մի ուրիշ ծրար Պատկանեանցի անունով։ Ներսէս հարցնում էր Պատկանեանցին, թէ ինչ է եղել այն թուղթը, որ պարունակում էր իւր մէջ նախարարութիւնից 1831 թուին եկած թղթի պատասխանը Հայոց մատաղի մասին ընդհանրապէս և թէ ե՞րբ է մտել Հայոց մէջ այդ սովորութիւնը։ Այդ պատասխանը գրել էր Ներսէսը Քիշինևում և թարգմանել էր ռուսերէն Պատկանեանցը և սրբագրել տուել ռուս աւագ քահանայ Լանչկովսկուն, որովհետև այդ օրերը Ալամդարեանը խռովել էր և չէր երևում առաջնորդարանում, այլ հաշում էր իւր սենեակում։ Եւ այդ բոլորը կատարուել էր առաջնորդի սենեակում և թղթերը մնացել էին նորա մօտ։ Այսպէս էլ պատասխանում է Պատկանեանցը, աւելացնելով և իւր կարծիքը մատաղի մասին, որ նա լսել էր Սալլանթեանից 1817 թուին Հաշտարխանում։

Մի ամսից յետոյ նոր հարցմունք է գալիս Ներսէսից, թէ նախարարութիւնը հարցրել է Յովհաննէս կաթուղիկոսից, թէ ինչո՞ւ համար Հայոց եկեղեցին խաչակնքելու ձևը աւանդել է այդպէս, և ոչ որպէս Յունաց եկեղեցին։ Կաթուղիկոսը պատասխանել էր, թէ որովհետև արեգակը ծախից աջ է դնում, այդ պատճառով էլ մենք Հայերս խաչակնքելու ժամանակ ձեռքերս ծախից դէպի աջ ենք տանում։ Պատկանեանցը պատասխանում է, թէ քահանան, լինի նա հայ, թէ յոյն, երբ խաչակնքում է ժողովրդի վերայ և ասում Է «խաղաղութիւն ամենեցուն», իւր ձեռքը միշտ տանում է ծախից դէպի աջ, և

երբէք չի տանում աջից դէպի ձախ։ Եթէ մէկը գրչով կամ մատիտով մի խաչ է ուզում քաշել, նա մինչ առաջին գիծը քաշում է վերևից ներքև, երկրորդ գիծը, որով նա պէտք է կիսէ ուղղահայեաց գիծը, ո՞րտեղից է սկսում՝ ձախից դէպի աջ, թէ ընդհակառակը, ինչպէս անում են Հրէաները և Արաբացիները։

Սորանից յետոյ գալիս են երրորդ և չորրորդ հարցմունքները, և Պատկանեանցը կասկածանքի մէջ է ընկնում, թէ այդ բոլորի պատճառն ի՞նչ պիտի լինի. նա միտքն է դնում դրել Լանչկովսկուն և նորանից տեղեկանալ հանգամանքներին, բայց մտածում է, որ Ներսէսին շատ էլ հաճոյ չի լինիլ, եթէ նա իմանայ, որ Լանչկովսկին գիտէ նորա թղթակցութեան առարկաները։ Սակայն նորա կասկածները շուտով փարատւում է մի հնդկահայ պատանի, որ ծառայում էր Մագիստրատում և որ առաջ ծառայել էր Սիւնհոդոսում։ Նա հաղորդում է նորան, թէ Ներսէսը սկսել է մի անախորժ թղթակցութիւն Սինոդի հետ և դորա շարժառիթն եղել է այն, որ Ներսէսն իւր դրագրութիւնների մէջ չէր գրում Սիւնհոդոս, Սինոդ սովորական ձևերը, այլ Սինոտ, որ նմանում էր սնոտի բառին, որից և Սինոդականները շատ վիրաւորուել էին և Յովսէփ արքեպիսկոպոս Մարուքեանի և Ստեփան արքեպիսկոպոս Վեհապետեանի ստորագրութեամբ միյանդիմանութիւն էին գրել նորան.— «Սանձեա զյանդուգն գրիչ քո և մի՛ համարձակիր ապարատան խծբծանօք անարգել զպատիւ սրբազնագունմար ժողովոյս, որոյ անդամք կարգակիցք են և հաւասարապատիւ եպիսկոպոսունք և արքեպիսկոպոսունք»։

1840 թուին լուր է հասնում, թէ կոմս Միքայել Վորոնցովը դուրս է եկել շրջագայելու իւր իշխանութեան ենթարկուած Նոր-Ռուսիոյ երկրի քաղաքները։ Տէր-Գաբրիէլը մտածում է օգտուել այդ հանգամանքից և երբ կոմսը հասնի Նախիջևան, խնդրէ նորան, որ նա միշնորդէ կայսեր առաջ՝ վերացնելու գլխահարկը, որ դրուել էր Հայերի վերայ 1836-ին և հակառակ էր արտօնագրին։ Քաղաքի մեծամեծները թէև բողոք էին ուղարկել այդ գլխահարկի առթիւ և արտօնագիրը եղծե-

լու համար ուր հարկն է, բայց այդ միայն առ. երես էր, նոքա ուրախ էին, որ դորանով պիտի կարողանային բոլորովին ստրկացնել ժողովուրդը, ինքեանք նոցա տեղ հատուցանելով և իրանց ծառայեցնելով նոցա, և արդէն իսկ հաւաքել էին գլխահարկի գումարը 36, 37, 38, 39 և 40 թուերի համար և պահել քաղաքի գանձարանում, որ բոլոքի բացասական պատասխան ստացուելու դէպքում իսկոյն և եթ հատուցանեն արքունի գանձարանին։ Երբ կոմսը հասնում է Ռոստով, Խալիբը, որ քաղաքապլուխ չլինելով, իսկապէս քաղաքապլխութիւն էր անում Խաչատուր Խումաչեանի տեղ, գնում է Տագանրոգ և բերում քաղաքապետ բարոն Օտտօ Ֆրանկին, որին շատ էր սիրում կոմսը։ Մեծամեծների ցանկութիւնն այն էր, որ այդ Օտտօն աչակից լինի նոցա, երբ նոքա աղերսեն գլխահարկը ընդունելու և դորա փոխարէն ազատութիւն տալու, որ Նախիջևանի բնակիչները ըստ հաճոյից քաղաքից դուրս գան, նոցա կալուածներում ապրեն և նոցա հողերը մշակեն և գլխահարկը նոցա տեղ ինքեանք հատուցանեն։ Իւր մտածածը գլուխ բերելու նպատակով Պատկանեանցը կոմսի Նախիջևան գալու նախընթաց օրը մի քանի նպատակայարմար կարգադրութիւն է անում. նա, նախ իմաց է տալիս ժողովրդին, որ հաւաքուեն Լուսաւորչի շուրջը և թաքչին, մի մասն էլ բռնեն բոլոր փողոցագլուխները, որոնք դուրս են գալիս Լուսաւորչի մեծ փողոցը, որպէս զի միջոց չտան կոմսի կառքը ծռելու և ուրիշ փողոցով տանելու Խումաչեանի տունը նախաճաշի, ինչպէս որ կարգադրել էին Խալիբը և իւր համախոհները. երկրորդ, կարգադրում է, որ քահանաները առաւօտեան ժամից յետոյ չցրուեն և եթէ տեղ երթալու էլ լինին, իսկոյն վերադառնան. երրորդ, եկեղեցու դուռը բաց լինի և ժամհարներից մէկը զանգակատանը հսկէ, որ հէնց որ կոմսի կառքը Ռոստովի բերդի դռնից դուրս գայ, մեծ զանգակը հնչեցնէ, իսկ երբ հասնի Նախիջևանի քաղաքադռնին, բոլոր զանգակները հնչեցնէ, որ բոլոր ժողովուրդը հաւաքուի։ Թէև Խալիբը տեղեկանում է այդ բոլորի մասին և բեշլիներ է ուղարկում ցրելու ժողովուրդը և փողոցագլուխները մաքրելու, բայց նոքա, այդ բեշլիներն էլ, հասա-

բակ ժողովրդից լինելով, խառնուում են նոցա հետ և նպաստում գործին, փոխանակ արգելք լինելու։ Տեսնելով, որ այդ չյաջողեց և ստիկանական միջոցները չօգնեցին, Խալիբը առնում է իւր հետ քաղաքագլուխ Խռմաչեանին, բառօն Ֆռանկին և քաղաքի միւս իշխանաւորներին և գալիս, մտնում է Ս. Լուսաւորիչ, որ եկեղեցու դռները փակել տայ, ժողովուրդը ցրէ և Վօրոնցովին միջոց տայ, առանց եկեղեցի մտնելու, ուղղակի քաղաքագլխի տունը ճաշի երթալու։ Եկեղեցում քաղաքապետը մօտենում է Տէր-Գաբրիէլին, որ սեղանի դէմ գրքակալի մօտ դանդնած էր, և հրամայում է եկեղեցու դուռը փակել և ժողովուրդը ցրել, բայց նա պատասխանում է, որ եկեղեցու մէջ իշխանութիւնն իրան է պատկանում և ուրիշ ոչ ոքի, ուստի և ոչ ոք չի կարող նորան հրամայել այս կամ այն անել։ Նա պատուիրում է հոգևորական դասին զգեստաւորուել և ինքն էլ առնում է շուրջառ ու խաչ և դուրս գալիս ընդառաջ, որովհետև այդ ժամանակ հնչում է մեծ զանգակը և յետոյ միւս զանգակները, որ նշան էին, թէ կոմսի կառքը մօտենում է։ Հասնում է կառքը, և, թէև Խալիբի յայտնի ծառայ «Ղարաուլ Ստեփանը» աշխատում է ծռել տալ դէպի Խաչատուր ադայի տունը, բայց ժողովուրդն ուրախութեան դոռումներ անելու դիմակի տակ սպառնում են նորան և չեն թողնում շեղելու կոմսին ուղիղ ճանապարհից։ Կոմսը հասնելով եկեղեցուն և տեսնելով զգեստաւորուած հոգևորականներին, իջնում է կառքից, համբուրում խաչը և խուռն բազմութեան հետ մտնում եկեղեցին։ Պատկանեանցը հանում է ծոցից մի թուղթ, կարդում և խնդրում գլխահարկը վերացնել, առնել միայն տնահարկ և պահպանել արտօնագիրը, և այս ասելով, ծունգ է չոքում. նորա օրինակին հետևում է և բազմութիւնը։ Կոմսը շատ գթաշարժուում է. նա արտասուում է և բարձրացնելով Պատկանեանցին, խոստանում է ուղղակի Պետերբուրգ երթալ և չվերադառնալ, մինչև որ գլխահարկը վերացնել տայ։

1841 թիւը Խաչատուր Խռմաչեանի երկրորդ տնգամ քաղաքագլխութիւն անելու եռամեակի վերջին տարին էր, և նա այլ ևս վերընտրուելու յոյս չունէր։ Ժողովրդի ձայնը արդէն

հետևեալ եռամեակի քաղաքագլխութեան համար թեկնածու որոշել էր Խալիբին, որ այդ ժամանակ արդէն այնքան յառաջացել էր, որ, կարելի է ասել, ամենաազդեցիկ մարդն էր դարձել քաղաքում։ Խռմաչեանի քաղաքագլխութեան առաջին եռամեակը—1827, 28, 29—շատ յաջող էր անցել, և նա քաղաքացւոց մէջ լաւ անուն ու յիշատակ էր թողել, որի հետևանքը պէտք էր համարել և նորա երկրորդ անդամ քուէների բազմութիւն վաստակելը։ Այն ժամանակ նա դեռ նոր մարդ էր Նախիջևանում. նա առևտուր ուներ Ղրիմում և նոր միայն վերադարձել էր ճոխացած, նա թէև բարկացող ու կանչվռտող բնաւորութիւն ունէր, բայց բարի էր, աշխոյժ և եռանդոտ. նորան իւրեանց փորձառութեամբ օգնում էին ուրիշները, նամանաւանդ Գէորգ աղա Օգաբաշեանը, որի աշխատանքով գլխաւորապէս և նա ընտրուել էր քաղաքագլուխ, որովհետև, ինչպէս ասացինք, նա դեռ նոր էր և ժողովուրդը չէր ճանաչում նորան։ Իսկ այդ երկրորդ եռամեակի ընթացքում նա բոլորովին փոխուած էր և ոչ մի բանով չէր յիշեցնում առաջուայ եռանդոտ, անկախ գործող Խռմաչեանին, բացի իւր անտեղի գոռում-գոչում հանելու և յաճախակի «զարմանալի» բառը գործածելու սովորութիւնը պահպանելուց։ Խռմաչեանի կուսակցութիւնը, որ առաջ շատ հզօր էր, 1839, 40 և 41 թուերին հետզհետէ բոլորովին քայքայուում ու կորցնում է իւր նշանակութիւնն և ազդեցութիւնը. ինքը Խաչատուր աղան էլ կորցնում է իւր անկախ գործելու, լաւ խորհրդակիցներով իրան շրջապատելու դնահատելի յատկութիւնը և ենթարկուում է Խալիբի ազդեցութեան այն աստիճան, որ, համարձակ կարելի է ասել, որ քաղաքագլխի անունն այդ եռամեակում նորանն էր, իսկ քաղաքագլխութիւն անողը իրօք Խալիբն էր։ Պատկանեանցի յարաբերութիւնը նորա հետ առաջ շատ բարեկամական էր. Խաչատուր աղան էր շինել նորա դպրոցը. նա էր նորան հրաւիրել Հաշտարխանից Նախիջևան և նորա ուսուցչութեան ժամանակ ամեն բանում թև ու թիկունք եղել նորան. նա էր, վերջապէս, բաւականին մեծ ծախս արել տպարանի համար, որ կամեցել էր բանալ Պատկանեանցը, բայց չէր

յաջողել։ Այս բարեկամութիւնը ամրապնդուել էր նոցա մէջ նամանաւանդ այն ժամանակից, երբ Խռմաչեանի Ստեփան որդին կնքել էր նորա Մարիամ աղջկան։ Սակայն վերջին ժամանակները, երբ բոլորեքեան թշնամացել էին Պատկանեանցի հետ, Խաչատուր աղայի յարաբերութիւնն էլ նորա հետ Խալիբի ազդեցութեամբ կամաց-կամաց վատանում է և մի երկու ընդհարումից յետոյ փոխուում է ատելութեան ու թշնամութեան։ Ընդհարումներից մէկի ժամանակ, օրինակի համար, Խռմաչեանը այնքան բարկանում է, որ թքում է Պատկանեանցի երեսին. նա էլ չկորցնելով իւր հոգու խաղաղութիւնը, հանում է թաշկինակը, սրբում է թուքը երեսից և ասում է. «Խաչատուր աղա, դու թքեցիր իմ երեսին, և ես սրբեցի ու տեղը ոչինչ չմնաց, բայց եթէ ես թքեմ քո երեսին, իրրև անջինջ դրոշ կմնայ յաւիտեանս յաւիտենից քո վերայ և քո սերնդի վերայ և ոչնչով հնար չի լինիլ սրբել»։ Տէր Գաբրիէլի այս խօսքերը խոր խոցում են գոռոզ աղայի սիրտը, որովհետև նա ընդունում է նորան իրրև քահանայի անէծք, որ որդէցորդի պիտի ծանրանայ նորա սերնդի վերայ և ոչ մի հնար չպիտի լինի այդ անէծքի տակից դուրս գալ։ Նա այս մասին մինչև անգամ բողոքում է և առաջնորդին, և Ներսէսը հրամայում է Պատկանեանցին հաշտուել իւր առաջնորդական գործակատարի հետ, բայց Խռմաչեանը չի հանգստանում. նա միշտ դանդատուում է, թէ Տէր-Գաբրիէլի հաշտութիւնը իւր հետ անկեղծ չէ, և այլն։

Ժողովրդի ձայնը ինչպէս որ որոշուած է լինում, այնպէս էլ կատարուում է. Խալիբը 1842, 43 և 44 եռամեակի համար ընտրուում է քաղաքապետ համարեա թէ միաձայն։ Նա այս անգամ գործում է աւելի համարձակ, քան թէ իւր քաղաքապետութեան առաջին եռամեակին։ Տուրքերի ծանրութիւնը սաստկանում է, ժողովրդից փող հաւաքելու դէպքերը յաճախում են։ Թէև սմենքը դժգոհ են լինում դրանից, բայց տալիս են, որովհետև վախենում են նորանից իրրև հզօր մարդուց, որ կարող էր ընկած տեղը շատ ու շատ վնասել։ Հաւաքուում էր փողը զանազան պատրուակներով—այսօր Տա-

գանրօգի քաղաքապետը պիտի գայ, վաղը քաղաքի այս ինչ գործը պէտք է յաջողեցնել, երրորդ օրը մի ուրիշ պէտքի համար և այսպէս անվերջ։ Դրամը մտնում էր Դումը, իսկ այնտեղից ծախսուում էր քաղաքագլխի ցանկութեամբ, առանց հսկողութեան, առանց հաշուետուութեան. ո՞վ կհամարձակուէր բերան բաց անել և հաշիւ պահանջել։ Խալիբի քաղաքագլխութեան դոյն իսկ առաջին տարին—1842-ին, կոմս Վօրօնցովը կրկին այցելում է Նախիջևանը և Պատկանեանցը երկրորդ անգամ մեծ շքով ու հանդիսաւորութեամբ ընդունում է նորան եկեղեցում, նախապէս կոմսի եկեղեցում կանգնած նախկին տեղում մի սիւն կանգնեցնելով, կանաչ կերպասով ծածկելով և վերան գլխահարկի վերացնելու թուականը գրելով—1840 թ. Տէր-Գաբրիէլը նորից մի գրաւոր հառ է խօսում ու յանձնում թուղթը կոմսին, որ ուրախ ու գուարթ ընդունում է ու դնում Խալիբի տունը, տանելով իւր հետ և հառախօսին ու նորա հետ երկար խօսելով։ Կոմս Վօրօնցովը այդ դէպքում աւելի երախտագէտ է գտնուում, քան թէ Խալիբեանք և միւսները, որոնք ամենևին բանի տեղ չէին դրել նորա արածները և մինչև իսկ գլխահարկի լուրը ստացուելու միջոցին, երբ հասարակութեամբ գոհացողական մաղթանք էին կատարել եկեղեցում, գլխաւոր պատճառ եղողին մի կողմ թողնելով, Ս. Խաչի «Վեստպարտ» Մկրտիչ վարպետին էին հրաւիրել եկեղեցական հանդիսին նախագահելու։ Նոյն իսկ Խռմաչեանի ընկերներից մէկը նորա հետ պատահել էր դոյն իսկ միջոցին։ Կոմսի աշխատանքի և գլխահարկի վերացման գործի յաջողելու լուրը հաղորդել էր Նախիջևան իւր Պօղոս եղբօրը Սիմէօն Գրիգորեան Սուլթանշահեանը, և Պօղոս Սուլթանշահեանն էլ այդ առթիւ մեծ հացկերոյթ էր սարքել իւր տանը, բայց չէր հրաւիրել ոչ Պատկանեանցին և ոչ էլ Խռմաչեանին, որով չարաչար վիրաւորել էր այդ վերջինի փառասիրութիւնը։ Սա այն ժամանակ այցելութեան էր եկել Պատկանեանցին և հաղորդելով նորան այդ հանգամանքը և իւր զայրոյթը այդ առթիւ յայտնելով, աշխատել էր գրգռել և Պատկանեանցին և ստիպել այդ մասին քարոզ ասելու եկեղեցում և պախարակելու Խռ-

լիբեանց ընթացքը, բայց բարեբաղդաբար Պատկանեանցը կարողացել էր այդ անգամ զսպել իրան և չհամաձայնել, որով թէև զայրացրել էր իւր կնքահօրը, բայց պահել էր թէ իւր և թէ եկեղեցու պատիւը։ Մենք ասում ենք «բարեբաղդաբար այս անգամ», որովհետև պէտք է խոստովանել, որ Պատկանեանցը շատ անգամ եկեղեցու բեմը շինել է կռուի ասպարէզ և հասարակաց խնդիրների դիմակի տակ իւր քարոզների, կամ, ինչպէս ինքն ասում է, «որոտումների» մէջ յաճախ իւր անձնական կիրքն է առաջ քշել, պախարակել իւր թշնամիներին, ցատագովել իւր բարեկամներին։

Գլուխ Թ.

1842-ին մեռնում է Յովհաննէս Կարբեցին և ընարողական ժողովը 1843-ին առաջին անգամ, Պոլոժենիայի հիման վերայ, Տաճկահայոց, Պարսկահայոց և Ռուսահայոց հոգևոր և աշխարհական պատգամաւորների մասնակցութեամբ ընարում է երկու թեկնածու՝ Ներսէսին միածին և Երուսաղէմի Զաքարիա պատրիարքին ծայների համեմատական առաւելութեամբ։ Պատկանեանցը Մակարիայի տօնավաճառումն է լինում և այնտեղ առաջին անգամ իմանում, որ Նիկողայոս կայսրը 1843-ի օգոստոսի 10-ին հաստատել է կաթողիկոս Ներսէսին, պատուիրելով նորան Քիշինևից երթալ Պետերբուրգ տեսակցութեան, և որ արդէն նա գնացել է։ Դոյն իսկ միջոցին տօնավաճառում նա պատահում է Մոսկուաբնակ յայտնի Յովհաննէս Յովսանեանին, ու տալիս է նորան կաթուղիկոսի հաստատութեան ռեսկրիպտը կարդալու և թարգմանելու հայերէն։ Պատկանեանցը կարծես թէ ընաղդմամբ հասկանալով, որ ինքն այդ ընարութեամբ դատապարտուած պիտի լինի սար ու ձոր ընկնելու, կամենում է թեթևանալ ընտանիքից. նորա մեծ որդիները Ռափայէլն ու Յովհաննէսը արդէն Լազարեան ճեմարանումն էին, փոքրին էլ դորանից մի փոքր առաջ նա ուղարկել էր Վ.օրոնեժի նորակառոյց կադետների կորպուսը, այժմ էլ իւր վերադարձին շտապում է նշանել իւր հարսնացու դուստր

Մարիամին և այդպիսով պատրաստում է ամեն փորձանք կրելու։

Դոյն 1843 թուին լուր է տարածուում, թէ Նիկողայոս կայսրը կամենալով վերջ դնել այն բոլոր անիրաւութիւններին, որոնք կատարուում էին լայնատարած տէրութեան սահմաններում և որոնց լուրը արդէն իսկ հասել էր նորա ականջը, հրամայում է ամեն կողմ սենատորներ ուղարկել՝ խստութեամբ քննելու ամեն բան և իրան զեկուցանելու։ Դորա վերայ Եկատերինօսլաւի նահանգի համար քննիչ կարգուում է գեներալ Ժեմչուժնիկով արդարամիտ սենատորը, որ 1844-ին աշնանը հասնում է Նախիջևան և ծեռնարկում է Մագիստրատի գործերի քննութեան և գտնում շատ անկանոնութիւններ, որոնց համար սակայն նա ներողամիտ է լինում, որովհետև այնպէս է կարծում, որ այդ բոլորն առաջ է եկել ոչ թէ կառավարիչների չար դիտաւորութիւնից, այլ պարզամտութիւնից։ Այդ մասին խնդրել էր նորան Պատկանեանցը, պատուով ընդունելով նորան եկեղեցում երեկոյեան ժամերգութեան ժամանակ և առաջիկայ կիւրակէին ևս հանդիսաւոր պատարագ լսելու հրաւիրելով։ Ժեմչուժնիկովը թէև իւր որդու ու ատենեանաւորների հետ իջևանել էր Մարկոս աղայի տանը, բայց նորա ծախսը բոլորամասն հոգում էր քաղաքը։ Նորա գալու երկրորդ կիւրակէին քաղաքը պատրաստում է նորա պատուին մեծածախ երեկոյթ դպրոցի դահլիճում, որին ներկայ է լինում և քաղաքապետ Օտտո Ֆռանկը, որ արդէն զգում էր, որ իւր պաշտօնի վերջը հասել է։ Այդ ժամանակները Վօրոնցովը արդէն իսկ տեղափոխուել էր Կովկաս մեծ պաշտօնով և նորա կարգած մարդիկը հետզհետէ դուրս էին գալիս պաշտօնից։ Նորա տեղը Նոր Ռուսիոյ երկրի կուսակալ նշանակուել էր Ֆեօդորովը, որ մի շատ արդարամիտ մարդու հռչակ էր վայելում։ Երեկոյթին Ժեմչուժնիկովը շատ է խօսում Պատկանեանցի հետ. նորա կարծիքով Նախիջևանը գնալով պիտի նուազէր ու ընկնէր, իսկ Ռոստովը աճէր ու մեծանար, և այդ բոլորը նորա համար, որ Նախիջևանցիք չունէին իրանց մէջ մի սրտացաւ ու հասկացող մարդ. նոքա միշտ փակ աչքով են ընտրել դատաւոր,

հոգաբարձու և քաղաքագլուխ. արդեօք ի՞նչ պիտի գրուի Նախիջևանի պատմութեան մէջ,—թէ այս ինչ դատաւոր կամ քաղաքագլուխն երեք տարի գնացին—եկան Մագիստրատ և Դումը, աթոռները մաշեցին, կերան ու խմեցին և զուր ժամանակ վատնեցին: Թէև Խալիբի դրութիւնը շատ խախուտ է լինում, բայց վերջ ի վերջոյ նա կարողանում է այնպէս անել, որ մտնում է քննչի աչքը, նամանաւանդ Գոգոլեանի ի պատիւ սենատորին սարքուած ճոխ երեկոյթից յետոյ, այնպէս որ նորա քաղաքագլուխ վերընտրուելը երրորդ անգամ, 1845, 46 և 47-ի եռամեակի համար, ապահովուած կարելի էր համարել:

Կաթուղիկոս ընտրուած և հաստատուած Ներսէսը, որ 1843-ին գնացել էր մայրաքաղաք և անօրինակ շքով ընդունուել կայսրից և մի քանի ամիս այնտեղ տկարացել և «մի գերմանացի մեսմերեան դաղտնիքին ծանօթ տիկնոջ մագնիսաշոշափ բժշկութեամբ» ապաքինուել, արդէն վերադարձել էր Քիշինև, ճանապարհին մտնելով Մոսկով, դատելով Լազարեան եպիսկոպոսում Սալլանթեանին և հրամայելով արտաքսել եպիսկոպոսից Յովհաննէս և Ռափայէլ Պատկանեանցներին և պատուէր ուղարկելով իրան Պատկանեանցին, թէ թող նա պատրաստ լինի իւր արաժների արժանի վարձն ստանալու: Քիշինևից նա կոնդակով պատուիրում է Մարուքեան Յովսէփ արքեպիսկոպոսին և «կաշի» Ստեփան էպիսկոպոսին, որ նոքա դան Մոզդոկ և սպասեն իրան, իսկ ինքը 1844 թուի մեծ մասը մնում է Քիշինևում, որովհետև 15 տարի ապրած լինելով այնտեղ, ընտելացել էր և դժուար էր նորան հեռանալ այնտեղից շուտով: 1845 թուի սկզբին նա դուրս է գալիս դէպի Ղրիմ և այնտեղ անցկացնում նոյն թուի վերջին տաս ամիսը: Քիշինևից դուրս գալուց առաջ, նա հրամայում է, որ վիճակի ամեն կողմից երթան ծեռնադրուողներ, որ երկար ժամանակ իրանից յետոյ քահանայի կարօտութիւն չլինի, որովհետև միաք ուներ, դեռ իւր տեղը առաջնորդ չընշանակել, որ հնար լինի վիճակի արդիւնքը հաւաքել իւր ծեռքը և այն դումարով կառուցանել Ս. Էջմիածնում հազար մանուկների համար մի եպարան, որի մասին նա խօսել էր կայսեր առաջ և մայրաքաղաքներում շատ

տեղ, և, վերջապէս, տալ վիճակին այնպիսի քահանաներ, որոնց ծեռքով կարողանայ հասնել իւր ունեցած նպատակներին։

Դոյն իսկ 1845 թուին գալիս է կոմս Վորոնցովի տեղը նշանակուած Ֆեոդորովը. նա առաջ իջևանում է Ռոստովում և այդտեղից կոչելով իւր մօտ Խալիբին և Մադիստրատի ատենադպրին, չարաչար բարկանում է նոցա վերայ և կալանաւորում։ Պատկանեանցը, երբ միւս օրը Ֆեոդորովը դալիս է Նախիջևան, ընդունում է նորան նոյն կարգով, ինչպէս մի ժամանակ Վորոնցովին, և իւր ճառով փոխում է նորա տրամադրութիւնը դէպի Խալիբը, որի վերայ մի աղտոտ բողոք էր ներկայացրել նորան կառապանի կինը, որ տիկին Խալիբեանի նաժիշտն էր, և գորանով գրգռել գենեարալի զայրոյթը քաղաքագլխի դէմ ու նորան արդելելու պատճառ եղել։ Քաղաքի մէջ այդ ժամանակները արդէն լուր էր տարածուել, որ Ներսէսը շուտով պիտի գայ և պաշտէ Պատկանեանցին, և այդ լուրն այնպէս էր ազդել ամենքի վերայ, որ նորա կուսակիցների թիւը, որ առանց այն էլ շատ ստուար չէր, զգալի կերպով նուազել էր։ Գործը այդ դրութեան մէջ է լինում, որ լուր է տարածւում, թէ 17 տարեկան Կոստանդին արքայորդին երկարատև ծովային ճանապարհորդութիւն կատարելուց յետոյ, հասել է Սևաստոպոլ և այնտեղից էլ պիտի գայ Ռոստով։ Պատկանեանցը, որին Խալիբը Տագանրոգից հաղորդել էր այդ լուրը, սկսում է պատրաստութիւն տեսնել՝ արքայորդուն վայելչապէս ընդունելու։ Հոկտեմբերի 15-ին, երբ պիտի գար կայսերազնը, Պատկանեանցը գնում է եկեղեցի, որ կատարէ ընդունելութիւնը։ Խալիբը նորա գլխին մի խաղ խաղալու նպատակով, ծածուկ հրաւիրել էր Ս. Խաչից Մկրտիչ վարդապետին և նորան յանձնել ընդունելութեան հանդէսը կատարել, պատուիրելով միանդամայն, որ նա շուտով գնայ եկեղեցի և զգեստաւորուած ու մեծ խաչը ծեռքն առած մի տեղ պահուի, որ երբ մեծ իշխանը գայ և Պատկանեանցը պատրաստուի դուրս դալու նորա առաջը, նա յանկարծ դուրս գայ պահուած տեղից և ինքը դիմաւորէ և Պատկանեանցը խայտառակուի։ Այդպէս էլ լինում է. մինչ արքայորդու կառքը հասնում է եկեղեցու բակի

դուռը և նա իջնելով կառքից, իւր դաստիարակ Լիտկէի հետ դիմում է դէպի եկեղեցու նախագաւիթը և Պատկանեանցը խուճապելով, պահանջում է մեծ խաչը, որ ընդ առաջ դուրս գայ, յանկարծ յայտնուում է իւր թագնուած տեղից Մկրտիչ վարդապետը և միւս քահանաների հետ առաջ անցնում ու դնում կայսերորդու ոտքի տակ խաչը։ Ջուր է մաղուում ամենքի վերայ, և ինքը մեծ իշխանն էլ սասանում է. նա շտապով առնում է խաչը, համբուրում և վարդապետի յետևից մտնում եկեղեցի, որտեղ Պատկանեանցը ասում է իւր գրաւոր պատրաստած ճառը։ Իշխանը գոհութեամբ առնում է ճառախօսի ձեռքից թուղթը, դնում ծոցը և ասում. «Այս թուղթը ես կը տանեմ և ցոյց կը տամ հօրս»։ Խաչը ոտքի տակ դնելը և տիրացու Եղիա Տէր-Աստուածատրեանի սարկաւագի նման Հայոց եկեղեցում ռուսերէն «Տէր աղաչեսցուք»-ը ասելը չափազանց ծանր տպաւորութիւն է թողնում ամենքի վերայ։

Ներսէսը գալիս է նոյեմբերի սկզբին, ընդ առաջ են գընում Խալիբեանք, Խօջայեանք, Օդաբաշեանք, Խաչատուր Խրոմաչեանը և փիւսները, գլխաւորապէս Պատկանեանցի հակառակորդները։ Պատահում են կաթուղիկոսին Տագանրօգի և Մարիամպոլի մէջ գտնուած մի գետակի ափին, որտեղ Վեհափառը պէտք է փոխէր կառքի ձիերը։ Իսկոյն բոլորեքեան իջնում են կառքերից և դիմաւորում մեծ հիւրին։ Վեհափառը մտնում է իջևանի դահլիճը, և նորա հետ մտնում է միայն Խալիբը, իսկ դրան մօտ կանգնում է Դաւիթ Օդաբաշեանը, որ ոչ ոքի թոյլ չտայ մտնելու, մինչև որ նոքա երկուսը վերջացնեն իրանց առանձին խօսակցութիւնը։ Մի քանի ժամանակից բացուում է դուռը և ներս է հրաւիրուում Տէր-Մարտիրոս քահանան, յետոյ արդէն թոյլտուութիւն են ստանում մտնելու և միւսները։ Կաթուղիկոսը առաջին անգամ մինչև իսկ չի ճանաչում Խաչատուր տպա Խրոմաչեանին, թէև դա բոլոր ժամանակ կանգնած է լինում նորա առաջ։ Թէ ինչ են խօսում երկուսը առանձին—կաթուղիկոսը և Խալիբը, չի իմացուում, միայն որ այդ օրուանից սկսուում է նոցա մէջ բարեկամական յարաբերութիւնը, նոցա մէջ, որոնք 15 տարուց

ի վեր անհաշտութեան մէջ էին եղել, և պսակուում ու սրբ-բագործուում հոխ հացկերոյթի սեղանով, որ սարքել էին Նախիջևանցիք հետերը բերած ճանապարհի առատ պաշարից։ Այդ-տեղից շքեղ կարաւանը առաջ է շարժուում դէպի Տաղանրոգ և մի գիշեր ճանապարհին անցկացնելուց յետոյ, երկրորդ օրը հասնում են Նախիջևան։ Ահա այդ միասին ճանապարհորդելու կարճ ժամանակամիջոցում, երբ Խալիբը բոլոր ժամանակ նըստած է լինում կաթուղիկոսի կառքում, վճռուում է ամեն բան—և Տէր-Գաբրիէլի տեղափոխուելը Թիֆլիզ, և Տէր-Մարտիրոսի նախանգամ լինելը հոգևոր կառավարութեան, և Եկանեանի վարժապետ կարգուելը հոգևորականներին, և առաջնորդական գործակատարութեան պաշտօնի և եկեղեցական գումարների Խալիբին յանձնուելը, և այլն և այլն։

Բազմամբոխ և շքեղ ընդունելութիւն է լինում, և կաթուղիկոսը մտնում է Ս. Լուսաւորիչ, որտեղից դուրս էր եկել նա 1828 թուի օգոստոսի վերջին առաւօտեան։ Սովորական, «Ուրախ լեր, սուրբ եկեղեցի» երգից յետոյ, վեհափառը դառնում է դէպի ժողովուրդը և քարոզում սէր և խաղաղութիւն ամենի հետ և մանաւանդ ռուսների հետ։ Պատկանեանցը նորա քարոզի բովանդակութիւնը իսկոյն մի նամակով հաղորդում է Թիֆլիզ իւր եղբօրը Միքայէլ Պատկանեանցին։ Իշևան է պատրաստուած լինում կաթուղիկոսի համար «Զէնդին» կոչուած Կարապետի տանը, որտեղ հէնց նոյն օրն էլ լինում է մեծածախ ճաշկերոյթ։ Այդ ճաշկերոյթին ներկայ չեն գտնուում միայն Խռմաչեանն ու Պատկանեանցը, որ նկատում է և կաթողիկոսն ու ասում, թէ Տէր-Գաբրիէլն ու Խռմաչեանը, երևի, գլուխ գլխի են տուել, որ փարատեն իւրեանց տրտմութիւնը։

Միւս օրը կաթուղիկոսի հրամանով ատեան է կազմուում և Պատկանեանցը առաւօտեան ժամը 10-ին կոչուում է դատի, որ պիտի լինէր քաղաքի բոլոր մեծամեծների ներկայութեամբ և հատուցանէր «նորա արածների արժանի վարձատրութիւնը»։ Նա գնում է ժամը 9-ին և տեսնում է, որ ամեն բան արդէն պատրաստ է դատի համար. նստած է Տէր-Խաչատուր Սեթեան քահանան և նորա աջ ու ձախ կողմը քաղաքի մեծամեծները,

կաթուղիկոսը բազմած է ոսկեզօծ գահոյքի վերայ առանձին և նորա առաջ դրուած է մի սեղան՝ վերան քօղածածկ խաչ ու աւետարան, վեհափառի յետևը կանգնած են հոգևոր կառավարութեան անդամները, որոնց հետ շշնջելով խօսում են Տէր-Մարտիրոս քահանան և Թադէոս վարդապետը, իսկ Սարգիս Տուֆլիկեանը, Տէր-Մարտիրոսի փեսան, անդադար գնում, գալիս է, պատգամներ է բերում Խալիբին և պատասխան տանում նորանից։

Տէր-Գաբրիէլը որոշեալ ժամին մտնում է ատեան և ուղղակի գնում, առնում է կաթուղիկոսի տէրը, նոյն րոպէին էլ Տէր-Մարտիրոսը քաշում, հանում է քօղը խաչի ու աւետարանի վերայից, որ նշան էր, թէ ատեանը բացուած է և դասը սկսուած։ Կաթուղիկոսը «ի՞նչ է այս աչը, որ դու այժմ համբուրեցիր» հարցմունքը նորան տալուց ու պատասխանը լսելուց յետոյ, սկսում է մի առ մի թուել նորա կատարած յանցանքները,—թէ նա Ս. Համբարձման եկեղեցուց գողացել է կենաց փայտի խաչը, թէ նա նախընտրաբար համակրութիւն է ցոյց տալիս Տէր-Սիմէօնեան Տէր-Գաբրիէլին և Յոհանեան տիրացու Ստեփանին և ատում միւս քահանաներին, թէ նա խռովել է Խաչատուր Խռմաչեանից և այնպէս հեռացել նորանից, որ նորա գործակատարութիւնը միանգամայն անպէտք է եղել առաջնորդութեան, թէ նա սանձակոտոր ու ամեհի նեղսիրտ է, թէ նա քաղաքի մէջ ոչ մի բարեկամ չունի, թէ նա գրել է իւր, առաջնորդի մասին Ս. Էջմիածին Բարսեղ Կեսարացուն՝ «զիս պատուեալ էր օծութեամբ, չեթող ինչ ի չարեաց, զոր ոչ էած ի գլուխ իմ», թէ նա մեղադրել է Ալամդարեանցին, որ իբր թէ նա ուզեցել է փախչել Ս. Էջմիածին և եպիսկոպոս դառնալ, այն ինչ ինքը խնդրել է Կարապետ եպիսկոպոսից, որ նա իրան տեղ տայ Թիֆլիսում, թէ նա երբէք լուռ չի կենում, ինչպէս Թադէոս վարդապետը և միւսները, այլ միշտ պատասխանում է, որով և արդարացնում է Սոլոմոնի խօսքը՝ «այր անդգամ ի պատասխանիս է պատրաստ», թէ նա, ըստ ամենայնի, արժանի է «դև Գաբրիէլ» կոչման, որ տուել են նրան, և թէ, վերջապէս, ինքը շատ

զզջում է, որ նորան ձեռնադրել է քահանայ, և այլն և այլն։ Կաթուղիկոսը այդ բոլորը ասելու ժամանակ այնքան վրդովուած է լինում, որ չի կարողանում հանդիստ տեղը նստել. նա մերթ տեղից վեր է կենում ու շրջում սենեակում, մերթ մօտենում Տէր-Գաբրիէլին և ցնցում նորա վերարկուի թևը, մերթ էլ անհանգիստ նստում իւր գահոյքի վերայ։ Նա նամանաւանդ շատ բարկացած է լինում վերոյիշեալ «ի չարեաց» խօսքի վերայ. նա այդ առթիւ անպատար հարցմունքներ է ուղղում բազմականներին, թէ «իրաւունք է, որ իմ ձեռնադրած մարդն ինձ չարագործ կոչէ. իշխաններ և մեծամեծներ, ես չարագործ եմ. Տէր-Գաբրիէլ, ես չարագործ եմ»։ Դատը տևում է մինչև նաշ և ընդհատուում է նաշի պատճառով. վեհափառը սեղան է նստում և հրաւիրում է, որ ներկայ գտնուողներն էլ նստեն, բայց Պատկանեանցը չի մնում. նա գնում է տուն և վերադառնում է միայն նաշից յետոյ, երբ պիտի վերսկսուէր դատը։ Վեհափառը հարցնում է նորա չը մնալու ու սեղան չը նստելու պատճառը. նա պատասխանում է, թէ ինքը գնացել էր տուն, որ հաղորդէ իւր ընտանիքին, թէ վեհափառը միաք ունի իրան Թիֆլիս փոխադրելու։ Այս անգամ դատը երկար չի շարունակուում. մի քանի հարցմունք տալուց ու պատասխանը ստանալուց յետոյ, երբ նա տեսնում է, որ հրաւիրուածները ծանձրացել են, միմեանց ականջի խօսում են և ոմանք էլ դուրս են գալիս սենեակից, լուծում է ժողովը և արձակում ժողովրդին, խոստանալով միւս անգամ հրաւիրել, որ սակայն չի կատարում։

Ներսէս Նախիջևանում երեք կոնդակ է տալիս՝ մինը Մկրտիչ Եկանեանին, միւսը Տէր-Մարտիրոս Թորոսեանին և երրորդը Խալիբին։ Այդ կոնդակներով նա գրաւոր կերպով միայն վաւերացնում է, ինչ որ արդէն մասնաւոր և առանձնակի խօսակցութիւնների ու խորհրդակցութիւնների ժամանակ չափած, ձևած ու վերջացրած էր։ Եկանեանը կարգուել էր վարժապետ հոգևորականների վերայ, Տէր-Մարտիրոսը՝ հոգևոր կառավարութեան նախանդամ և Խալիբը—առաջնորդական գործակատար և ընդհանուր ինքնագլուխ տնօրէն բովանդակ եկեղեցական գոյքերի և փողերի, պատասխանատու միայն կաթուղիկոսի

առաջ։ Պատկանեանցի մասին արուելիք կարգադրութիւնը մի փոքր ուշանում է. թէև վեհափառը շատերին և մինչև իսկ իրան Պատկանեանցին էլ յայտնել էր իւր մտադրութիւնը նորան Թիֆլիզ տանելու, բայց իբրև վերջնական հրաման դեռ չէր յայտնուել նորան, որ ամենից շատ էր շտապում, վերջապէս, իւր վիճակը որոշուած տեսնել։ Վերջապէս, երբ Պատկանեանցը ստէպ-ստէպ սկսում է գնալ-գալ վեհարան և մի վերջնական պատասխան խնդրել, վեհափառը պատուիրում է անցագիր տալ նորան. «Դու ինձ պէտք ես Կովկասում, ասում է նա նորան. Ներսիսեան դպրոցը քեզ պիտի յանձնեմ, մեր ազգի այս կողմերում մնալը ամենամեծ վնասն է»։ Կաթողիկոսը քանի կիւրակէ որ մնում է Նախիջևանում, ամեն անգամ էլ եկեղեցի է գնում, բայց միայն երկու անգամ է քարոզ խօսում՝ մէկ գալիս, մէկն էլ գնալիս։ Նա կարգադրում է, որ աւետարան կարդալու ժամանակ վարդապետները վեղարը մի կողմը կախեն, պատարագիչները սաղաւարտը հանեն, թէև այդ բանի համար իբրև թէ նա Պատկանեանցին յանդիմանել էր Քիշինևում, ասելով, թէ այդ Յունաց ծէս է։ Արքայական տունը յիշատակելու ժամանակ հրամայում է կայսր բառի տեղ «իմպերատոր» դործածել, և ամեն մի խօսակցութեան սկիզբը քնարում է բնաբան առաքեալի խօսքը՝ «Հնազանդ լերուք ամենայն մարդկեղէն ստեղծուածոյ վասն Տեառն, եթէ թագաւորի՝ իբրև առաւել ումեք»։

Անցագիր ստանալուց յետոյ, Պատկանեանցը սկսում է տեղափոխուելու պատրաստութիւն տեսնել. նա ամուսնացնում է իւր Մարիամ դուստրը Մարկոս աղայի որդու Մկրտչի հետ և մնում է միայն Վասվառէ և Սոփիա աղջիկներով։ 1846-ի ծննդեան օրը ժամարար է լինում, քարոզ խօսում, հրաժարականի ողջոյն տալիս և տնօրհնէք մաղ դալիս, բայց ոչ ոքի չի յայտնում իւր ճանապարհ դուրս գալու օրն ու ժամը։ Յունուարի 20-ին լուսաբացից առաջ նա ճանապարհ է ընկնում. նորան ուղեկցում են Մարկոս աղան, Յուսիկ Կուսիկեանը և Միքայէլ Նալբանդեանը, մինչև որ հասնում են առաջին իջևանը, որտեղ պիտի փոխէին ձիերը։ Այստեղ վերջին

հրաժեշտ են տալիս միմեանց բարեկամները, և Պատկանեանցը դիմում է դէպի Ստաւրապոլ։ 1846 թուի փետրուարին նա դժուարութեամբ անցնելով Կովկասի սառցապատ լեռները, հասնում է Թիֆլիս և մնում այնտեղ անգործ համարեա թէ երեք տարի։ Կաթուղիկոսը այդ բոլոր ժամանակը թողնում է նորան անպաշտպան, անդադար յետաձգելով Ներսիսեան դրպրոցում պաշտօն տալը նորան և փորձելու համար ծածուկ կարդելով նորա վերայ հսկողներ, որ իմանայ, թէ նա ի՞նչ է անում և ո՞ւմ հետ է բարեկամութիւն կապում։ Մինչև անգամ երբ ուսումնարանական շրջանի հոգաբարձու Սիմէօնովը այդ միջոցում խնդրում է կաթողիկոսին, որ նա թոյլ տայ Պատկանեանցին ճեմարանում և նահանգական վարժարանում կրօնուսոյց լինել, նա մերժում է, ասելով, որ նա իրան էլ հարկաւոր է, իսկ այն պաշտօնները տալիս է ճեմարանինը՝ Տէր-Սահակ Սահառունուն 700 ռուբլի ռոճիկով, նահանգականինը՝ Տէր-Սահակ Զիալեանին 350 ռուբլի ռոճիկով։ Այդ հանգամանքներում Պատկանեանցը ստիպուած է լինում ապրուստ հայթայթելու համար բաց անել մի դիշերօթիկ մասնաւոր վարժարան հայ, ռուս, վրացի և ֆրանսերէն լեզուների դասաւանութեամբ. դորա հետ միասին նա մի փոքր յետոյ, 1850-ին, բաց է անում և մի տպարան և սկսում է հրատարակել «Արարատ» շաբաթաթերթը։ Վեհափառը հաւանում է «Արարատ»-ի տպագրութիւնը, տառերը և գովում է նորա եռանդը և նոյն 1849 թուի վերջին և 50-ի սկզբին կարգում է նորան դասապլուխ և ժամօրհնող Ս. Աստուածածին Նորաշէն եկեղեցում, որտեղ նորան շատ նեղութիւն են տալիս Տէր-Դաւիթ քահանան և մի տիրացու, որոնցից առաջինը իւր խռովարարութեան համար արտաքսուած էր Վանքի եկեղեցուց, երկրորդը նոյն պատճառով հալածուած Բեթղեհէմից։

Իշխան Արղութեան Իվանէ Զաքարիայի խորհրդով, վերջապէս, կաթուղիկոսը յանձնում է Պատկանեանցին այն պաշտօնը, որի համար իսկապէս տարել էր նորան—Ներսիսեան դպրանոցի տեսչութիւնը. նա ստիպուած է լինում այդ պատճառով փակել իւր դպրոցը, որովհետև դժուար էր միաժամա-

նակ երկու տեղ էլ պաշտօն փարել, նամանաւանդ որ կաթուղիկոսը գանգատուում էր, որ Նորա մասնաւոր դպրոցն արգելք է լինում Նորան բոլորովին նուիրուել «ազգային հոգևոր դրպրոցին». նա մինչև իսկ անբաւական էր, որ նա խմբագրում էր «Արարատ»-ը և սորան-Նորան ասում էր, թէ նա աւելի զբաղուած է «Արարատ»-ի սրբագրութեամբ, քան թէ դպրոցի գործերով։ Ահա՛ հէնց այդ ժամանակ հասնում է Խալիբի միջնորդութիւնը՝ Պատկանեանցին վերադարձնելու Նախիջևան, որ վեհափառը շտապում է իսկոյն կատարել, կարծես թէ ուրախանալով, որ կարող է այդպիսով ազատուել Նորանից, նա խոստանում է տալ Նորան խաչ, փիլոն և կամիլաւկայ և յորդորում է Կարապետ եպիսկոպոսին այդ մասին միջնորդութիւն յարուցանելու։ իւր առաջ և արդէն իսկ այդ մտքով կոնդակ էլ է պատրաստում, բայց յանկարծ փոխում է իւր միտքը և անցագիր տալով, արձակում Նորան։ Պատկանեանցը, նախ, գնում է Կովկասի հանքային ջրերը տեսնելու իւր Մկրտիչ փեսային, որ հէնց այդ ժամանակ եկել էր ջրերը բժշկուելու ոանտուութիւնից, և յետոյ Նախիջևան, որտեղ Նորան սպասում էր Մատթէոս Վեհապետեանը և որտեղ դորանից արդէն քանի ժամանակ առաջ սկսուել ու շարունակուում էր եկեղեցական գումարների հաշուեառութեան և առաջնորդի իրաւասութեան յայտնի խնդիրը երկու կուսակցութեան մէջ՝ Խալիբեան և Հայրապետեան։

Պատկանեանցը մտնում է Նախիջևան 1851 թուի յունիսին և յուլիսի 1-ին կարգուում է նախանդամ հոգևոր կառավարութեան, բարեկարգիչ բոլոր եկեղեցիների և ժամօրհնող տաղ եկեղեցու։ Նորա բացակայութեան հինգ տարուայ ընթացքում մեծամեծ փոփոխութիւններ էին եղել Նախիջևանում։ Ճիշդ է, քաղաքի կառավարութեան ձևը, եղանակը և բնաւորութիւնը միևնոյնն էր մնացել, որովհետև չորս եռամեակ յաջորդաբար վերընտրուել էր քաղաքագլուխ Խալիբը, բայց Պատկանեանցի տեղ յառաջ էին եկել Նորա դէմ նոր կռուող ոյժեր՝ Վեհապետեան Մատթէոս առաջնորդը, Միքայել Նալբանդեանցը և Հայրապետեանը և կազմակերպուել ու ամրա-

պնդուել էր հակախալիբեան կուսակցութիւնը— Հայրապետեան։ Մատթէոսը ձեռնադրուած էր Կարբեցուց և աւագ դանձապահ էր եղել Ս. Էջմիածնում, յետոյ նա կարգուել էր Շամախու առաջնորդ և, վերջապէս, ուղարկուել էր վիճակաւորի պաշտօնով Նոր-Նախիջևանի և Բեսսարաբիոյ թեմը։ Նա տեսնելով, որ իւր առաջնորդական իշխանութեան իրաւունքների մի մասը Խալիբի ձեռքին է, ներքին գործոց նախարարութեան ձեռքով սկսել էր յետ պահանջել, յարուցանելով մի և նոյն ժամանակ եկեղեցական գումարների հաշուետուութեան խնդիրը. նա նոյնպէս նկատելով, որ իւր ձեռնասուն աշակերտ Յովհաննէս վարդապետ Բէկնազարևանցը Խալիբի կողմն է պահում, ուղարկել էր նորան Ղրիմ, որ Ներսէսի ժամանակ կառավարում էր Թադէոս վարդապետը, իսկ Եփրեմի և Գառնակերեանի ժամանակները—Գիւմուշխանցին, և Տէր-Մարտիրոսի ձեռքից խլել էր բոլոր պաշտօնները, որ տուել էր նորան կաթողիկոսը, և միայն թողել էր նորան աւագ քահանայ Ս. Աստուածածին եկեղեցու։ Նա իւր անձնական քարտուղարութեան պաշտօնը տուել էր Միքայել Նալբանդեանցին և ինքը մերթ Քիշինևում նստելով, մերթ Նախիջևանում, մերթ էլ մայրաքաղաքներում, ձեռնարկել էր կառավարելու թեմը։ Նալբանդեանցը, որ լաւ ժանօթ էր անցեալին, եկեղեցական գումարների հետ միասին սկսել էր պահանջել առաջնորդի ձեռքով և խօնախը, որ Մարկոս ազան ենթարկել էր Տաղանրօգի դիրեկցիայի իշխանութեան, բայց Խալիբը դպրոցը առաջնորդի ձեռքից ազատելու համար։ 1850 թուին ծխականից նահանգական վարժարանի էր վերածել տուել «վեհագոյն հասատեալ Նախիջևանի նահանգական վարժարան անունով և ինքը կարգուել վերատեսուչ։ Այս բոլորը կատարուել էր 1849—50 թուերին Մատթէոսի առաջնորդ նշանակուելու առաջին և երկրորդ տարին, Պատկանեանցի Նախիջևան վերադառնալուց 1—2 տարի առաջ։

Պատկանեանցի Տէր-Մարտիրոսի տեղը նշանակուելը արդէն բաւական է լինում նորից զինելու նորա դէմ Խալիբին և նորա կուսակիցներին, որոնց թշնամութիւնը դէպի նա, կար-

ձեռ թէ, նորա հեռանալովը սառել և կորցրել էր իւր սրութիւնը։ Ինքը Պատկանեանցն էլ չի ունենում այնպիսի բնաւորութիւն, որ կարողանայ, գոնէ, մի առ ժամանակ հեռու մընալ կուսակցական կռիւներից. նա Նախիջևան ժամանելուն պէս, իսկոյն և եթ յարում է առաջնորդական կամ Հայրապետական կուսակցութեան, անմիջապէս խառնուում է գործերի մէջ և սկսում է ներգործող դեր խաղալ։ Եւ ուրիշ կերպ լինել էլ չէր կարող, քանի որ, կարելի է ասել, իրրև բողոքող բնաւորութիւն, նա էր հիմք դրել այդ կուսակցութեան։ Ճիշդ է, այն ժամանակները, Պատկանեանցի Թիֆլիս գնալուց առաջ, դեռ էր կային եկեղեցական գումարների և առաջնորդի իրաւասութեան կարևոր խնդիրները, բայց կային մանր-մունր քիչ թէ շատ կարևոր խնդիրներ, որոնք առիթ էին տալիս մեծերի և հզօրների գործողութիւններից գժգոհներին երբեմն ծայն բարձրացնելու նոցա դէմ։ Ահա այդ գժգոհների պարագլուխ այն ժամանակները միշտ համարեա հանդիսանում էր Պատկանեանցը, ինքը համարեա թէ իւր վերայ ընդունելով հզօր հակառակորդների բոլոր հարուածները, ինքը բոլորի տեղ տուժելով, որովհետև վճռական բոպէներին այդ գժգոհները, այդ խուլ ու անհամարձակ կերպով բողոքողները մենակ ու անօգնական էին թողնում նորան և մինչև իսկ թշնամանում էին նորա հետ և, գոնէ, երեսանց անցնում էին զօրաւորների կողմը։ Այժմ, երբ որ հանգամանքները այդպէս փոխուել էին, երբ բողոքողները ունէին կողմնակից և պաշտպան այնպիսի մարդիկ, ինչպէս Մատթէոս առաջնորդը, Հայրապետեանը և Նալբանդեանցը, Պատկանեանցը չը պէտք է կարողանար անկասկած հոգով սրտով չմիանալ նոցա հետ և ձեռքերը ծալած նստել։ Նա, ճիշդ է, այժմ էլ գործ է դնում իւր նախկին մաքառելու եղանակը, աշխատելով ամեն տեսակ հաշտեցնել Խալիբին Մատթէոսի հետ ինչպէս մի ժամանակ նա աշխատում էր հաշտեցնել նոյն Խալիբին Ներսէսի հետ, բայց երբ այդ չի յաջողում, նա չի դադարում, որքան ոյժ ունէր ու կարողութիւն, հարուածելու նորան ու նորա կուսակիցներին, որով և նորից վերանորոգում է իւր հակառակորդների դաղափարած ատելութիւնը դէպի

ինքը և հետզհետէ ևս առաւել սրում իւր յարաբերութիւնը նոցա հետ։

Նոյն 1851 թուի օգոստոսի 1-ին առաջնորդը Պատկանեանցին իւր հետ առնելով, տանում է Ղրիմ Վօրոնցովի որդու հարսանիքին, որտեղից նա, Պատկանեանցը, վերադառնում է հոկտեմբերին Աղաթօն Դաւթեան Հաքիմեանի հետ, որ եկել էր Ղրիմ առաջնորդի մօտ հրաման ստանալու՝ պսակել Խաչատուր աղա Լաղարեանի երկաւ աղջկան երկու քեռորդու՝ Յովհաննէս Դաւթեան Դիլանեանի և Սիմէօն Դաւթեան Աբամելիքեանի հետ։ Այս անգամ Նախիջևանում Պատկանեանցը զբաղում է Սարգիս վարդապետ Ջալալեանին Մկրտիչ վարժապետ Եկանեանի տանը, որին և բերում է իւր տունը ճաշի, հրաւիրելով և Աղաթօնին և դորա քեռորդի Փոնդոյեանին ու քաղաքի մեծամեծներին։ Սարգիս վարդապետն եկել էր Նախիջևան իբրև քննիչ վիճակի և ծանօթացել էր քահանաների դէպի Պատկանեանցը ունեցած թշնամական յարաբերութեան, նամանաւանդ Մատթէոսից նոր միայն ձեռնադրուած Տէր-Եղիա Տէր-Աստուածատրեան Շապոշնիկեանի յարաբերութեան, որ ամբաստանել էր Պատկանեանցին նախարարութեան առաջ նորա կայսերական տօների ցուցակը օրացոյցում սխալ տպագրելու համար։ Այդ սխալը պատահել էր, որովհետև ինքը Պատկանեանցը լուր առնելով իւր փեսայի հիւանդութեան մասին, շտապել էր դուրս գալ Թիֆլիսից և նոր օրացոյցի մէջ, որ տպուում էր նորա տպարանում, մտել էր հին օրացոյցի կայսերական տօների ցուցակը։ Նախարարութիւնն այդ ամբաստանութիւնը ուղարկում է վեհափառին, նա էլ տալիս է Սինոդին, որ անմիջապէս, զանց առնելով առաջնորդին, կրկին հրովարտակով, արձակուած 1851 թուի դեկտեմբերի 31-ին և 1852-ի յուլիսին, ուղղակի զրկում է Պատկանեանցին քահանայագործութիւնից։

Գլուխ Ժ.

Այս դրութեան մէջ Պատկանեանցը մնում է մինչև 1852 թուի օգոստոսը, երբ, իւր պատմելով, սկսում է նիւթեր հա-

ւաքել մի ընդարձակ բողոքագիր պատրաստելու համար, որ նա միաքը դրած է լինում ուղարկելու Ս. Էջմիածնի Սիւնհոդոսին և վեհափառ կաթուղիկոսին: Բայց որովհետև նա ռուսերէն և օրէնքները լաւ չէր իմանում, այդ պատճառով էլ սկսում է որոնել մի օրէնսգէտ մարդ, որ իւր պատրաստած նիւթերից կարողանար, օրէնքի հիման վերայ և ռուսերէն, պատրաստել բողոքագիրը: Ռոստովում հէնց այդ ժամանակներն ապրում էր մի ատիճանաւոր Կորչևսկի ազգանունով, որ հռչակուած էր իբրև հմուտ օրէնսգէտ և խնդիր դրող. նա դիմում է նորան, բայց այդ վերջինը ոչ-սոսկ պատճառներ մէջ բերելով, հրաժարուում է: Այնու ամենայնիւ նա աչքի է անցկացնում նորա թղթերը և ասում է, թէ դոքա, այդ փաստաթղթերը, այնքան դժուար են և պարունակում են իւրեանց մէջ այնպիսի ծանրակշիռ փաստեր ու ապացոյցներ, որ բաւական են սպանելու ոչ միայն Ներսէսին, այլ և Խալիբին, որից և քսակի մէջ իբրև թէ տարածուում է մի դրոյց, թէ Պատկանեանցը միաքը դրել է սպանել Խալիբին:

Շուտով սակայն յիշեալ Կորչևսկին տեղափոխուում է Չերկասկ քաղաքը և վերանում են այն պատճառաբանութիւնները, որ նա բերում է եղել բողոքագիր պատրաստելու դէմ: Պատկանեանցը իմանալով, որ այդ օրէնսգէտ ատիճանաւորի հետ լաւ ծանօթ ու բարեկամ է Նախիջևանցի Կարապետ Իսմայիլցեանը, կոչում է նորան իւր մօտ և խնդրում է, որ նա միջնորդ հանդիսանայ իւր և Կորչևսկու մէջ և համոզէ նորան յանձն առնելու խնդրագրի պատրաստելը: Իսմայիլցեանը խօսք է տալիս և մի քանի օրից յայտնում է, թէ Կորչևսկին յօժարացել է և այդ գործում օգնել է իրան Նախիջևանցի Խաչատուր Թերզիեանը: Սորա վերայ անցնում է այլ ևս մի քանի օր և Իսմայիլցեանը բերում է Պատկանեանցին մի տոմսակ, որ իբրև թէ Կորչևսկին գրել էր իրան, թէ որովհետև ես ձեր խնդիրքով յանձն առայ գրելու Պատկանեանցի բողոքագիրը, ուստի և խնդրում եմ, որ առնէք նորանից 20 ռուբլի և հասցնէք ինձ այս գրաբերիս ձեռքով, որ հէնց դորա համար ուղարկում եմ: Սորանից յետոյ մի քանի անգամ էլ կրկնուում է նոյն պատ-

մութիւնը և Պատկանեանցը իբրև թէ Իսմայիլցեանի և դրաբերի ձեռքով ուղարկում է Կորչևսկուն մաս-մաս դանդաղ քանակութեամբ դումարներ՝ առաջ 20 ռուբլի, յետոյ 13 և 30 և այլն։ Օգոստոսի 9-ին, վերջապէս Իսմայիլցեանը բերում է հինգերորդ ամսակը, որի մէջ Կորչևսկին գրում էր նորան, որ նա առնէ Տէր-Գաբրիէլից 75 ռուբլի և շուտով հասցնէ իւր ձեռքը։ Պատկանեանցը իբրև թէ չը կամենալով դայրացնել նորան, համաձայնում է տալ 50 ռուբլի, միայն որ կամենում է առաջ տեսնել գրաբերին։

Օգոստոսի 10-ին, կէսօրին, գալիս է նորա մօտ Իսմայիլցեանը և ասում, թէ եթէ դու ուզում ես տեսնել Կորչևսկու ուղարկած մարդուն և անձամբ յանձնել նորան փողը, պէտք է այսօր երեկոյեան ժամը 9-ին դուրս դաս քաղաքից դուրս, որտեղ դանուում են Փանոսի հողմաղացները. այնտեղից պիտի անցնի դրաբերը, գնալով Ռոստովից Չերկասկ։ Երեկոյեան նշանակուած ժամին Պատկանեանցը գնում է Իսմայիլցեանի տունը, որտեղ դտնում է և Թերզիեանին, և նոքա հաւատացնում են նորան, թէ Կորչևսկու մարդը դեռ չի վերադարձած լինի Ռոստովից և մի ժամից առաջ չի վերադառնալ։ Նա նոցա յայտնում է, թէ որտեղ կարող են դտնել իրան, և գնում է, չը կամենալով երկար մնալ նոցա մօտ և սպասել։ Ժամը 10-ին գալիս է Իսմայիլցեանը և միասին գնում են նշանակուած տեղը։ Երբ որ նոքա հասնում են հողմաղացների առաջ դտնուած տափարակը, չեն դտնում այնտեղ Կորչևսկու մարդուն։ Իսմայիլցեանը հեռուից ցոյց տալով նորան այս կամ այն բանը, ասում է, թէ նա ահա այստեղ է կամ այնտեղ է, և այսպիսով խաբխաբելով, կամաց-կամաց հեռացնում է նորան քաղաքից և հասցնում է մի տեղ, որտեղ Պատկանեանցը զարմանքով տեսնում է իւր առաջ երեք ձ/աւոր Թերզիեանի հետ։ Իսմայիլցեանը և Թերզիեանցը ցոյց տալով նորան ձիաւորներից մէկին, ասում են, թէ ահա՛ հէնց սա՛ է Կորչևսկու մարդը, իսկ միւս երկուսը նորա ուղեկիցներն են։ Նա իսկոյն հանելով տալիս է նորան 50 ռուբլի և ասում է, թէ Կորչևսկին թո՛ղ առ ժամանակ շատանայ սորանից, իսկ երբ վերջացնէ աղերսագիրս,

կրստանայ այլ ևս 150 ռուբլի։ Այս ասելուց յետոյ, երբ նա ուզում է կառք նստել ու տուն վերադառնալ, ծիաւորներից մէկը, որ ծպտեալ ժանդարմ է լինում, բռնում է նորա օձիքից և սկսում է որոտալով կանչել՝ դարաշ՞լ, դարաշ՞լ։ Այս աղաղակի վերայ իսկոյն դուրս են թափուում դարանամուտները — Խալիբը, դասաւոր Զէյթունեանը, սարեապչի Սիմեոնովը, ժանդարմների պետ բառօն Կլէյստը և ուրիշ ծպտեալ ժանդարմներ, որոնք բռնելով ու նեղը ծգելով նորան, ապաստակում էին, թէ նա կամենում էր կաշառել մեզ, ինչպէս սրիկաների, Խալիբին սպանելու համար։ Բոլորեքեան շրջապատելով նորան, հայհոյում են, սպառնում են, ուշ չդնելով նորա ապաչանքներին, նորա, որ կամենում էր յայտնել ճշմարտութիւնը։ Բերում են իսկոյն Տէր-Մարտիրոս Թորոսեանին և Տէր-Պօղոս Խաչեանին, որոնց իբրև թէ նախապէս հրաւիրել էին և նախապատրաստել, և խնդրում են, որ դոքա էլ, իբրև Հոգևոր կառավարութեան անդամներ, վկայ լինեն գործին։ Քահանաներից Տէր-Մարտիրոսը, առանց լսելու նորա պատասխանը, սկսում է, ի միջի այլոց, չարաչար նախատել նորան և անպատուել, որով և հանում է իւր վրէժը ու ոխը, որ վաղուց ի վեր պահում էր իւր սրտում։

Դաշտից տանում են նորան Մադիսարատ, դիշերուայ ժամը 11-ին կաղմում են տանեան, շատ համառօտ ցուցմունքներ են առնում նորանից, չեն գրում նորա պատասխանների մինչև իսկ տասերորդ մասը, խլում են նորա ձեռքից 50 ռուբլի փողը, ակնոցը, տէրոդորմեան, ձեռնոցները, սանրը և բանտարկում են իբրև մահապարտի, յանցանքի տեղում բռնուած։ Այդտեղ Տէր-Պօղոսը, ի միջի այլոց, ի հաճոյս Տէր-Մարտիրոսի, կոչում է նորան «Ցուլա, բաժանուած առաքեալներից»։ Ցետոյ միայն իմանում է նա, որ, բանտարկելուց յետոյ, նոքա կազմել են սուտ արձանագրութիւն, որպէս թէ նա հէնց այնտեղ, դաշտում, խոստովանել է իւր մեղքը, որ գործած չէր, և այդ հիման վերայ յայտարարութիւն են ուղարկել Տաղանրոգի քաղաքապետ իշխան Լիվէնին և հրաման բերել պահելու նորան բանտում։ Բանտարկութեան յաջորդ օրը, օգոստոսի 11-ին, նա

խնդրում է, որ թոյլ տան իրան խնդիր գրելու թեմական առաջնորդ Մատթէոս արքեպիսկոպոսին, բայց չի ստանում այդ թոյլտուութիւնը, և նոյն ամսի 14-ին միայն տանում են նորան Մագիստրատի ոստիկանութեան կողմը և իրաւունք են տալիս այնտեղ գրելու, և այն միայն ռուսերէն և մի ժամուայ մէջ։ Սորա վերայ 10 օր անցնելուց յետոյ, երբ լսում են, թէ պէտք է գայ Տաղանրոգի նոր քաղաքապետ կամերհեր կոմս Աղլերբերգը, միւս անգամ ևս, օգոստոսի 24-ին, հանում են նորան բանտից ճաշի ժամանակ, և նա հազիւ հազ կարողանում է կարդալ և սրբագրել իւր աղերսագիրը։ Օգոստոսի 25-ին նա գրում է խնդիր արդարադատութեան նախարարին, 27-ին ժանդարմների շէֆին, սեպտեմբերի 3-ին նոր քաղաքապետին և սեպտեմբերի 5-ին Բեսսարաբիոյ և Նոր-Ռուսիոյ ընդհանրական նահանգապետ Ֆեոդորովին։ Սեպտեմբերի 25-ին նա ստանում է իւր խնդրագրի պատասխանը քաղաքապետից, թէ մեղադրեալի խնդիրն ուղարկուած է քննչին, իսկ երիցուհուն, որ նոյնպէս աղերսել և խնդիր էր գրել իւր ամուսնու համար, Տաղանրոգից պատասխան է դալիս, թէ նորա խնդիրքը թողնուած է անհետևանք, որովհետև քահանան բռնուած է հէնց յանցանքի տեղում և ինքն էլ հէնց տեղնուտեղը խոստովանել է իւր մեղքը, որի համար և պէտք է ենթարկուի քրէական դատի և պատժուի ըստ օրինաց։

Արդարադատութեան նախարարին և ժանդարմների շէֆին դրած իւր խնդիրներում նա աղերսում էր հրամայել իրան գրնալ Պետերբուրգ և այնտեղ կայսեր առաջ արդարանալ, մաքրուել և պահանջել արիտուր կաթուղիկոսից նորա երեսից կրած իւր 33-ամեայ հալածանքի համար. իսկ առաջնորդից խնդրում էր միջնորդել նորա համար նահանգապետ Ֆեոդորովի առաջ, որպէս զի ինքը կարողանայ ազատուել բանտից և ուղևորուել Պետերբուրգ իւր իրաւունքները պաշտպանելու համար, յիշելով միանգամայն, որ ինքը ոչ մի շահ և օգուտ չի ունեցել և չէր էլ կարող ունենալ Խալիբին սպանելուց, քանի որ ինքը նորա տեղ քաղաքադլուխ լինելու չէր, նորա հարբասութիւնը ժառանգելու չէր, նամանաւանդ որ ինքը միտք էլ

չունէր Նախիջևանում մնալու, այլ ծգտում էր տեղափոխուել Մոսկուա։ Իւր ասելով, նա ինքը երբէք թշնամի եղած չէ Խալիբին. նա, ընդհակառակը, միշտ աշխատել է ծեռքից եկած լաւութիւնը անել նորան և Ղրիմում, ինչպէս յիշում կըլինի և առաջնորդը, ծգտել է իրան սրբազանին հաշտեցնելու նորա հետ։ Բայց Խալիբը կասկածաւոր մարդ է՝ նա կարծել է, որ սրբազանը թուղթ է գրել նախարարին նորա մասին իւր, Պատկանեանցի, խորհրդով ու յորդորելովը, որ կամեցել է այդ հանապարհով վրէժխնդիր լինել նորանից։ Նա մինչև իսկ միաքը դրած է եղել դիմել իշխան Լիվէնին, որ նա համոզէ Խալիբին, միջնորդելու կաթուղիկոսի առաջ քահանայապետութեան իրաւունքը վերադարձնելու իրան։ Սակայն ամենքն իւր դէմ են, որովհետև կաշառուած են Խալիբից՝ սկսած քաղաքապետից, բառօն Կէյստից, Կորչևսկուց և մինչև դլխաւորներից և վերջացրած Թերզիեանով, որ բանտարկուած լինելով Յովհաննէս Տուֆլիկովին ազատանակահար անելու փորձի համար, անպատուել էր Մագիստրատը, հայհոյելով և սպառնալով ծեծել դատաւորներին, եթէ միայն նոքա չեն ազատել իրան բանտից ու պատժից, և այլն և այլն։

Խալիբի աշխատանքով շուտով նորան փոխադրում են Ռոստովի բանտը, որտեղ և նա մնում է մինչև դործի վերջանալը—1853 թուի օգոստոսի 10-ից մինչև 1860 թուի մարտի վերջը։ Թէև նորա կեանքը բանտում շատ էլ մեծ խստութիւններով շրջապատուած չի լինում և նորա բարեկամներն ու ծանօթները համարեա թէ անարգել մուտք ու ելք են ունենում նորա խուցը և մխիթարում են նորան, բայց երկարատև մենակութիւնը, ընտանիքից զրկուած մնալը և կեանքի սովորական սարք ու կարգից ու ազատ գործունէութիւնից կտրուած լինելը շատ ճնշող ներդործութիւն են ունենում նորա վերայ. նորա միակ մխիթարութիւնը այդ դժուար օրերում լինում է իւր մտերիմների ու սիրելիների երբեմնական այցելութիւնները և դլխաւորապէս դրական պարապմունքը։ Մտաւոր աշխատանքով պարապելը, կարդալը և գրելը միշտ նորա սիրելի զբաղմունքն էին եղել, բայց ազատութեան մէջ իւր սովորական

կեանքում քահանայութիւնը, վարժապետութիւնը և հասարակաց գործունէութիւնը խլում էին նորա ժամանակի մեծ մասը և արդելք էին լինում նորան լիովին անձնատուր լինելու իւր սիրած գործին։ Սակայն այժմ երբ այլ ևս այդ բոլորը չէրկային, երբ, ընդհակառակը, մի զբաղմունք պէտք էր նորան, որ կարճացնէր նորա դառն օրերը, որ արդելք լինէր նորան իսպառ անձնատուր լինելու ծանր խոհերի և մաշող մտածմունքների, որ, վերջապէս, անօգուտ չանցնէին նորա կեանքի այդ արբուն հատակի տարիները, նա բոլորտման նուիրուում է գրական զբաղմունքի։ Եւ առատ ու բեղմնաւոր են լինում նորա այդ վաստակի պտուղները. նա միայն 1854 տարուայ ընթացքում գրում է եօթ պատմական բանաստեղծական գրուածք—«Հայկերգ», «Արամ-երգ», Նաւարշ Ա, և վարդենի», «Առնակ», «Կար», Սօսիք Արագածոտան» և «Վաշտակ»։ Սորանից միայն Սօսիք Արագածոտան-ը արձակ վէպ է և գրած է գրաբառ, մնացեալ վեցը բոլորն էլ գրուած են աշխարհաբառ ոտանաւորով և շատ ընդարձակ բաներ են։ Առաջին երկուսը—Հայկերգը և Արամ-երգը—նա շատ վաղուց արդէն միտք էր դրել գրելու և սկսել էր նիւթեր հաւաքել թէ Հաշտարխանում և թէ Նախիջևանում—ժողովրդի բերանում պահուած զանազան զրոյցներ և աւանդութիւններ, բայց դորան արդելք էր եղել, նախ, ժամանակի սղութիւնը, երկրորդ, նորա հայրը։ Մենք միջոց չենք ունեցել կարդալու այդ գրուածները և նորա միւս բազմաթիւ մինչև ցայսօր անտիպ մնացած պատմական, բանաստեղծական, գրական և կրօնական երկերը, բայց ի նկատի առնելով, որ Սերովբէ վարժապետը յատկապէս արդելք է հանդիսացել այդ երկու երկի գրուելուն, կարելի է եզրակացնել, որ նոցա մէջ կան ակնարկութիւններ այն ժամանակուայ հայ կեանքի նամանաւանդ Հաշտարխանի և Նախիջևանի կեանքի զանազան երևոյթների և նոցա շրջապատող մարդկանց մասին, որոնց դրաւորապէս երևան գալը կարող էր պէտպէտ անախորժութիւնների դուռն բանալ նոցա համար։

Պատկանեանցի Ռոստովի բանտը փոխադրուելու հետ միասին փոխադրուում է Ռոստովի գաւառական դատարանը և

նորա գործը։ Նա մեղադրուում էր, բացի Խալիբի կեանքի դէմ սպանութեան փորձ անելու գլխաւոր յանցանքից, այլ և մի երկու-երեք փոքր յանցանքներում—Նախիջևանցի Զէօրէքչեանից 10 կեղծ թղթապրամ ստանալու գործում, բանտից փախչելու փորձ անելու գործում և կեղծ դրամ կարող Նիկոլայ Գոլուբնիցկուն իւր տանը պահելու և նորան թէ Նախիջևան Հայոց Մագիստրատի և թէ տէրութեան ծեռքից փախչել-ազատուելու միջոց տալու գործում։ Խալիբը իւր գործի համար դատարանին ներկայացնում է, բացի բառօն Կէյստի արձանագրութիւնից և ներկայ եղող անձանց գրաւոր վկայութիւններից, այլ և երկու գրաւոր փաստաթուղթ—Մարկոս աղայի 1832 թուին Պատկանեանց ընտանիքի մասին կազմած «բրիկաւորի» ռուսերէն թարգմանութիւնը և Տէր-Պետրոս Պատկանեանցի իւր եղբօրը Սուրբրոպոլից 1852 թուի հոկտեմբերի 9-ին գրած նամակը, որոնցից առաջինը բնորոշում է ընդհանրապէս Պատկանեանց տոհմի անհաշտ և խռովարար բնաւորութիւնը և մասնաւորապէս Տէր-Գաբրիէլի չարայոյզ ու խռովարար ընթացքը հասարակաց գործերում, իսկ երկրորդը նկարագրում էր նորա պատկերը ամենասև գոյներով իբրև եղբօր, իբրև հարազատի ընտանեկան գործերում։ «Դու մատաեա՛, ի միջի այլոց ասուած է այդ նամակում, զո քո չես խոցեալ օձախայթ լեղուաւդ. ի մանկութենէ քումմէ նախ զուսուցիչս քո, ապա զաշակերտակիցս քո, ապա զատենակալս քո, զերանելի ծերունի զյոհաննէս առաջնորդն. ապա զբոլոր հոգևորական ուխտն Աստրախանայ. դու չէիր պատճառն, որ բոլոր տամբ թողաք զաստրախան և եկաք ի Նախիջևան. չէիր դու պատճառն ապարաղդութեան ծերունի Տէր-Գաբրիէլի անուանակցի քում, դու չէիր պատճառ ցրելոյ եղբարց ի միմեանց. ի միտ բեր զի՞նչ արարեր ընդ ծնողս քո, քանի՞ցս մայր քո, որ ծնաւ զքեզ, արտասուեաց ի քէն, քանի՞ցս անգամ հայր մեր յանզգամ բանից քոց վիրաւորեալ, ուշաթափ անկաւ յերկիր կիսամեռ. ո՞չ ապաքէն նեղեալ ի քէն եղբայր մեր Գէորգ արբ զթոյն մահու. միայն ես տակացի քեզ, անուն և արիւն եղբայրութեան կապէին զիս ընդ քեզ... բայց ոչ ցանկամ զի որդիք

քո դնացեն ընդ ընթացից քոց. կարծեմ լաւ դիտես դի ճշմարիտն ասեմ, ապա թէ ոչ՝ հարց ցանցաւորս ի ճանապարհի և ցգիշերապահս Նախիջևանայ. զոր ինչ խօսեալ ես և կատարեալ դինէն, կարծեմ թէ դու առաւել յարմարիս, զի զոլով հրաժարեցուցեալ զքեզ յամենայն զործոց, կարծես թէ կամիս զայսպիսի զործս յառաջ տանել, զի ուսեալ զուցէ իցես յառաջին կաւատացքոց, զորս շատ ունիս, առ որս մարդեալ ես...»: (10):

Բացի վերոյիշեալ վաւերաթղթերից, որ Խալիբը ներկայացնում է մեղադրեալի դէմ պատարանին զործի քննութեան ժամանակ, 1853 թուի սեպտեմբերի 23-ին տալիս է քննչին հետևեալ զրաւոր ցուցմունքը. «Ճիշդ է, որ Թերզիեանը, երբ ես առաջին անդամ վերադարձայ, չեմ յիշում որ Թուին, Տաղանրոգից, յայտնեց ինձ Իսմայիլցեանի իրան հաղորդած լուրը, թէ Տէր-Գաբրիէլ քահանան միտքը դրել է ինձ սպանելու: Առաջին նուագ այդ լուրը ինձ անհաւատալի թուաց, որովհետև դժուար էր երևակայել ու կարծել, որ մի հոգևորական անձն միտքը դրած լինի ձեռնամուխ լինելու մի այդպիսի զարհուրելի ոճրագործութեան: Այնու ամենայնիւ ճշմարտութիւնը մերկացնելու նպատակով, ես յանձնեցի Թերզիեանին և Իսմայիլցեանին հարկաւոր և յարմարաւոր միջոցները զործադրելու: Այդ Թերզիեանը և Իսմայիլցեանը (որանց կողմից ինձ հաղորդեցին Պատկանեանց քահանայի յանցանքը երևան հանելու համար իրանց զործ դրած հնարները և զործողութիւնները: Դոքա դիջանելով քահանայի ազաչանքներին, երեսանց համաձայնում են դրտնելու մի աւազակ ինձ սպանելու համար և ներկայացնում են նորան մի կեղծ սրիկայ, որին Պատկանեանցը տալիս է առաջին անդամ 13 ռուբլի: Այս բոլորի մասին Թերզիեանը և Իսմայիլցեանը ինձ յայտնելով, աւելացրին, թէ Պատկանեանցը այնչափ հաստատապէս վճռել է զլուխ բերել իւր չարագործութիւնը, որ մինչև իսկ իրանց նորան նպաստելուց հրաժարուելու. դէպքում ևս նա չը պէտք է որ դադարի ուրիշ ճանապարհներով հասնելու իւր նպատակին: Ահա՛ հէնց այդ պատճառով յանցանքը հէնց տեղն ու տեղը մերկացնելու և իմ կեանքս պահպանելու համար, ես կողմեցի մի առանձին ծրա-

գիր, որ և հրամայեցի գործադրել ճշդութեամբ, նախապէս ազատելով բանից Թերզիեանին մի 7—10 օրով։ Պատուիրելով, որ նոքա շարունակեն խաղալ իւրեանց խաղը քահանայի հետ, ես գնացի Տագանրոգ և ինձամբ զեկուցի այդ մասին քաղաքապետ պ. Լիվէնին։ Նորին պայծառափայլութիւնը բարեհաճեց յանցանքը մերկացնելուն նպաստելու համար, ուղարկել Նախիջևան ժանդարմների պետ շտաբս-կապիտան բառօն Կէյստին երկու ժանդարմի հետ, և Պատկանեան քահանան օգոստոսի 10-ին դիշերը բռնուեց հէնց տեղն ու տեղը, ինչպէս որ այդ մանրամասնաբար գրուած է գործին կցած արձանագրութեան մէջ։ Պատկանեանցի Նախիջևանում ապրելու երկար տարիների ընթացքում ես երբէք նորան չեմ հալածել, երբէք չեմ սպառնացել, այլ, ընդհակառակը, կարելի է ասել, որ ես եղել եմ նորան բարեացակամ և բարերար, որովհետև նա երբ 1845 թուին հայոց կաթողիկոսի հրամանով աքսորուեց Նախիջևանից Թիֆլիս, ես էի, որ հասարակութեան խնդիրքով միջնորդեցի վեհափառ կաթուղիկոսի առաջ՝ նորան նորից Նախիջևան վերադարձնելու, չեմ խօսում արդէն ուրիշ բազմաթիւ բարերարութիւնների մասին, որ ես տրել եմ նորան և որ նա ինքն էլ խոստովանեց բոլորի առաջ օգոստոսի 10-ին, ինչպէս այդ գրրուած է արձանագրութեան մէջ։ Երբ որ Ս. Էջմիածնի Հայոց Սիւնհոդոսի կարգադրութեամբ Պատկանեանցը զրկուել էր քահանայագործութեան իրաւունքից այն ապօրինութիւնների համար, որ նա գործել էր իբրև անդամ Հոգևոր կառավարութեան, և ուղարկուել էր Նախիջևան այդ գործի քննութեան համար Ջալալեան Սարգիս վարդապետը, ես նորա խնդիրքով կամեցայ պաշտպանել նորան, բայց տեսնելով, որ նա պատժուած է այնպիսի յանցանքների համար, որ նկատել է և նորին սրբութիւնը, յետ կացայ։ Այդ առիթ եղաւ նորան դժգոհելու ինձանից և թշնամանալու իմ դէմ, և այդ թշնամութիւնը գնալով զօրացաւ և, վերջ ի վերջոյ, բերեց, հասցրեց նորան ներկայ ոճրագործութեան։ Սորա հետ միասին ես աւելորդ չեմ համարում մատնացոյց անել և այն հանգամանքի վրայ, որ, նախ, Պատկանեանց քահանան, բացի նորանից, որ մասնակից է եղել

1834—35 թուերին կեղծ դրամ կտրող Կրուտիկովի գործին, այլ և մասնակցել է 1851 թուին Նախիջևանում բռնուած սուտ չինական ռուբլիանոցներ շինողների գործին, որի համար և նա ենթարկուած է դատի, և գործը այդ մասին գտնուում է ներկայումս Ռոստովի քաղաքային Մագիստրատում և դաւառական դատարանում. երկրորդ, օրէնքով քննութիւնը լինում է յանցաւորին գտնելու և յանցանքը երևան հանելու համար, իսկ այս դէպքում քննութեան կարիք էլ չկայ, որովհետև յանցաւորը յայտնի է և բռնուած է հէնց յանցանք գործելու տեղում և, որ գլխաւորն է, նա, յանցաւորը, խոստովանել է իւր յանցանքը բոլորի առաջ, ուրեմն, այլ ևս ինչ քննութիւն, ինչ ապացոյց պէտք է։ Երկար ու բարակ քննութիւնը յանցաւորին տաւիթ և ժամանակ է տալիս միայն հնարել պէսպէս բարուբանքներ ճշմարտութիւնը քողարկելու և գործը խճճելու նպատակով»։

Գործը Ռոստովի դաւառական դատարանում քննուելուց յետոյ, անցնում է Եկատերինոսլաւի դատական պալատը, և երկու տեղն էլ վճռուում է յօգուտ Պատկանեանցի (11)։ Խալիբը, յայտնի բան է, բաւական չի մնում այդպիսի վճիռներից և գործը փոխադրում է Պետերբուրգ բարձր ատեանը—ծերակոյտ, որ 1857 թուի դեկտեմբերի 17-ին փոխելով Եկատերինոսլաւի դատական պալատի քրէական բաժնի վճիռը, որոշում է անբասիր ճանաչել Պատկանեանցին միւս երեք մեղադրական կէտերով նորա վերայ բարձած յանցանքներից, իսկ չորրորդ կէտում—Խալիբի կեանքի դէմ սպանութեան փորձ անելու գործում, յանցաւոր, որի համար և դատապարտում է նորան աքսորանքի Սիբիրի կողմերը, նախապէս զրկելով նորան ամեն իրաւունքից։ Իւր այդ դատավճիռը ծերակոյտը հիմնում է հետևեալ պատճառաբանութիւնների վերայ՝ նախ, Նախիջևանցի Կարապետ Իսմայիլցեանը և Խաչերես Թերզիեանը հաստատելով այն արձանագրութիւնը, որ 1853 թուի օգոստոսի 10-ին կազմել էր բառոն Կլէյստը, աւելացրել են, թէ իբաւ որ Պատկանեանը երկու ամիս շարունակ յորդորում է եղել նորանց սպանելու Խալիբին. նոքա բերել են նորա մօտ Զերմաշև ազ-

գանուՆով մէկին, որին և Պատկանեանցը կաշառել է, և որովհետև այդ Զերմաշևը պահանջում է եղել անմիջապէս 300 ռուբլի, այդ պատճառով էլ էլ նա չի համաձայնել, այլ կամեցել է նոյն գումարը տալ մաս-մաս՝ առաջ 13 ռուբլի, յետոյ 30, և այլն։ Նոքա, վերջապէս, խոստացել են նորան գտնել երեք սրիկայ անձն ուելի չափաւոր վարձատրութեամբ և առաջարկել են նորան խօսելու նոցա հետ պայմանաւորեալ տեղում, դերեզմանատանը, որ և ընդունել է Պատկանեանցը։ Երկրորդ, Զերմաշևը լիովին հաստատել է Իսմայիլցեանի և Թերդիեանի ցուցմունքը, թէ Պատկանեանցը ճիշդ որ յանձնել է իրան սպանելու Խալիբին, որի համար և ինքն Իսմայիլցեանի դրդմամբ պահանջել է 300 ռուբլի անմիջապէս, բայց Պատկանեանցը չի համաձայնել, այլ խոստացել է հատուցանել փոքր մաս-մաս, և կոչելով իրան միւս անգամ, տուել է 13 ռուբլի և ասել է, «Նայի՛ր, ատրճանակով կամ հրացանով չըսպանես, այլ դաշոյնով պիտի կտրես գլուխը, այդ ուելի հաստատ կը լինի»։ Երրորդ, Ստասիւկ և Ալէյխին ժանդարմները և Նախիջևանցի Օհան Զուբարեանը և Գրիգոր Լոյսպարոնեանը լիակատար կերպով հաստատել են Կլէյստի կազմած արձանագրութիւնը և իրանց կողմից էլ աւելացրել են, թէ Պատկանեանցը տեսնելով Խալիբին դերեզմանոցում, ասել է նրան հայերէն. «Արտեմ Պաւլիչ, խնայեցէ՛ք». և երբ Խալիբը հարցրել է, թէ ինչո՞ւ համար նա կամեցել է սպանել իրան, նա պատասխանել է, ընկնելով նորա ոտքերը. «Եթէ դուք դատելու լինէք ինձ իմ յանցանքների հիման վերայ, կը տեսնէք, որ դոքա շատ ծանր են. ես արժանի չեմ ներողամտութեան, բայց խնայեցէք ինձ իմ երեխաներիս համար»։ Նոյնը չնչին տարբերութեամբ նա կրկնել է ռուսերէն Կլէյստին, Սիմեօնովին և Զէյթունեանին, աղաչելով նոցա խնայել իրան։ Զորրորդ, Տէր-Մարտիրոս Թորոսեանը և Տէր-Պօղոս Խոջեանը հաստատելով Կլէյստի արձանագրութեան մէջ առաջ բերած հանգամանքները, աւելացրել են, թէ երբ ինքեանք հարցրել են Պատկանեանցին, թէ այդ ի՞նչ է նշանակում, նա պատասխանել է. «Մեղայ ձեզ, այսպէս պատահեց, խնայեցէք», Հինգերորդ, Ռոստովի մեշչա-

նին Ֆեոդոր Գաւրիլովը հաստատելով արձանագրութիւնը, հաղորդել է, թէ ինքը կանչուած է եղել 1853 թուի օգոստոսի 10-ին երեկոյեան ժամը 10-ին Խալիբի բակը, որտեղից և Խալիբն ուղարկել է իրան գերեզմանատունը երկու ժանդարմների հետ, որոնք պիտի գործէին իրանց պետից ստացած հրահանգների համաձայն. նոքա էլ իսկոյն փոխել են իրանց շորերը և ճանապարհ են ընկել Թերզեանի հետ, և որ Պատկանեանցը յորդորելով իրան, Գաւրիլովին, և ժանդարմներին սպանելու Խալիբին, ասել է. «Նայեցէք, չը վիրաւորէք նորան, թէ չէ նա կենդանի կը մնայ. աշխատեցէք գլուխը կտրել»։ Վեցերորդ, առաջին դատաւոր Զէյթունեանի կառապան զիւղացի Դուլնայեը ցոյց է տուել, թէ ինքը, չի յիշում, թէ օր թուին ու ամսին, տարել է իւր պարոնին ուրիշների հետ քաղաքից դուրս, բայց թէ ինչ է կատարուել այնտեղ, նա չի տեսել մթութեան պատճառով, այլ միայն լսել է, որ մէկը Խալիբից ներողութիւն է խնդրել։ Եօթներորդ, Պատկանեանցի կառապան Գաւրիլ Կլիմովը ցոյց է տուել, թէ 1853 թուի օգոստոսի 10-ին ինքը տարել է իւր տիրոջը մի քանի տեղ. վերջապէս, քահանան իւր բնակարանի մօտ մի մարդու հետ խօսելուց յետոյ, հրամայել է իրան իջնել կառքից և տուն երթալ, իսկ ինքը գնացել է չի կարող ասել, թէ ուր։ Իսկ ութերորդ Զերկասկաբնակ Կորչևսկին, որի մասին Պատկանեանցը ասել է, թէ իբրև թէ պէտք է խնդիր դրէ, եղել է նորա գործի համար, և ինքը Իսմայիլցեանի և Թերզիեանի առաջնորդութեամբ գնացել է քաղաքից դուրս, որ տեսնուի նորա ուղարկած մարդու հետ և խնդրած փողը տայ նորան, ցոյց է տուել, թէ ինքը ոչ թէ միայն Պատկանեանցի հետ ոչ մի յարաբերութիւն չի ունեցել, այլ և ոչ մի թուղթ մի որ և է գործի մասին չի գրել նորան և փող էլ երբէք չի ստացել նորանից։

ԵՐՈՒԱՆԴ ՇԱՀԱԶԻԶ

(Վերջը միւս անգամ)

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

I

Մօտ 2½ քառորդ դարու կենդանի պատմութիւն էր արժանայիշատակ Հայրիկը։

½ դարուց աւել հայկական կեանքումը չի պատահել որևիցէ փոքր ի շատէ պատմական նշանաւոր դէպք, որ անխզելի կապերով կապուած չլիներ հայոց հռչակաւոր Հայրիկի անձնաւորութեան հետ։ Նորա փոթորկալի, մերթ ընդ մերթ յաջող և անյաջող մրրկալի կեանքը կապ ունի հայոց պատմութեան հետ։ Նորա կեանքը դրել—նշանակում է ամբողջ մի քանի տասնեակ տարիների հայոց պատմութեան տրիւնոտ և վարդագոյն էջերը վերակենդանացնել։ Նորա անմիջական կապը հայոց պատմութեան հետ երևում է երբեմն—իբրև հեղինակի ու հրապարակախօսի, երբեմն կրակոտ պրօպագանդիստի ու ագիտատորի, երբեմն լուրջ ու խոհեմ ժողովրդական գործչի, երբեմն բանաստեղծի ու պատգամաւորի, երբեմն բարձրաստիճան հոգևորականի ու շնորհալի հռետորի և այլն և այլն։

Սկսած 40—45-ական թուականների տաճկաց Հայաստանի քիւրդ սատրապ դէրէբէյների սարսափներից, 50—55-ական թուականների Տաճկահայաստանի ամենախուլ անկիւններից—Վասպուրականի ու Տարօնի մէջ պարբերական մամուլից, տրպադրական հուժկու ու աւտորիտետ ձայնից, եւրոպական մրքով ու դիսցիպլինայով վերցրած դպրոցներից, մտաւոր և ինտենսիվ կուլտուրայի զարդացումից, մինչև դայ հասնի 60—65 թուականների տաճկահայոց «Ազգային Սահմանադրութիւնը», 70-ական թուականների Պօլսի պատրիարքական հոգևոր և քաղաքական խառնիճաղանճ գործերը, «գաւառական յանձնախմբի» կազմակերպութիւնը, տաճկահայոց հարստահարութիւն-

ների համար կաղմուած և բաղմակողմանի ուսումնասիրուած և լուսաբանուած տեղեկագիրը, վերջապէս 78 թ. ռուս-թրքական պատերազմի ժամանակ ստորագրուած Ս. Ստեֆանոյի դաշնագրութեան 16 և Բերլինի վեհաժողովի 61-րդ յօդուածը, 80-ական թուականների Տաճկահայաստանի սոսկալի սովը, Վանի և Բաղէշի հրդեհները, այնուհետև՝ Հայ յեղափոխութեան ծագումը, երկաթեայ շերեփներ ունենալու սկզբունքը։ Ամենայն հայոց կաթուղիկոսութիւնը, հայոց դպրոցների փակումը և եկեղեցական կալուածների վերապարծը, հայ-թրքական ընդհարումները և այլն և այլն կարկամ նման իրար յետևից տեղացող այս բոլոր պատմական երևոյթները անխզելի կերպով կապուած են հայոց Հայրիկի անձնաւորութեան հետ։

Իմ նպատակից դուրս է Հայրիկի կենսագրութիւնն ու կեանքը սիստեմատիկ կերպով արձանագրել և ամբողջապէս առաջ բերել, որ ի դէպ է ասել հատորների առատ նիւթ կարող է լինել։ Ես միայն մի քանի հատուածներ առաջ կը բերեմ Հայրիկի մրրկալի կեանքից, որը անմիջական կապ ունի տաճկահայոց «Ազգային Սահմանադրութեան» և ռուս-թրքական պատերազմի հետ։

Որքան էլ Հայրիկը անողոք կրիտիկայի կողմից դատապարտուի իւր մի քանի բացասական ընդունակութիւնների համար, որոնց մէջ ամենագլխաւոր տեղը վարչական ընդունակութիւնից զուրկ լինելն է բռնում, բայց դեռ թողած վարչական ընդունակութիւն ունեցող անձանց տրամաբանական ու փիլիսոփայական եզրակացութիւնների աննպաստ ու իւր հերթին բացասական կարողութիւնները, այսքան միայն կասեմ, որ Հայրիկի վարչական ընդունակութիւնից զուրկ լինելը, նորա եռանդի և գրական ընդունակութիւնների հանդէպը մի փոքրիկ մինուս է, որ նսեմանում է նորա հայակապ գործունէութեան և հայոց ազգին մատուցած ծառայութեան առաջ, որ վերջապէս այդ փոքրիկ մինուսը մի կաթիլ ջուր է նորա գրական գործունէութեան ովկիանոսումը։ Որքան կուզեն, թող անողոք կրիտիկայի մանրացուցով սուսեր գցեն Հայրիկի անձնաւորութեանը, այնուամենայնիւ.

„Храмъ оставленный—всё храмъ
Кумиръ поверженный все богъ„.
«Ամայի տաճարը էլի տաճար է,
Կործանուած բազինն էլ Աստուած է»։

II

19-րդ դարու եւրոպական նորաբոյս ինդուստրայի և խոշոր կապիտալիզմի և նորա արդիւնաբերութեան տարեցտարեկան զարդացման ոյժի և յառաջխաղացութեան հանդէպ ոչ մի պետութիւն, ոչ մի հասարակական կեանք իւր նախկին ձևով գոյութիւն ունենալ չէր կարող։ Գործարանական եռուն կեանքը ամենամեծ յեղափոխական ակն էր կատարում։ Նա ուժգին թափով մուտք էր գործում ամեն տեղ, ամրանում և բոլոր երկրների հետ անխտիր յարաբերութիւնների մէջ էր մտնում։ Նորա յաղթական գնացքի առաջ տեղի էին տալիս և կրօնական ֆանատիզմը, և հայրենիքը, և ընտանեկան ու նահապետական կեանքը, հազար ու մի սրբազան ապաթներ ու տրադիցիաներ։ Ժամանակակից Թիւրքիան էլ դանուելով նորա քթի տակ, նորա հեռաւոր ճանապարհորդութիւնների, դաղութային երկրների հէնց ա. շէմքում, բնականօրէն չէր կարող ազատուիլ եւրոպական կապիտալի ամեն ինչը յեղաշրջող կուլտուրական ցնցումներից, թէկուզ որքան էլ այդ մուսուլման հոգևորականութեան և պալատական խառնիճաղանճի համար այդ յեղաշրջումը «Ալլահի ճշմարիտ ճանապարհից դուրս գալ» նշանակէր։ Եւրոպացիների հետ ունեցած առևտրական եռանդուն շփումն ու անմիջական յարաբերութիւնը յառաջդիմական մի կենսատու հոսանք է ստեղծում Թիւրքիայի համար։ Դարերով խաւարի մէջ խարխափող և մինչև ուղն ու ծուծը կրօնական ֆանատիզմով և ամուլ դոգմաներով սնուած և մեծացած Թիւրք երիտասարդութիւնը, հասարակական ամբողջ մեխանիզմը, մինչև անգամ մինիստրութիւնը, փաթիշահը, խաւարի նոզկալի կապանքներից յեղաշրջուել են ծդտում։

Այդ յեղաշրջման առհաւատչեան կարելի է համարել Մահմուտ և Մէջիթ սուլթանների հրատարակած տաճկական հռչա-

կաւոր Խաթթի Նիւմայուն, Խաթթի-Շարիֆ և Թանզիմաթի Հայրիչիկ կոչուող ֆէրմանները, հրովարտակները։ Այդ օրից տաճկահպատակ քրիստոնեաների համար տարազլուխ է սկսվում։ Յիշեալ ֆէրմանները ի լուր աշխարհին աւետում են առանց ողջի և կրօնի խտրութեան, օսմանեան քաղաքացիների կատարեալ հաւասարութիւն, բոլոր օրէնքների իրաւունքների և պարտականութիւնների առաջ։ Մինչև այդ հրովարտակների հրատարակութիւնը մուսուլմանական շէհրի կոչուող օրէնքի համաձայն, քրիստոնեաները ուղղափառ մուսուլմանների հետ համահաւասար քաղաքական իրաւունքներ չէին կարող ունենալ։ Նոցա վկայութիւնը քրէական ու քաղաքական գործերում չունէր ոյժ և զօրութիւն։ Նոքա պարտաւոր էին տարեցտարի իրենց կեանքի գին՝ խարաջ կոչուող գլխահարկը վճարել։ Մինչև անգամ քրիստոնեաների տարազը անպայման պէտք է տարբեր լինէր ուղղափառների տարազից։ Ուրիշ խօսքով ասած, քրիստոնեաները սուլթանների աշխարհումը մարդկային քաղաքացիական ամենատարրական իրաւունքներից զրկուած, մի մի կենդանի մեռածներ էին ներկայացնում։

Յիշեալ հրովարտակներից յետոյ, պարզ էր, որ վերջապէս իւրաքանչիւր տաճկահպատակ քրիստոնեան պիտի ծղաէր օգտուիլ հրովարտակի տուած զօրութիւնից—քաղաքական որոշ իրաւունքներ ձեռք բերելու։ Հանդամանքից մանաւանդ աւելի լաւ էին օգտվում յոյները, սլաւոնները և մինչև անգամ հայ-կաթոլիկներն ու հայ-բողոքականները։ Իսկ լուսաւորչական հայերը իրենց ներքին անդուսպ երկպառակութիւններով մի քաոսային դրութիւն էին ստեղծել։ Մանաւանդ Իսկիւտարի ճեմարանի համար դոյութիւն ունեցող Ամիրաների, պատրիարքի և արհեստաւորների ներքին կռիւը թոյլ չէր տալիս քաղաքական նորանոր իրաւունքներ ձեռք բերել։ Հայոց այս ներքին երկպառակութիւնների վերայ չէին կարող անտարբեր վերաբերուել մի քանի մեծատան վարվռուն երիտասարդներ (Նիկող. Պալեանը, Օտեանը, Ռուսինեանը և այլն)։ Առաջին անգամ նոցա մէջ յղացաւ այն միտքը, որ սուլթանների հրովարտակների հոգու և զօրութեան համաձայն տաճկահայոց համար մի

այնպիսի կանոնադրութիւն սահմանել, որ իւր մէջ պարունակէր թէ ազգի, իրաւունքները և պարտականութիւնները և թէ դէպի ազգն և ազգի դէպի անհատները ունեցած պարտականութիւնները: Այդ կանոնադրութիւնը պիտի որոշէր և դաւառացիների իրաւունքները, պիտի հաստատէր զանազան խորհուրդներ և այլն: Այս կանոնադրութիւնը յետոյ կոչուեցաւ «Տաճկահայոց Ազգային Սահմանադրութիւն»: Ազգային սահմանադրութիւնը ընդունուեցաւ հայոց կողմից—1860 թ. մայիսի 24-ին՝ մի խառն ժողովում: Ցիշեալ թուից մինչև 1863 թ. մարտի 17-ը պաշտօնապէս անվաւեր մնաց կառավարութեան կողմից, թէև նա բանաւոր կերպով սահմանել և իւր հաւանութիւնն էր տուել տաճկահայոց Ազգային Սահմանադրութեանը: Հայոց մէջ եղած ներքին երկպառակութիւնները աճում էր հետզհետէ: Զուգադիպարար նոյն ժամանակամիջոցներում վախճանվում են Սսի, Աղթամարի և յետոյ Էջմիածնի կաթուղիկոսները: Միւս կողմից անակնկալ կերպով բռնկւում է ըմբոստ Զէյթունցիների 1862 թ. ապստամբութիւնը, որի հետևանքը ի միջի այլոց լինում է այն, որ հայերը պատերազմի հրամանատար Ագիզ փաշայի 30,000 բանակից 6000-ին կոտորում են և նոցա ռազմամթերքը խլելով—յետ են քշում Ագիզի պարտուած բանակը: Պատմական այդ նշանակալից ապստամբութեան ժամանակ հայերը աննշան կորուստ են ունենում, և ֆրանսիական Նաբոլիոն Գ. կայսեր միջամտութեան շնորհիւ վարչական մի քանի ներքին իրաւունքներ են ձեռք բերում հպարտ Զէյթունցիքը:

Ահա հէնց այդ ապստամբութեան և ներքին ազմուկների շնորհիւ օսմանեան տէրութիւնը յետ է պահանջում իւր կողմից սահմանած և հաւանութիւն գտած «Ազգային սահմանադրութիւնը»՝ որը յայտնի է տաճկահայերի մէջ «Պետական հարուած» անունով: Տաճկահայերը չյուսահատուեցին իրենց կրած ծանր հարուածով, և շնորհիւ իրենց յամառ դիմումներին և միջնորդութիւններին, վերջապէս 1863 թ. պաշտօնապէս հաստատուած, ստանում են իրենց «Ազգային Սահմանադրութիւնը»:

Ասում են, որ Հայոց Սահմանադրութիւնը պաշտօնապէս

վաւերացնելուց առաջ, մի արտակարգ ժողով է տեղի ունենում սուլթանների պալատումը՝ քննելու Հայոց Սահմանադրութեան գործը։ Արտակարգ ժողովի նշանակութիւնը բացատրւում է նորանով, որ թիւրք կառավարութիւնը դիւանագիտական որոշ նշանակութիւն էր տալիս այդ Սահմանադրութեանը, նա որոշ երկիւղ էր կրում, որի համար էլ ամբողջ 2½ տարի ձգձգում էր հաստատման գործը։ Ահա հէնց այդ արտակարգ ժողովի ժամանակն է, որ Նրբաթափանց թիւրք դիպլոմատ Ալի փաշան տեղից վեր կենալով, վճռական շեշտով հեռաւեալ խիստ բնորոշ և նշանաւոր ճառն է արտասանում հայերի հասցէին «Հայերը ի՞նչ են ուզում, իրենց սահմանադրութիւնը, շատ բարի, տուէք իրենց ուզածը և երբէք մի վախէք նորա գործադրութիւնից։ Ես քաջ գիտեմ հայերին, որ նոցա սահմանադրութիւնը մի քառանկիւնի անիւներով սայլ է դառնալու, և երկար յառաջ գնալ չի կարող»։ Իւր համոզեցուցիչ շեշտով և նուրբ հայեացքներով—Ալի փաշան ազդեց ժողովականների վերայ։ Էֆֆէկտը յաջող էր։ Հանդիսականներից ոչ ոք ձայն ծպտուն չհանեց և հաստատուեց «Տաճկահայ Ազգային Սահմանադրութիւնը»։ Ինչպէս տեսնում է ընթերցողը Արեւելքի բիրթ ու անհեռատես կարծուած պոլիտիկոսների քաղաքականութիւնը աւելի ըէալ նրբութիւններ ունի, քան՝ զանազան անբարեխիղճ ու կրթուած Դօնդուկով-Կորսակովների, Պլէվէների, Գոլիցինների և Վելիչկօների մարդակեր քաղաքականութիւնը։

Ահա այդ ամուլ սահմանադրութիւնն է, որ Ոլիմպոսի Աստուածները այնքան անսպառ կայծ տուին մեր տաճկահայ բանաստեղծներին, հրապարակախօսներին, խմբագիրներին, այդ սահմանադրութիւնն էր, որ պօլսահայերը յանձին իրենց կլսաթք ջոջերի իւրաքանչիւր տարի մայիսի 1-ին (այս էլ տաճկահայոց մայիսի 1-ն էր!!!) խուռն ամբոխով կենդրոնանում էին Բոսֆորի ասիական ափին և մեծամեծ ադմուկներով և անթիւ տենախօսութիւններով կատարում էին այդ մեծածախս ազգային տօնը։ Տօնի ժամանակ միմեանց յատկացնում էին մեծամեծ տիտղոսներ, որ վերջապէս իրենց բարեկարգ սահմանա-

գրութիւնը ստեղծեցին։ Մի խօսքով այդ սահմանադրութիւնն էր, որ իւր բազմատեսակ ելևէջներով և գոյներով այնքան առատ նիւթ տուեց տաճկահայտաղանդաւոր երգիծաբան Պարոնեանին։ Բայց աւաղ. Պոլսի դեղաձիծաղ ափերից այն կողմը, որի համար լինում էր այդ ծայրահեղ անբնական ուրախութիւնները մի արիւնաշաղ մակերևոյթի վերայ իրենց սև օրն էր լաց լինում, իրենց դառնութեան արտասուքն էին քամում մի բազմատանջ ու անտէր ժողովուրդ։

III

Մենք մի հարևանցի կերպով առաջ բերինք «Տաճկահայոց Ազգային Սահմանադրութեան» ծագումը և հաստատութիւնը, այժմ տեսնենք թէ այդ հռչակաւոր սահմանադրութիւնիցը մինչև օրս ինչ շահեցաւ 60—95% կազմող գաւառացի տաճկահայ աշխատաւոր դասակարգը։

Տաճկահայ սահմանադրութիւնը կազմուած և չափուած ու ձևուած լինելով բուրժուական մասշտաբով, նորա հեղինակները լինելով Պոլսումը ապրած և Արևմտեան Եւրոպայի կենդրոններումը մեծացած ու դաստիարակուած մի քանի մեծատան կրեսոսների զաւակներ, շատ բնական է, որ այդ սահմանադրութիւնը չէր կարող գաւառի երկրագործ ու արհեստաւոր դասակարգերի իրականութեան ու ըէալ շահերի արտայայտիչը հանդիսանալ։ Տաճկահայ սահմանադրութեան նախածեռնութիւնը պատկանում էր այնպիսի երիտասարդների, որ աւելի ծանօթութիւն ունէին եւրոպական նիստ ու կացին, նոցա իրականութեանը, քան այն երկրի, այն ժողովրդի մասին, որի անունով սահմանադրութիւն էին ստեղծում։ Դա՝ տարբրաղդաբար մինչև օրս էլ մեր թարախոտ վերքերից մէկն է։ Մի՞թէ նոյն անբնական երևոյթը մինչև այսօր էլ չի՞ կրկնում, չի՞ արտացոլուած մեր հասարակա-քաղաքական կեանքումը։ Մի՞թէ նոյն ֆրազօլոգիաներով և ֆանտաստիքական երևակայութիւններով դիշեր ու ցերեկ մեր անխոհեմ դեմագոգները Կովկասի և Եւրոպայի գեղեցիկ անկիւններումը նստած չեն նկարագրել հռչակաւոր «զուլումների» և «արեան» աշխարհի սոս-

կալի տանջանքների մասին, այսինքն այն զուլումների աշխարհի, որի սոցիալ-տնտեսական, քաղաքական, հասարակական և մինչև անգամ աշխարհագրական իրական պայմանների մասին ոչ մի տեղեկություն, ոչ մի լուրջ ու բարեխիղճ ուսումնասիրություն չունենք: Քաղաքական ու կուլտուրական այդ անխոհեմ ու տհաս գործիչների վարմունքը նմանում է այն անբարեխիղճ բժշկին, որը հիւանդին չը տեսած, նորա նուրբ ու կենսական զարկերակները չը շոշափած դեղեր է նշանակում...

IV

Տանկահայոց ս. Սահմանադրական պատրիարքը Սարգիս և յետոյ Պօղոս արքեպիսկոպոսներն եղան, որոնք իրենց բռնած հակասահմանադրական ընթացքին համար ստիպուեցան հրաժարուել իրենց պատասխանատու պաշտօնից: 1869 թ. ս. անգամ սահմանադրական կանոններով պատրիարք ընտրուեց Պօլսի շնորհալի քարոզիչ և Վասպուրականցիների ու Տարօնցիների սիրելի Հայրիկը, Մկրտիչ Խրիմեանը: Մինչև ուղն ու ծուծը դեմօկրատական սկզբունքներով, գործունէութեամբ և կրթութեամբ օժտուած Հայրիկը ի դերևս չը հանեց իւր վերայ դրած յոյսերը: Նա պօլսեցիների անծուկ Սահմանադրութիւնից էլ առաջ անցաւ: Մարդկային բարօրութեան, յառաջադիմութեան ու աղատութեան սիրահարների համար որոշ չափ ու սահման չը կայ. նոքա միշտ ծգտում են դէպի վերը, դէպի վսեմը ու ամենակատարեալը: Հայրիկը լաւ գիտէր, որ ազգային յառաջադիմութեան ապրակ կարծուած ազգային սահմանադրութիւնը միայն մի շարք հարուստ աղաների և ապիկար փառաչաւորների անարգ զրպաններին և անղուսպ «ես»-երին է ծառայելու, որ այդ սահմանադրութիւնը մանաւանդ դաւառներումը նորանոր շահագործութիւնների անսպառ աղբիւր է դառնալու և անվերջ շահագործուելու է ցածր դասակարգերի աղքատութիւնը, տգիտութիւնն ու անմեղութիւնը: Այո, նա մանկութիւնից սնուած ու մեծացած լինելով մի չարքաշ ժողովրդի կրծքում, նստած լինելով նորա կրակարանի կողքին ու կերակրուած նորա արիւն քրտինքով պատրաստած հա-

ցով—ուստի և քաջ ծանօթ էր նորա պահանջներին ու երկաթեայ իրականութեանը։ Դարձեալ նա եղաւ առաջինը, որ իւր կենդանի օրինակով, անկեղծ ու վարվուն զգացմունքներով ցոյց տուեց Պոլսի «ջոջ»-երին, որ այդ մեծագոռոզ Սահմանադրութիւնից ոչ մի շահ չունի Տարօնի ու Վասպուրականի կեանքից, գոյքից ու պատուից զրկուած հայ շինականը։ Նա էլի նոյն՝ հայ և օտարազգի չորպահների սարուկն ու զոհն է։ Եւ վերջապէս պատրիարքներիցը նա եղաւ առաջինը, որ առանձնապէս ուշ դարձրեց գաւառացի հայերի կրած սոսկալի հարստահարութիւնների վրայ նախ՝ քիւրդ աւազակների և յետոյ՝ հայ տգրուկ վաշխառուների կողմից։ Այո, այստեղ շեշտում և ընդգծում եմ, որ հայ վաշխառու չորպահու պարագիտային ֆունկցիան ա. անգամ Հայրիկն է դեռ 70-ական թուականներից հրապարակի վերայ դնողը և հասարակական դատաստանին յանձնողը։ Դա՝ նորա գործունէութեան ամենապուսաւոր էական ու ինքնուրոյն կարողութիւններից մէկը կարելի է համարել։ Դա՝ նշանակում էր հայկական մինչև կոկորդը շովինիզմի մէջ թաղած հասարակական տրամաբանութեան ամենախոշոր կուռքերից մէկի դլուխը կարել։ Միմիայն Հայրիկի նմանների սրատես աչքերը կարող էր նկատել, որ հայ վաշխառու չորպահին նոյնքան մի փափուկ փուշ է, նոյնքան վնասակար ու կործանիչ, նոյնքան աւազակային ու խլուրտային դերում է դանուում, որքան և լեռների արծիւ-աւազակ քիւրդը։ Ահա թէ ինչու հեռատես Հայրիկը հայ վաշխառուներին աւազակ քիւրդի կողքին է դնում։ Նա անմիջական շփում ունենալով դաւառների և դաւառական գործիչների հետ, մի ընդարձակ, լուրջ և բարեխիղճ կերպով ուսումնասիրած մի տեղեկագիր պատրաստեց և 1870 թ. փետրուար ամսին տաճիկ կառավարութեանը մատուցեց։ Այս տեղեկագիրը պարունակում էր իւր մէջ հայ վաշխառուների և քիւրդ աւազակների՝ դաւառների երկրագործ, արհեստաւոր և առ հասարակ խաղաղ աշխատաւոր հայերի վերաբերմամբ գործ դրած անիրաւութիւնները և հազար ու մի զրկանքները։ Բ. Դուռը խոստացաւ բարւոքել հայերի դրութիւնը, բայց ի հարկէ տաճկաց բազմաթիւ խոստումների

նման, թղթերի վերայ միայն գրուած մնացին։ Մեր պատմութեան մէջ Հայրիկի ջանքերով գլուխ եկած գաւառների վիճակագրական տեղեկութիւնները իրենց նշանակալից էջերն են գրաւում և նորանով, որ հէնց այդ տեղեկագիրը դառաւ վերջին ռուս-թրքական պատերազմի ժամանակ եւրոպական դիւանատները բաղխելու պատճառը։ Այդ տեղեկագիրը ստեղծեց Սան-Ստեֆանոյի 16 և Բերլինի վեհաժողովի 61-րդ ամուլ յօդուածները, որ աւաղ տասնեակ տարիների ընթացքում չոր թղթի վերայ գրուած այդ անպէտք յօդուածները քաղաքականապէս տհաս ու անխոհեմ հայերիս դլխի տակ մի մի փոփուկ բարձ դառնալով—հարիւր հազարաւոր զոհերի, սով ու սրածութեան անվերջ շարքերի մի կատարեալ օչախ դառաւ ու լափեց հայաբնակ ամբողջ նահանգները։ Խրիմեանի 4-ամեայ պատրիարքութեան դիտաւոր արդիւնքներից մէկն էլ այն եղաւ, որ նորա շնորհիւ, տեսկահայոց միջին և ստորին դասի ապդեցութիւնը զօրացաւ ազգային գործերի մէջ։ Հաստատուեց դաւառական յանձնախումբ, սովելոց և կրթասիրաց յանձնաժողովներ և այլն։ Այդ նպատակի համար մինչև անգամ մի շարք ձեռնհաս ու բանիբուն անձինք (ինչպէս օրինակ—Սրուանձտեանը, Թոխմախեանը, Աղաւիլեանը և այլն) գաւառներ ուղևորուեցին՝ գաւառացիների կարիքների համար նորանոր ուսումնասիրութիւններ և տեղեկութիւններ տրծանագրելու։ Միով բանիւ Հայրիկի պատրիարքութեան ժամանակ որոշ շերտաւորումներ ասպարէզ եկաւ բարձր և ստորին դասակարգերի մէջ։ Սահմանադրութեան ընդհանուր և քաղաքական ժողովները նորա օրով մեծ մասամբ միջին դասի ձեռքն անցաւ։ Մինչդեռ սկզբներում տերութեան մեծ պաշտօնեաների և կրեսոս հայերի ձեռքին էր դանվում։ Ինչ ասել կուզի, որ այս բոլորի հանդէպ չէին կարող անտարբեր վերաբերուել մի կարգ բարձրատիճան եկեղեցական և աշխարհական անձինք, որոնք ազգային գործերում միմիայն իրանց անձնական շահերը ի նկատի ունէին։ Յառաջ եկաւ մի կուսակցութիւն, որը Հայրիկին տապալելու համար ձեռք առած միջոցների մէջ խարութիւն դնել չը դիտէր։ Ժողովրդի մէջ սոքա ստեղծեցին լուրջ յուզումներ ու ղրը-

գու�՝ներ։ Ցուցմունքներին վերջ տալու համար 1873 թ. հոկտեմբերի 2-ին Հայրիկը մի նշանաւոր հրաժարագիր տուեց, որը ժողովրդի վերայ մեծ տպաւորութիւն գործեց։

Թէ տաճկահայոց «Ազգային Սահմանադրութիւնը» որքան համապատասխանում էր գաւառական ստորին դասակարգերի ըէալ շահերին—թող խօսի ինքը իրականութիւնը։ Իւր պատրիարքութեան ժամանակ սահմանադրութեամբ հաստատուած ժողովների վերաբերմամբ Հայրիկը այսպիսի նամակներ է ստանում։ Մի առաջնորդ այսպէս է գրում «Ձեր հրահանգն ստացայ, բայց զո՞վ ընտրիմ ժողովին ատենապետ, ատենադպիր և ժողովականներն ո՞ւրկէ գանիմ»։ Մի ուրիշ տեղ էլ՝ «Ընտրողական գործողութիւնները կատարելու համար՝ ոչ սեղան կայ, ոչ քուէատուփ և ոչ էլ տոխտակ—զանոնք շինելու համար. ի՞նչ ընիմ։ Մեր գիւղացիները գրել կարդալ չեն գիտեր, այլ՝ միայն խոփն ու արօրը կը ճանչին։ Ասոնց մէջ ի՞նչպէս սահմանադրութիւն գործադրուելու է։ Քաղաքացւոց պարտուց տակ հնշուեր են խեղճերը, թէ որ ընտրուին և քաղաք դան, հայ չորպաճիների կամքը իրենց պատգամ կը դառնայ, անոնց դիմացը չեն համարձակուիր ձայն ծպտուն հանիլ...» և յիշեալ վարդապետը գաւառաբնակ հայերի համար լոյս և սահմանադրութեան տետրակէն առաջ- քերական կը խնդրէր. «Ես ի՞նչ ընեմ, գրում է վարդապետը—եթէ հարցնես ի՞նչ է քուէ, քուէատուփ. նա իսկոյն իւր 200 ղուրուշի պարտքը կը յիշէ, և իմ քուէն. իմ փոխատուիս համար է կսէ»։

Ահա դորա համար էլ ասում են Հայրիկը միշտ կրկնում էր իւր նշանաւոր խօսքերը «Օրէնսդիրները պարտաւոր էին Բոսֆորի ափերից դուրս գալով քննէին այն ժողովրդի վիճակը, պիտոյքը, բարքը—որուն համար օրէնք սահմանելու կոչուած էին»։

ԱՐԱՄ ԳԻՒՐՋԵԱՆ



ՖՐԵԴԵՐԻ ՄԻՍԹՐԱԼ

ՄԻՐԷՅՕ

Պրովանսական քերթուած

ԵՐԳ ԵՐՐՈՐԴ

ԽՈԶԱԿՆԵՐՈՒ ՀԱՒՔՈՒՄԸ

Փրովանսական հունձքը.—Լատենիներու Ագարակին մէջ, խումբ մը զուարթ աղջիկներ շերամներու խոզակները ոստերէն կ'անջատեն.—Ժան-Մարի, Միրէյօի մայրը.—Թավէն, Պօի վհուկը.—Զար աչքը.—Խոզակ հաւքողները, ատենը անցընելու համար, «փրովանսական դղեակներ» կը շինեն.—Խրոխտ Լօրը, Փամփարիկուսթի թագուհի,—Քլեման, Պօի թագուհի։ Վանթուրը, Ռոնը, Տիւրանսը.—Ազալայիս և Վիոլան.—Միրոյ Ատեանը.—Նօրատ երևան կը հանէ Միրէյօի և Վինենի սիրահարութիւնը.—Աղջիկներուն ծաղրանքը.—Թավէն վհուկը զէնոնք կը լռեցնէ. Լիւպերոնի ճրգնաւորը և սուրբ հովիւը.—Նօր կ'երգէ Մակալիի երգը։

Երբոր հունձքերը յաջող են,
Լիատակառ՝ ձիթապտղի երբ այգիներն
Կը լեցնեն կաւէ կարասներու մէջ իւղը շիկագոյն,
Երբ արտերէն, ճամբաներէն՝
Թափառական հասկաքաղին
Սայլը խոշոր կը ցնցկոտի ու կը տրքայ
Եւ իր հրպարտ ճակտով ամէն դի կը բաղխի,

Ըմբիշի պէս մերկ և ուժեղ՝ երբոր Բաքոսը կուգայ
Եւ բոլորապարը կ'առաջնորդէ հնձանհարներուն
Դէպ այգեկութքը Քրօի,
Ու լիալիր ճմլարանէն
Երբոր խըմիչքն օրհնուած,
Սրբունգներուն տակ՝ խազմուզով թաթաւուն,
Յորդ կը վազէ հնձանին մէջ փրփրացայտ,

Եւ երբ շերամներն կենիստաներուն վրայ, թափանցիկ,
Կը բարձրանան՝ ոսնագրաւարթ՝
Իրենց խարտեաշ բանտը մանել,
Ու երբ թրթուրներն, ամենաճարտար արուեստագէտներ,
Հազարներով կը թաղուին
Օրրոցներուն մէջ իրենց՝ այնքան նրբին,
Որ արեւու ճառագայթով մ'հիւսուած ըլլալ կը թուին,

Փրովանսի մէջ, այն տեղն,
Աւելի քան հրբէք խրախճանք կը տիրէ.
Այն տեղն, Պոմի, Ֆերիկուլէի գինիներն համով
Կը խրմին առանց գաւաթը բերնին մօտեցընելու.
Այն տեղն, կ'երգեն, կերուխում կ'ընեն.
Եւ մանչ ու աղջիկ
Դափերու ձայնով պար կը բոլորեն։

—Ես իրաւ որ բաղդաւոր եմ.
Իմ եղէգէ վանդակներուս վրայ ցախապատ
Խոզակներու սա փունջերս հեղ մը նայեցէք.
Ասանկ փափուկ տերևներ, հունձք մ'ասանկ հարուստ
Ագռակիս մէջ, դրացնուկներ, չէի տեսած
Երիտասարդ օրէս ի վեր,
Այն տարիէն ի վեր ուր մենք կարգըւեցանք։

Մինչ խոզակներն կը հաւաքէին,
Այսպէս կ'ըսէր Ժան-Մարի,
Ծերուկ Ռամոն վարպետին կինը մեծարոյ,
Միրէյոի մայրը հրպարտ.
Ու դրացնուկներն ու խնամիները, խնդալով,
Ու խոզակները հաւքելով,
Շերամոցին մէջ էնոր շուրջն էին շարուած։

Քաղ կ'ընէին.
Միրէյո ինքն իսկ կիներուն ամէն բոպէ
Կ'երկընցընէր մորճեր թրզուկ-կաղնիի
Ու խնկունիի փունջեր, ուր լերան հոտեր առնելով՝
Ա՛յնքան յօժար՝ իր կրծիկով՝
Կը բանտարկուի թրթուրն ազնիւ,
Որ կը նմանէին ոսկի դափնիի։

—Աստուածածնայ խորանին,
Կ'ըսէր Ժան-Մարի խընամիներուն,
Երէկ տարի արտորնօք
Մորճերուս էն աղւորներն՝ իրբր տասանորդ։
Այդպէս կ'ընեմ ամէն տարի. վասընզի էն է վերջապէս
Որ, երբ հաճի, վեհանձնօրէն կը հրամայէ
Շերամներուն որ աճին։

—Իսկ ես, ըսաւ Իզէօլթ՝ Օսթի Ագառակէն,
Կը վախնամ որ սըխալս ինծի սուղի նստի.
Այն օրն որ այնպէս կը փըչէր արևելեան մեծ հովը,
(Այդ ահռելի օրը մոռցած չէք անշուշտ),
Անըզգուշութեամբ բաց էի թողած
Պատուհանները սենեակին,
Ու քիչ առաջ գըտայ քըսան հատ ճերմըկած։

Թավէնն ալ, էնոնց օգնելու համար,
Եկեր էր Պօէն.
Թավէն ըսաւ Իզէօլթին, «Դուք, ճահիլներ,
Կը կարծէք թէ ամէն բանի մէջ ծերերէն բանգէտ էք.
Բայց պէտք է որ տարիքը մեզ քայքայէ,
Պէտք է հեծել, պէտք է լալ.
Այն ատեն, բայց շատ ուշ, տեսնել ու հասկընալ կըսորվինք։

Անխելք կիներ,
Երբ շերամիդ աղէկ կ'աճի,
Իսկոյն կ'երթաք փողոցներուն մէջ ճըռճըռալ՝
«Օ՜, շերամներս, չըտեսնըւած աղւոր են.
Եկէք տեսէք»։
Նախանձը հա չի մընար,
Ձեր ետևէն սենեակնուդ մէջ կ'ելլէ կուգայ մըրմըռալով։

«Օ՜հ, անմիտներ, որ նշդրակով
Խուզարկելով մահը, գիտնալ կը կարծեն
Մեղուին ուժը և գաղտնիքը մեղրին։
Կը կարծես թէ փայլուն նայուածք մը շեշտակի՝
Օրէն առաջ չի՞ կրնար սաղմը գալարել
Ծոցին մէջ կընոջ
Եւ ըստինքները չորցընել խոշորածիծ կովերուն։

«Կը կախարդուին թռչնիկներն
Բուիճակին միայն երեսը տեսնելով.
Օձին նայուածքը երկնքէն
Վար կը քաշէ սագերն, և դուն կ'ուզես որ որդ մը չըքնանայ
Մարդուն աչքին զօրութեան տակ։
Բայց աչքին դէմ տըղամարդուն,
Երբ անկից է որ սէր, բոց, խանդ կը ժայթքի,

«Ո՞րն է այն կոյսն որ բաւական վարպետ ըլլայ
Պաշտպանելու համար ինքզինք»։ Զորս աղջիկներ
Վար ձըգեցին խոզակներն։
—Ցունիս ըլլանք կամ հոկտեմբեր,
Է՜, պառաւ օձ, խայթոցդ, ըսին,
Միշտ կը բանի...
Մանչերը մի... թող մօտենան, որ տեսնեն։

«Ո՛չ, կը գոչէր աղջիկներու հօտը զրուարթ,
Ձենք ուզեր, չենք ուզեր, այնպէս չէ՞, Միրէյօ։
—Խոզակի քաղն ամէն օր չի՛ պատահիր,
Պատասխանեց էն, մառանին մէջ շիշ մը կայ,
Զոր շատ համով պիտի գտնէք։
Եւ Միրէյօ, թեթեւաքայլ,
Տուն գընաց շուտ իր կարմըրիլը ծածկելու։

—Է՜հ, քըրուբտիք, աղքատ աղջիկ մըն եմ ես,
Ըսկըսաւ Լօրը խըրոխտ.
Բայց թէ որ միտքս ըլլայի դրած և ոչ մէկուն մըտիկ ընել,
Եթէ մինչև իսկ Փամփարիկուսթի [1])
Թագաւորն ուզէր հետս կարգուիլ,
Հաճոյք ու քէֆ պիտի զգայի
Տեսնել որ Եօթ տարի ոտքիս տակ հոգի՛ տար իմ սիրուս։

—Ես ատանք չեմ, ըսաւ Բլեմանս.
Թէ որ արքայ մը դիպուածով
Սիրահարուէր ինծի, կրնայ պատահիլ,
Եթէ փայլուն է մանաւանդ 'ւ երիտասարդ
Եւ էն գեղեցիկն իր պետութեան մէջ,

---

[1]) «Փամփարիկուստ» երևակայական երկրի անուն մըն է, զոր փրովանսցիկ կատակարանութեանց մէջ կը յիշեն։

Որ ձրգէի՝ առանց այդքան նաղ ընելու՝
Զիս իր պալատը տանէր։

«Բայց կայսրուհի երբ ընէր զիս
Եւ տիրուհի,
Ոսկենրկար ճոխ կրկնոցով,
Ու հրավառ գլուխբս պճնէր
Մարգրտայեռ զմրբխտազարդ
Ակնախբտիզ թագով մը,
Պիտ ելլէի, ես թագուհի, խեղճ հայրենիքբս՝ Պօ՝ Դայի,

«Ու Պօն ինծի մայրաքաղաք պիտ ընէի.
Ժայռին վրայ, ուր կը սողայ ան հիմայ,
Պիտի նոփ-նոր շինել տայի մեր հին դղեակն աւիրուած,
Ու. պիտի հոն աշտարակիկ մ՝ աւելցնէի
Որ իր ճերմակ կատարով
Մինչև աստղերը հասնէր.
Ու յետոյ, երբ ուզէի քիչ մը հովոտիլ,

«Աշտարակիս ծայրը, մինակ՝
Իշխանիս հետ, պիտ ելլէի,
Առանց թագի և կրկնոցի։
Մինակ անոր հետ, իրա՛ւ որ ախորժելի
Ու շատ անուշ պիտի ըլլար՝
Լանջորմին վրայ կրթնած արմուկ արմուկի՝
Զրգել որ մեր աչքն հեռուները կորսբուի.

«Տեսնել ամբողջ, կ՚ըսէր Քլեմանս,
Փրովանսի զբաւարթ թագաւորութիւնս՝
Նարբոնջենեաց այգիի մ՝ պէս դէմբս ծաղկած.
Եւ իր կապոյտ ծովը՝ փուռած մեղկօրէն
Իր բլուրներուն ու դաշտերուն տակ,
Ու դրօշազարդ մեծ նաւակներն՝
Լիառատաստ դէպ Իֆ դղեակը սլացող։

«Եւ կայծակէն հերձոտուած
Վանթուրը որ, պատկառելի,
Լեռներուն վրայ որ իր ներքև կը ծկլտին,
Կը բարձրացնէ մինչև աստղերն իրեն գլուխն ըսպիտակ,
Ինչպէս մեծ ու ալեոր պետ մ՝ հովիւներու

Որ իր ցուպին կրթնած իր հօտը կը դիտէ,
Փեկոնները մէջ ու վայրի շոճիներուն.

«Եւ Ռոնն ուր այնքան քաղաքներ
Շարան շարան մէկ ծայրէն միւսը կուգան
Ջուր խըմելու՝ խնդալով ու երգելով,
Ռոնն իր ափերուն մօտ այնքան խըրոխտ,
Եւ որ սակայն երբ Ավինեոն կը հասնի,
Կը հաւանի գըլուխ ծըռել՝
Ողջունելու Տօմի տաճարը Տիրամօր։

«Եւ Տիւրանսն, այդ այծը հրարշաւ,
Եւ անընտել ու որկրաժէտ,
Որ իր անցքին վրայ կը կրծէ արգուզիներն ու քատերն,
Այդ աղջիկն աշխոյժ
Որ իր սափորովը կուգայ հրէն,
Եւ որ իր ջուրը կը հոսէ
Դէմը ելլող կորիճներուն հետ խաղալով։

Եւ ըսելով ասոնք, Բլեմանս,
Փրովանսի գոզտըր թագուհին,
Աթոռէն ելաւ, ու կողովին մէջ
Դընաց իր լեցուն գոգնոցը պարպել։
Ազալայիս, թուխ աղջընակ,
Ու Վիոլան, որ երկուորեակն էր էնոր,
(Կը վարէին իրենց ծընողքն Էսթուպլոնի կալուածը),

Ազալայիս, թուխ աղջընակ,
Ու Վիոլան որ երկուորեակն էր էնոր,
Լըտտենիներու Ագարակն ըստէպ կուգային մէկտեղ։
Սէրն, այդ դիւուկն ահաւոր,
Որ գրրովոտ ու միամիտ հոգիներուն
Զար կատակներ ընել միայն կ'ախորժի,
Նոյն տղամարդուն համար երկուքին ալ սիրտն էր վառեր։

Ազալայիս վեր առաւ գլուխը և ըսաւ. «Ա՛ղջիկներ,
Քանի որ մենք ուրախութիւն կ'ընենք հիմայ,
Ենթադրենք թէ հս ալ եղեր եմ թագուհի,
Եւ թէ Մարսէյլն իր նաւերով մեծառագաստ,
Ու Սիոթան որ անոր հետ կը խնդայ,

Եւ Սալոնն ու իր նուշերը,
Պոքերն և իր Մարգն, այս բոլորն ալ իմս են։

«Ազնըւական օրիորդներ ու գիւղացի աղջիկներ
Արլի, Պօր, Պարպանթանի,
Պիտ՝ ըսէի, թռչուններու պէս իմ պալատս թռռէք եկէք.
Կ'ուզեմ ընտրել եօթ ամենէն աղուորներն.
Ու կըշեռքին մէջ էնոնք պէտք է կշռեն
Սէրը խաբերայ ու սէրն հրատոչոր...
Եկէք, եօթդ ալ, զըւարթ, ժողով կազմեցէք։

«Սիրտ կոտրող բան չէ՞ տեսնել
Որ երբ երկու հոգի իրար կը սիրեն,
Իրենց միացումը խիստ շատ անգամ անհընար կ'ըլլայ.
Բայց ես ձեզի խօսք կուտամ, ես Ապալայիս թագուհի,
Որ պետութեանըս մէջ իմին,
Եթէ երբէք ջուխտ մը սիրող՝ անարդար
Ու զզուելի արգելքներով կաշկանդուին,

«Եօթ աղջկանց դատարանին թող երթան
Եւ հոն գտնեն պիտի օրէնք մը բարի.
Ով որ ոսկւոյ կամ գոհարի փոխարէն
Յանձնէ պատուոյ իր պատմուճանն, ու ով որ
Անարգանք կամ դրժանք ընէ իր սիրուհւոյն,
Պիտի գտնէ եօթ պայլուհիներուն դատարանին մէջ
Օրէնք մ' ահաւոր ու վըրէժ սիրոյ։

«Եւ երբոր նոյն աղջկան դէմ
Երկու սիրող ելլեն, և կամ՝ ընդհակառակն՝
Երկու աղջիկ երբ նոյն տըղուն սիրահարուին,
Կ'ուզեմ՝ ժողովն որոշէ
Այն որ էն լաւ կը սիրէ և դարպաս կ'ընէ,
Եւ այն որ էն արժանին է սիրուելու։
Վերջապէս, իբրև ընկեր այդ աղուոր օրիորդներուն,

Կ'ուզեմ որ գան եօթ բանաստեղծ,
Ու ներդաշնակ բառերով՝
Որոնց մէջ պարն ազնիւ պիտի տարփողեն՝
Կ'ուզեմ որ ծառի կեղևներու վրայ
Կամ վայրենի որթատունկի տերևներու՝

Միրոյ օրէնքներն գրբեն, և ինչպէս մեղրը փեթակէն,
Այնպէս ալ իրենց սաղերը հոսին։

«Ատենով, շուքին տակ շոճիներուն,
Այսպէս՝ Ֆանէթ տը Կանթելմ [1])
Կը խօսէր անշուշտ, երբ որ իր ճակատն ասուեղաճաճանչ
Ռոմանէնին ու Փոքր Այպեանց բլուրներն
Կը լուսավառէր.
Այսպէս անշուշտ կը խօսէր և Տի կոմսուհին [2]),
Երբ սարքած ունէր Ատեան մը սիրոյ»։

Բայց ահա սրուակ մը ձեռքը բռնած,
Զատկի օրուան պէս գեղեցիկ՝ Միրէյօն,
Այդ միջոցին, սենեակին մէջ կիներուն,
Եկեր էր նորէն։
—Է՜յ, ալ ատեն է խրմելու,
Ըսաւ, խրմելն աշխատողին զբաղութիւն կը բերէ.
Գործերնիդ պահ մը ձգեցէք ու գաւաթնիդ երկնցուցէք։

Ու կեմահիւս սրուակէն
Տաքցընող ցրքին գաւաթներուն մէջ
Ոսկի թելի պէս վազեց։
—Ես այս իքսիրը ձեռքովս եմ պատրաստեր,
Ըսաւ Միրէյօ, քառասուն օր ամբողջ
Պատուհանին առջև պէտք է որ եփի,
Որպէս զի արևն անոր լեղութիւնը անուշցընէ։

«Լերան երեք խոտ կայ անոր մէջ դրբած.
Ու խազմուզն որուն մէջը թաթխուած կը մընան անոնք,
Սիրտ բացող հոտ մը կը պահէ անոնցմէ»։
—Բայց Միրէյօ, ինծի նայէ, ըսաւ յանկարծ էնոնցմէ մին,
Մենէ ամէն մէկն, եթէ օր մ՚ հասնի
Փարթամ կեանքի ու թագուհի եթէ ըլլայ,
Ըսաւ թէ ինչ պիտի սիրէ ամենէն շատ։

---

[1]) Էսթեֆանէթ (կրճատմամբ՝ Ֆանէթ), Կանթելմներու ազնուատոհմ ընտանիքէն, 1340-ի մօտ, կը նախագահէր Ռոմանէնի Սիրոյ Ատեանին։

[2]) Տի կոմսուհին նշանաւոր «թրուվերուհի» մըն է (աշուղուհի), ԺԲ դարուն մէջ ապրած։

«Դուն ալ, Միրէյօ, ըսէ մեզ շուտով,
Քու գաղափարդ ըսէ դուն ալ։
—Ի՞նչ կ'ուզէք որ ըսեմ. ծնողքիս քով՝ երջանիկ,
Ու գոհ մեր Քրօի ագարակին մէջ,
Ուրիշ բանի տէր չունիմ։
—Ա՜, ըսաւ մին աղջիկներէն,
Իրաւ է որ քուկին ուզածդ ոչ ոսկի է ոչ արծաթ։

«Բայց առաւօտ մը, կը յիշեմ, Միրէյօ,
—Ներէ եթէ գաղտնիքը գուրս կը հանեմ,—
Երեքշաբթի էր, կրկուտներ ժողված հս տուն կը դառնայի.
Քրուա-Պլանշի մօտ հասնելուս,
Կողիս վրայ կբրելով խուրձը փայտի,
Տերևներուն մէջ քեզ տեսայ որ կ'խօսէիր
Բաւական աչքբաց մէկու մ' հետ մէկտեղ։

—Ո՞վ էր, ո՞վ էր, ո՞ւրտեղէն էր, պոռացին
Ամենքը մէկանց։—Ծառերուն մէջէն,
Շարունակեց Նօրատ, որոշ չէի տեսներ.
Բայց եթէ աչքս չէ խաբուած,
Ինծի այնպէս երևցաւ
Որ սա կողով հիւսել գիտցող
Վալապրեկցին էր որ Վինսեն կը կոչուի։

—Վա՜յ անառակ, անառա՜կ,
Աղջիկներն ըսին քահքահ խնդալով.
Կ'երևայ թէ սիրուն կողով մը կ'ուզէիր ունենալ,
Ու կլլեցուցիր կողովագործին
Թէ կ'ցանկայիր որ ինքն ըլլար քու սիրահարդ.
Օ՜, ամենէն աղուոր աղջիկը մեր տեղին
Իբրև սիրող այդ անկուտի Վինսե՞ն ընտրէ...

Ու էնոր հետը կ'իյնային։ Բայց իսկոյն,
Եւ ամէն մէկուն երեսին վրայ
Շուրջանակի պտըտցնելով նայուածք մը շեղ,
—Ա՜յ անիծած ապուշներ,
Գոչեց Թավէն. Ռումբքոն [1])

[1]) Ռումբքոն՝ Փրովանսցւոց աւանդութեանց մէջ՝ տեսակ մը հոգեգէշ (vampire) է։

Զեզի ամենքդ ալ ուշաթափ ընէ թող։
Եթէ Աստուած իսկ երկնաւոր ճամբէն անցնի,

«Այս յիմարներն ան ալ պիտի տանտինն առնեն.
Այդ Վինսենին վրայ անհարկի կերպով այդպէս
Խնդալն աղուոր բան կը կարծէք։ Բայց գիտէք
Անոր մէջ ինչ կայ, որքան ալ խեղճ ըլլայ.
Մըտիկ ըրէք պատգամն. Աստուած
Իր խորանին առջև անգամ մը հրաշք գործեց.
Հաստատ գիտեմ. իմին օրովս եղած բան է։

«Հովիւ մը կար.
Իր ամբողջ կեանքը՝ վայրենի՝ անցուցեր էր
Արածելով հօտը դաժան Լիւպրոնին մէջ.
Վերջապէս դէպ ի գերեզման զգալով հակիլն
Իր երկաթէ մարմնոյն, ուզեց՝ ինչ որ պարարքն էր՝
Սէնթ-Էօսթէշի ճգնաւորին
Խոստովանիլ։

«Մինաւորիկ, Վալմասքին [1]) մէջ կորսըւած,
Իր առաջին Զատկէն ի վեր՝ .
Եկեղեցի կամ մատուռ ոտք չէր կոխած.
Ու մինչև իսկ իր աղօթքները մոռցեր էր.
Իր խրճիթէն
Ելաւ գընաց—ճգնարանը
Ու մինչև գետին գլլուխը ծռեց մոնազին առջև։

—Ի՞նչ է գործած մեղքդ, եղբայր,
Ըսաւ ճգնաւորն։
—Ահա ինչ է, պատասխանեց ծերունին.
Մէկ խաղտուտիկ մ' (որ բարեկամ թռչուն մըն է հովիւներուն)
Անգամ մ' իմ հօտիս մէջ կը թըռչըտէր.
Ձեռքըս կոտրէր, գայլախաղով մը խեղճ թռչնիկն ըսպաննեցի։

—Եթէ ըրածը դիտմամբ չէ,
Այս մարդն ապուշ ըլլալու է,
Ըսաւ մտքէն ճգնաւորն, ու անմիջապէս

---

[1]) Վալմասքը Լիւպերոն լեռնաշղթային մէկ հովիտն է. Վալմասք (Վաու մասքօ) կը նշանակէ «կախարդներու հովիտ»։

Խոստովանանքն ընդհատելով,
Վերարկուդ, ըսաւ՝ դիտելով անոր դէմքն ուշադրութեամբ,
Գնա՛ սա ձողէն կախէ, ինչու որ հիմայ
Սուրբ արձակումը պիտի տամ քեզ, եղբայր։

Այն ձողը զոր՝ զայն փորձելու նպատակով՝
Քահանան ցոյց կուտար անոր,
Արեգակի ճաճանչ մըն էր որ շեղ կ'իյնար
Մատուռին մէջ։ Բարի ծերուկ հովիւն խկոյն
Հանեց վերարկուն
Եւ, հաւատքով լեցուն, օդին մէջ նետեց...
Ու վերարկուն հնաց հոն, ողորկ ճառագայթէն վար կախուած։

«—Աստուծոյ մարդ ես դուն, գոչեց ճգնաւորն,
Եւ սուրբ հովիւին ծունկը նետուեցաւ
Բոլոր սրտովը լալով.
—Ես ինչպէս կրնամ քեզ արձակում տալ.
Ա՜խ, աչուընեերէս թող շուրջն անձրեւէ,
Երկընցուր ձեռքդ իմին վերաս, վասընդի մեծ սուրբ մըն
ես դուն,
Եւ մեղաւոր մըն եմ ես։»

Ու վերջացուց իր պատմութիւնը Թավէն։
Ա՜խ խնդալէ դադրեր էին աղջիկներն։
—Ասիկա ցոյց կուտայ, ըսաւ Լօր այն ատեն,
Եւ հակառակը չեմ ըսեր,
Թէ մարդս հագուստէն պէտք չէ որ դատենք,
Եւ թէ ամէն տեսակ մաղով լաւ անասուն կը գտնուի։
Բայց, աղջիկներ, գանք ըսածիս։ Ինչպէս հատիկ մը խաղողի,

«Մեր գեղատի տիրուհին
(Աչքովը տեսայ) կաս-կարմիր եղաւ,
Երբ Վինսենին անուշ անունը քիչ առաջ տրուեցաւ.
Ասոր տակ բան մ' ըլլալու է.
Ըսէ նայինք, որքան տեսեց տերևքաղը.
Կը մոռցուի ժամն երբ մէկ տեղ են երկու հոգի.
Սիրականի մը հետ մարդ միշտ պարապ ատեն կը գտնէ։

—Աշխատեցէք, խղճակներնիդ հաւաքեցէք,
Բաւական չէ՞, ծաղրածուներ,
Պատասխանեց Միրէյօ. դուք սուրբերն անգամ

Դրժոխք պիտի դրկէիք։
Օ՜հ, ձեր բերանը գոցելու համար, իսկ որ,
Էրկան մը հետ կարբուելէն
Նախընտրէի պիտի երթալ վանք մը քաշուիլ՝
Երիտասարդ հասակիս մէջ։

— Թրա լա լա լա, թրա լա լա,
Երգեցին մէկ բերան բոլոր աղջիկներն։
Զըսեռ, ըլլաս պիտի աղուոր Մակալին,
Մակալին որ այն աստիճան կը գարշէր
Սիրոյ անուշ հրճուանքէն,
Որ նախընտրեց Արլ երթալ վանքը Սէն-Պլէզի
Ինքզինքը ողջ ողջ թաղել։

—Է՜, Նօր, դուն որ այնքան աղուոր
Կ'երգես ու լսողն՝ երբոր ուզես՝ կը զմայլեցնես,
Երգէ մեզի սա Մակալին,
Մակալին որ սիրոյ ձեռքէն կը փախչէր
Հազար խաղով,
Մակալին որ բարուկակի,
Ճառագայթի ու թռչունի կը փոխուէր,
Բայց որ էն վերջն ինքն ալ սիրով վառեցաւ։

Ո՜վ Մակալի, ո՜վ պաշտելիս...
Ըսկըսաւ Նօր. և աշխատող
Աղջիկներուն զըւարթութիւնն աճեցաւ.
Եւ ինչպէս, երբ կը բզզայ
Ճըպուռի մ' երգն ամառնային,
Բոլոր միւսները խմբովին կը կրկնեն,
Այնպէս բոլորը մէկ յանկերգը կ'երգէին։

ՄԱԿԱԼԻ

Ո՜վ Մակալի, ով պաշտելիս,
Գլուխդ հանէ դուրս պատուհանէդ,
Մըտիկ ըրէ սա այգերգը՝
Ջութակներով և դափերով։

Վերը լեցուն է աստղերով.
Ծոմն ինկած է.
Բայց դժգունին պիտի աստղերն
Երբ քեզ տեսնեն։

—Այնքան քիչ հոգս է այգերդը
Որքան մրմունջը ծառերուն.
Բայց ես երթամ խարտեաշ ծովուն
Մէջ օձաձուկ պիտի ըլլամ։

—Ո՛վ Մակալի, եթէ դուն ձուկն
Ըլլաս ջուրին,
Ես ալ կ'երթամ ձկնորս կ'ըլլամ,
Քեզ կը բռնեմ։

—Օ՜, եթէ դուն ձկնորս ըլլաս
Եւ ուրկաններդդ դաս նետես,
Ես թեւաւոր թռչուն կ'ըլլամ
Ու դաշտերուն վրայ կը թռչիմ,

—Ո՛վ Մակալի, եթէ օդին
Թռչունն ըլլաս,
Ես ալ կ'երթամ որսորդ կ'ըլլամ
Ու քեզ կ'որսամ։

—Եթէ դուն դաս վարմդդ լարես
Կաքաւներուն, կոցիկներուն,
Ես ծաղկած խոտ կ'ըլլամ ու լայն
Մարգերուն մէջ կը պահուըտիմ։

—Ո՛վ Մակալի, մարգրիտ-ծաղիկ
Եթէ ըլլաս,
Ես ալ վրճիտ ջուրը կ'ըլլամ,
Քեզ կ'ողողեմ։

—Եթէ դուն ջուրն ըլլաս վրճիտ,
Ես կ'երթամ մեծ ամպը կ'ըլլամ,
Ու այսպէս շուտ, շուտ կը մեկնիմ
Հեռուն, մինչև Ամերիկա։

—Ո՛վ Մակալի, եթէ հեռուն
Մեկնիլ ուզես,
Ես ծովու հով կ'ըլլամ ու քեզ
Կ'առնեմ կ'տանեմ։

—Եթէ դուն հոգի ըլլաս ծովու,
Ես բրբիշ կողմ մը կը փախչիմ,
Արևուն վառ հուրքը կ'ըլլամ
Որ սառոյցներն կը հալեցնէ։

—Ո՜վ Մակալի, արևու շողք
Եթէ ըլլաս,
Ես ալ կանանչ մողէս կ'ըլլամ,
Քեզ կը խրմեմ։

—Եթէ ըլլաս սաղմանդրը
Որ թաւուտին մէջ կը թաքչի,
Կ'ըլլամ լուսինը լերացած՝
Կախարդներուն ճամբայ ցուցնող։

—Ո՜վ Մակալի, եթէ պայծառ
Լուսին ըլլաս,
Ես ալ աղուոր մըշուշ կ'ըլլամ,
Քեզ կը պատեմ։

—Բայց դիս մըշուշն եթէ պատէ,
Նորէն քու ձեռքդ չեմ մընար.
Կ'ըլլամ աղուոր վարդ կուսական,
Ու մացառին մէջ կը բացուիմ։

—Ո՜վ Մակալի, եթէ դուն վարդ
Ըլլաս աղուոր,
Ես թիթեռնիկ կ'երթամ կ'ըլլամ,
Քեզ կը պաղնեմ։

—Որքան վաղես, դիս հալածես,
Երբէք ինծի չես հասնիր դուն.
Մեծ կաղնիի մը կեղևով
Կը հագուիմ մութ անտառին մէջ։

—Ո՜վ Մակալի, եթէ դուն մեծ
Կաղնի ըլլաս,
Ես բաղեղի փունջ մը կ'ըլլամ,
Քեզ կը գրկեմ։

—Եթէ դուն դիս ուզես գրկել,
Լոկ ծեր կաղնին գիրկըդ կը մնայ.
Ես մարապետ կ'ըլլամ ճերմակ՝
Սէն-Պլէզի մեծ վանատան մէջ։

—Ո՜վ Մակալի, դուն մարապետ
Եթէ ըլլաս,
Ես ալ կ'ըլլամ խոստովանհայր,
Քեզ կ'իմանամ։

Այստեղ կիները սարսռացին,
Շէկ խոզակները ձեռքերնուն թափեցան,
Ու կ'պոռային. «Նօր, ըսէ՛ շուտ, ըսէ՛ մեկի
Թէ մարապետ ըլլալէն ետքն ինչ ըրաւ
Խեղճ Մակալին, որ արդէն
Կաղնի եղած էր և ծաղիկ,
Լուսին, արև և ամպ ու խոտ, թռչուն ու ձուկ։

—Հիմայ երգին, յարեց Նօր,
Մընացած մասն երգեմ պիտի.
Այնտեղն էինք եկած, եթէ լաւ կը յիշեմ,
Ուր էն կ'ըսէ թէ պիտի վանք երթայ փակուի,
Ու հրատոչոր որսորդն էնոր կ'պատասխանէ
Թէ ինքն ալ հոն պիտի երթայ մտնէ իբրև խոստովանհայր.
Բայց տեսէք դեռ ինչ նոր արգելք էն կը հանէ։

—Եթէ վանքին մէջ ստք կոխես,
Մարապետները կը դտնես
Որ չորս բոլորըս կը յածին,
Ձիս պատանքի մէջ կը տեսնես։

—Ո՜վ Մակալի, եթէ դուն խեղճ
Մեռելն ըլլաս,
Ես այն առեն հոդը կ'ըլլամ,
Քեզ կունենամ։

—Հիմայ սկըսայ ես հաւատալ
Որ կատակով չես խօսիր դուն.
Աղուոր կարիճ, քեզ յիշատակ՝
Ա՛ռ սա մատնիս ապակիէ։

—Ո՜վ Մակալի, կեանք կուտաս ինձ...
Բայց նայէ, քեզ
Երբոր տեսան, աստղերն ինչպէս
Տժգունեցան։

Նոր լրուեց. ոչ մէկը ձայն ձուն կը հանէր.
Այնպէս աղուոր կ'երգեր Նոր,
Որ գլխու հակմամբ միւսները իրեն
Կընկերանային.
Ինչպէս փունջեր կիպոխիսի
Որ կախ ու հրլու՝ մէկտեղ կը տարուին
Վազող ջուրին մէջ աղբիւրին։

—Ա՜խ, ինչ աղուոր օդ կ'ընէ դուրսն, աւելցուց Նոր՝
Աւարտելով. բայց արտունձներն
Արդէն իրենց գերանդիին
Կը լրան խէժը ձկնոցին ջուրին մէջ.
Քանի մը խնձոր փրցուր, Միրէյօ,
Ամառնային խնձորներէն, ու կտոր մը թարմ պանիրի հետ՝
Լտտենիներուն տակ երթանք ուտենք։

ԵՐԳ ՉՈՐՐՈՐԴ

ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ

Մանուշակներու եղանակը.—Մարթիկի ձկնորսները.—Երեք թեկնածուներ Միրէյօն ուզելու կուգան, Ալարի հովիւը, Վերան ձիապահը, Ուրիաս ցլավարը.—Ալարի և իր հարուստ հօտերն ոչխարի.—Խուզումը.—Նկարագրութիւն ձմեռնային արօտ մը փոխադրուող մեծ հօտի մը որ Ալպեաններէն կ'իջնէ.—Տեսակցութիւն Ալարիի և Միրէյօի.—Սէն-Բեմիի դամբարանը.—Հովիւին ընծան, քանդակուած փայտէ բաժակը.—Ալարի ճամբու կը դրուի.—Վերան ձիապահը.—Քամարկի ճերմակ դամբիկները.—Վերան Միրէյօն կ'ուզէ Ռամոն վարպետէն.—Ծերունւոյն ուրախութիւնը և բարեացակամ պատասխանը, Միրէյօի մերժումը.—Ուրիաս, ցլազուսպը.—Վայրի սև ցուլերը.—«Ֆերրատ»-ը.—Ուրիաս և Միրէյօ աղբիւրին մօտ.—Ցլավարը ճամբու կը դրուի։

Թող դայ ժամանակն ուր մանուշակներն
Մարգերուն մէջ թարմ
Փունջ փունջ կը փթթին, և ամոլները
Ձեն պակսիր զանոնք երթալ շուք տեղուանք քաղելու համար.
Թող դայ ժամանակն ուր կը խաղաղ

Ծովն իր ծոցը խրոխտ
Եւ իր բոլոր ծիծերով յամբը կը շընչէ,

Զեն պակսիր «փրամ»-ներն ու «սիսըլանտ»-ներն [1])
Որ Մարթիկէն՝ գեղախումբ՝
Կը մեկնին ու կերթան իրենց մեծ ուռկանով ձուկ բռնել,
Կ'երթան թեւերովն իրենց թիերուն
Անծուփ ծովուն մէջ տարտղնիլ։
Թող գայ ժամանակն ուր կիներուն մէջ
Աղջիկներու կ'երևայ տարմն ու կը ծաղկի,

Երբ հովուհիներ կամ կոմսուհիներ
Գեղեցկութեան անուն կ'շահին,
Թեկնածուները չեն պակսիր Քրօի մէջ ու դղեակներուն.
Միայն Լոտեռնեաց Ագարակին մէջ
Երեք հատ եկան, մին՝ զամբրկապահ,
Միւսը հովիւ երինջներու,
Երրորդն հօտաղ ոչխարներու, աղուոր տըղաք՝ երեքն ալ։

Նախ Ալարի հօտաղն եկաւ։
Կ'ըսեն թէ հազար բրդոտ անասուն ունէր պահելու
Զըմեռն ի բուն Անթրըսէնի լըճին եղերքը կապուած՝
Լաւ աղալից «կրամէն»-ներուն [2]).
Կ'ըսեն թէ այն միջոցին ուր ցորենը
Իր հանգոյցները կը կազմէ,
Զով բարձրութեանց վրայ Ալպեանց
Ինքն իսկ զանոնք կը տանէր երբ արդէն Մայիսը կը զգացուի։

Կ'ըսեն նաև, ու կը հաւատամ,
Թէ սուրբ Մարկոսն երբ մօտենար, ինը խուզող,
Եւ հուժկու մարդիկ. երեք օր իր բուրդը կը խուզէին.
Ու դեռ չեմ յիշեր այն որ կը քաշէ
Ծանր ու ճերմակ բուրդի գեղմէրն,
Եւ այն հովուիկն որ անդադար խուզողներուն
Կը բերէր դինւոյ ամանը զոր շուտ մը կը պարպէին։

Բայց յետոյ, երբ ամառուան տաքը կ'անցնի
Ու մեծ սարերուն վրայ ձիւնն արդէն

---

[1]) Տեսակ մը նաւակներ։—[2]) Սիզատեսակ բոյս մը։

Կը պըտուտքի վայրերուն մէջ լեռնական,
Տեսնելու էր իջնելն հարուստ այդ հօտին՝
Տոֆինեան բարձր հովիտներէն՝
Ճարակելու համար Քրօի անսահման
Դաշտին մէջ խոտը ձըմրան։

Տեսնելու էր երկարաձիգ տարածուիլն այդ խուժանին՝
Ճամբուն մէջ քարուտ։
Գունդին ճակատը գառնուկներն հապշտապ
Կ'ուտուստեն զուարթ խումբերով,
Գառնարածէն առաջնորդուած։
Զանգակակիր էշերն, արու և մատակ,
Եւ մորուկներն կուգային խառն ի խուռն անոնց ետևէն։

Թամբին վրայ հեծած,
Իշապանն անոնց կը հսկէ։ Անոնք են որ կեմահիւս
Սակառներու մէջ համեստուն վրայ կը կըրեն
Ուտելիքներն ու խըմելիքն ու ձորձերն
Եւ մորթազերծ արջառին
Մորթը տակաւին արիւնաշաղախ,
Ու գառնուկն յոգնած։

Յետոյ կուգային՝ մէկ գըծի վըրայ,
Գնդապետներ փաղանգին,
Իրենց վեր դարձած եղջիւրներովը,
Զանգակներնին ճօճելով, ծուռ նայուածքով,
Հինգ խրոխտ նոխազներ՝ սպառնագին գլխով.
'Ի իրենց ետևէն մայրերը կուգան և խենթ ալոջներն
Ու փոքր ուլերը ճերմակ։

Այծարածը կը հրամայէ
Այդ շատակեր ու թափառկոտ հօրանին։
Ահա արուները մաքիներուն, խոյերն առաջնորդ,
Որոնց դունչերը կը ցցուին օդին մէջ,
Ճամբան ի վար կ'երևան.
Հը ճանչցուին անոնք իրենց կոտոշներովը խոշոր՝
Ականջին շուրջ երեք անգամ գալարուած.

Եւ կողերնին ու կոնակնին փնջիկներով զարդարուած են,
Պատուացոյց նշան՝

Թէ իրենք են մեծաւորները հօտին։
Խումբին գլուխը կը քալէ
Պետն հօտաղներուն, իր վերարկուով
Ուսերը ծածկած։
Բայց եւեւէն կուգայ ստուար մասը բանակին։

Ու փոշիի ամպի մը մէջ,
Յառաջագնաց և ըշտապոտ,
Մայր-մաքինները կը վազեն,
Պատասխանելով իրենց ձագերուն մայիւնին՝ երկայն
Մայիւններով. և ծոծրակնին շքուած կարմիր ծոպերով՝
Արեւափայլ փոշիի պէս
Կանցնին յամրաքայլ բրդոտ ոչխարներն ու հերուենեակներն։

Ու, մերթ ընդ մերթ, հովիւներուն օգնականներն որ
շուներուն
«Յառաջ» կը պոռան.
Եւ ձիւթանիշ կողերով մեծ խաժամուժը,
Զափահաններն, երկաժիններն,
Կրկնատամներն, գառնազուրկներն,
Եւ արգասաւոր երկուորաբերներն,
Որ դժուարաւ կը քաշեն ծանրը փորներնին։

Ցնցոտաւոր ջոկատ, ամուլ մաքիներն,
Ու ծեր խոյերն որ յաղթուած են սիրոյ
Պայքարներուն մէջ,
Ակռապլիկներուն ու կաղերուն հետ,
Յետսապահ գունդը կը կազմեն,
Խոյեր ուժասպառ, տրխուր բեկորներ,
Որ եղջիւրնին ու պատիւնին միանգամայն են կորուսեր։

Եւ այս բոլորն, այծ ու ոչխար,
Ինչքան որ կար ճամբուն մէջ,
Ալարիինն էր, բոլորն ալ, ծեր ու մատաղ, աղուոր ու ագեղ...
Եւ իր առջեւէն երբոր կ'անցնէին,
Երբ կ'անցնէին հարիւրներով,
Նայելով քէֆը կուգար...
Մականի պէս կը կերէր բիր մը շքեղ։

Ու պարտէզի մեծ շուներուն իր ճերմակ
Որ կուգային արօտներուն մէջ իր հետ,

Ծունկերն մորթէ հեսկերուն մէջ կոճկըւած,
Ու դէմքը պայծառ, ճակատն իմաստուն,
Կարծես Դաւիթ թագաւորն էր գեղեցիկ
Երբ, պատանի, իրիկուան դէմ, պապենական աղբիւրը
Կը տանէր իր հօտերը ջուր խմցնելու։

—«Ահա Միրէյօն որ կ'երթայ կուգայ
Լատենիներու Ագ'բակին առջև,
Ըսաւ հովիւն... Ատուած իմ, ճիշտ են ըսեր ինձ.
Ո՛չ դաշտերու մէջ, ոչ լերան վրայ,
Ո՛չ պատկերի մէջ, ոչ իրաւցընէ,
Դեռ մէկը չեմ տեսած էսոր մէջքին հասնող՝
Գեղեցկութեամբ, ձևերով ու շընորհով։»

Միմիայն զէնի տեսնելու համար,
Իր հօտերէն հեռացեր էր Ալարի։
Սակայն երբ էնոր դիմացը եկաւ,
—Կրնաս, ըսաւ դողդղացող ձայնով մը,
Ճամբայ մը ցոյց տալ ինծի՝
Անցնելու համար սա բըլուրներէն.
Ապա թէ ոչ, աղջիկ, վախնամ պիտի չկրնամ ելքը գտնել։

—«Շիտակ ճամբան բռնելու է,
Տես, պատասխանեց դաշտերու աղջիկն.
Յետոյ կը մտնես Փերօ-Մալօի անապատին մէջ,
Ու կը քալես մանուածապատ հովիտէն,
Մինչև աչքիդ կամարակապ մ' երևայ
Ու գերեզման մը որուն վրայ կը կանգնին,
Բարձր, օդին մէջ, երկու քարէ զօրապետ [1]։

«Հին» ըսուածներն են ատոնք։
—«Շընորհակալ եմ, ըսաւ տըղամարդն. իմ նիշըս կըրող

[1]) Կամարակապ (portique) մը, ու գերեզման մը որուն վրայ կը կանգնին երկու վիմաքանդակ զօրապետ։—Սէն-Ռէմիէն կէս ժամ հեռու, Փոքր-Ալպեանց ստորոտը՝ քովէ քով կը ցցուին երկու հռոմէական գեղեցիկ յիշատակարաններ։ Մին յաղթական կամար մըն է, միւսը հոյակապ շիրիմ մը եռայարկ, ճոխ հարթաքանդակներով զարդարուած, իր վերև ունենալով շնորհալի զանգակատուն մը, տասը կորնթական սիւներու վրայ յեցած, որոնց մէջէն երկու արձաններ կերևան կանգուն։ Վերջին Ճեացորդներն են Կլանոմին, մարսիլիական դաղթականութեան զոր բարբարոսները բնաջինջ ըրին։

Հազար հատ ոչխար՝ վաղը՝ Քրօի մէջ
Լեռը պէտ ելլեն.
Ու ես առջևէն կերթամ այդ վաշտին՝
Որ դաշտերուն մէջ ցոյց տամ
Արօտավայրն և օթևանն ու ճամբան։

«Եւ բոլորն ալ ազնիւ ցեղէ են. և իմին հովուհիս՝
Ինչ ատեն ալ որ կարգըւիմ՝
Պիտի լըսէ օրն ի բուն երգը սոխակին.
Եւ եթէ բաղդն ունենայի որ դուն, աղուոր Միրէյօ,
Իմ կինս ըլլալ հաւանէիր,
Պիտի նըւէր ընէի քեզ ոչ թէ զարդեր ոսկեղէն,
Այլ տօսախէ նոփ-նոր անօթ մ՝ որ քեզ համար եմ շիներ։»

Ու յանկարծ խօսքը կտրելով,
Իր ներքնակէն՝ մասունքի պէս դուրս կը հանէ բաժակ մը
Թարմ տօսախով յօրինուած,
Որովհետև իր պարապոյ ժամերուն՝
Քարի մը վրայ նըստած՝ կը սիրէր այդպէս բաներով
Զբաղուիլ, ու դանակով մը միայն
Զքնաղ գործեր կը շինէր

Ու քըմայքոտ ձեռքով մը
Կը քանդակէր շաչուկներ
Գիշերանց իր հօտն առաջնորդելու համար դաշտերէն.
Եւ մանեակին վրայ անոնց զանգակներուն
Ի անոնց իրրև լեզուակ դըրուած ոսկորին վրայ ըսպիտակ՝
Կը փորէր ու նրբաքանդակ կը գըծագրէր
Ծաղիկ, թռչուն, ինչ որ կ'ուզէր։

Բայց այդ անօթը զոր բերաւ,
Ապահով եմ որ չըպիտի հաւտայիք
Թէ հովիւին դանակը հոն դըպած ըլլար.
Ծաղկափըթիթ կիստ մ՝ անոր շուրջ
Կը ծաւալէր,
Եւ վարդերուն մէջ իր մեղկ՝
Երկու այծեամ կ'արածուէին՝ ձևացնելով անկղերն անոր։

Քիչ մը վարօք, կը տեսնըւէր երեք աղջիկ,
Որ անշուշտ երէք հրաշալիք էին...

Մօտը, խաշնարած մը կը քընանար ծառի մը ներքև.
Եւ աղջիկներն անառակ
Կամացուկ մ՝ անոր կը մօտենային
Ու բերնին վրայ կը դընէին ողկուզիկ մը խաղողի
Զոր կողոպտուն մէջ ունէին։

Եւ պատանին որ կը քնանար,
Կ՝արթննար՝ ժպտուն.
Ի՝ աղջիկներէն մին յուզուած կերևար...
Արմատին զոյնն եթէ չըլլար,
Պիտի կարծէիք թէ այդ գործին մէջ
Դէմքերն ողջ էին.
Նորի հոտ ունէր. դեռ ինքն իսկ անով ոչինչ էր խըմած։

—«Իրա՛ւ, ըսաւ Միրէյօ,
Քու հարբստութիւնդ աչք կը շլացնէ».
Եւ կը զննէր զայն։ Ու յետոյ մէկանց՝
—«Իմին սիրականս աւելին ունի,
Իր սէրը, հովիւ։ Ու երբ աչքիս մէջ խորունկ կը նայի,
Աչուընները վար առնել կը ստիպուիմ
Կամ կը զգամ մէջս երջանկութեան մը վազելն որ զիս կը
թուլցնէ։»

Եւ ոգիի մը պէս աղջիկն անհետացաւ...
Ալարի հովիւն անօթը դըրաւ
Իր ներքնակին տակ, ու մութուն՝ յամրաքայլ՝
Ելաւ մեկնեցաւ ամարանոցէն,
Միտքը վրդոված՝
Խորհելով որ այդքան աղուոր աղջիկ մ՝ իրմէ ուրիշին
Այդ աստիճան սէր էր տըւեր։

Լատենիներու նոյն Ագ՝րակին մէջ՝
Եկաւ նաև զամբըկապահ մը, Վիրան։
Այս Վերանը այնտեղ եկաւ Սամպուէն [1]։
Սամպուի մեծ մարգերուն մէջ՝
Ուր «քապրիտէլ»-ը կը ծաղկի,
Հարիւր ճերմակ զամբիկ ունէր՝
Հրամարգերու բարձր եղէգները ծայրատող։

---

[1]) Սամպու, Արլի մէկ աւանը, Քամարկ կղզիին մէջ։

Հարիւր զամբիկ ըսպիտակ...
Ճահճաբոյսի պէս՝ բաշերնին վէտվէտուն,
Ցորդախիտ ու երբէք մկրատ չըտեսած.
Իրենց կըրակոտ սըլացքներուն մէջ՝
Երբ ապերասան՝ յետոյ՝ կ'մեկնէին,
Պարիկի մը գօտիին պէս՝
Ան վրդերնուն վրայ կ'ծածանէր երկնքին մէջ։

Մարդկային ազգ, ամօթ քեզի.
Տեսնըւած չէ որ զամբիկները Քամարկի՝ [1])
Հըպատակուին իրենց կողերը պատռող
Սուր խըթանին
Եւ կամ գիրենք շոյող ձեռքին։
Նենգութիւնով ծամակապուած՝ աքսորուելնին տեսեր եմ
Հեռու ազալից իրենց մարգերէն։

Եւ օր մը, խեռ ոստմամբ մ' արագ
Իրենց վրայ հեծնողը վար կը նետեն,
Մէկ արշաւով կը կտրեն քսան փարսախ Ջրամարգ,
Քըթերնին հովուն,
Ու տասը տարուան գերութենէ ետք՝
Դարձած իրենց ծընընդավայրը՝ Վաքարէս [2]),
Ծովուն աղի և ապատ շունչը կը ծըծեն։

Վասըն զի այդ վայրի ցեղին
Տարրը ծովն է.
Պոսիդոնի կառքէն անշուշտ խոյս տըւած,
Դեռ փրփուրով ներկուած է ան.
Եւ երբ կը փըչէ ծովն ու կը մութնայ,
Երբ կը կոտրին պարանները նաւերուն,
Ցովատակները Քամարկի կը վերընջեն հաճոյքէ,

---

[1]) Քամարկը մեծածաւալ տելթա մըն է Ռոնին երկգուռմէն կազմուած։ Այդ կղզին Արլէն մինչև ծովը կը տարածուի։ Իր հոբիզոններուն անհունութիւնը, իր միահարթ դաշտերուն վեհաշուք լռութիւնը, իր տարօրինակ բուսականութիւնը, իր «միրաժ»-ը, իր ձկնոցները, իր մժղուկի տարմերը, իր վայրի ձիերու և եզներու մեծ հօտերը զարմանք կը պատճառեն ուղեւորին և Հարաւային Ամերիկայի «փամփաս»-ները կը յիշեցնեն։

[2]) Վաքարէս, Քամարկ կղզին մէջ, ընդարձակ ամբողջութիւն մըն է Ջրամարգերու, աղի ձկնոցներու և լճակներու։

Ու մտրակի թելերու պէս կը շաչեցնեն
Զըգձըգուող պոչն իրենց երկայն,
Եւ կը քերեն հողն ու իրենց մըսին մէջ
Երեքժանուոյն կը զգան մտնելն ահեղասաստ աստուածին
Որ իրարանցման մը մէջ սոսկալի
Փոթորիկն ու ջրհեղեղը կը շարժէ
Եւ հիմն ի վեր տակնուվերայ կ'ընէ վիհերը ծովուն։

Այդ վերանը կ'պահէր զանոնք արօտին մէջ։
Օր մը որ Քրօի շրջանը կ'ընէր,
Մինչև մօտը Միրէյօի եկաւ՝ կ'ըսեն.
Զի Քամարկի մէջ և մինչև հոն հեռուն,
Մինչև այն լայն բերանն ուր Ռոնը կը թափի,
Կըսէին թէ էն աղուոր էր
Եւ երկար ատեն դեռ պիտի ըսեն։

Եկաւ խըրոխտ, իր Արլաձև
Երկայն դեղին թիկնոցակով՝
Վերարկուի պէս ուսն ի վար նետուած,
Գոտիովը խատուտիկ
Ինչպէս կոնակը մողէսին,
Ու գլխարկովը մոմապօծ կըտաւէ
Ուր կը ցոլանար շողքն արեգակին։

Եւ երբ վարպետին դիմացը ելաւ,
—«Բարի լոյս ձեզ, տունտերնիդ շէն մընայ միշտ,
Քամարկեան Ռոնին եղրարնակներէն մին եմ ես, ըսաւ.
Թոռն եմ Փիէր ձիապահին.
Գիտնալու էք դուք արդէն,
Վասըն զի պապս քըսան տարի ամենաքիչն՝ իր ձիերով
Կոխած է հողը ձերին։

«Մեզ պաշարող ճահիճին մէջ
Մեծարոյ պապս ունէր երեք երկոտասնեակ երիվար...
Մտքերնիդ է. բայց օհ, եթէ տեսնէիք
Թէ այդ խըմորն ինչ ճոխ կերպով է այժմ աճած...
Մանգաղները պէտք է որ շատ խոտ կըտրեն.
Այժմ ունինք եօթ երկոտասնեակ ու երեք զոյգ։»
—«Երանի՜ թէ, պատասխանեց ծերունին,

«Դեռ շատ ատեն անոնց աճելը տեսնես
Եւ զանոնք ձեռքովդ արօտը տանիս.

Ճանչցած եմ քու պապդ, ու երկարատև
Եղաւ անոր հետ բարեկամութիւն։
Բայց վերջ ի վերջոյ երբ տարիքը մեզ կը սառեցընէ,
Մեր կանթեղին լոյսին տակ
Հանգիստ կը մընանք, բարեկամներուն մնաս բարով կըսենք։

—«Բայց չըլըմընցաւ, ըսաւ պատանին,
Ու դեռ ձենէ ուզելիքըս չէք գիտեր.
Շատ անգամներ, Սամպուի մէջ, երբ որ Քրօէն մարդիկ կուգան
Սայլերով յարդ տանելու,
Մինչդեռ կ'օգնենք իրենց բեռին
Զբաւանները սեղմելու,
Կը պատահի որ կը խօսինք աղջիկներուն վրայ Քրօի։

«Ու ձեր Միրէյօն ինձ նըկարագրած են իմ ճաշակիս
Ա՛յնքան յարմար, որ եթէ դուք ալ հաւանիք,
Վերանը ձեր փեսան կ'ըլլայ...»
—«Վերան.., ո՞ւր էր՝ ըսածդ ըլլար,
Գոչեց Ռամոն, որովհետև բարեկամիս՝
Պապուդ փիէր ձիապահին
Ծաղկած շառաւիղն ինձ պատիւ միայն կարող է բերել»։

Եւ ինչպէս մարդ մ'որ Աստուծոյ փառք կուտայ,
Երկու ձեռքը երկինքն ի վեր բարձրացուց
Ու գոչեց.
—«Երանի՜ թէ մեր աղջիկն ալ քեզ հաւնի.
(Մեր մէկ հատիկ զաւակն է, լոյսն է աչքերնուս).
Իբր օժիտի երախայրիք՝
Վըրադ իջնայ անմահութիւնն ու օրհնութիւնը սուրբերուն»։

Եւ կը կանչէ անմիջապէս իր աղջիկն
Ու կը յայտնէ խնդիրն էնոր։
Ցանկարծ դժգունած, նայուածքը շլմոր,
Վախէն դողդոջուն,
—«Բայց քու սուրբ խելքդ, ըսաւ, հայր,
Ո՞ւր է դացեր,
Որ կուզես այսքան դեռատի հեռացընել դիս քենէ։

«Դուն ինձ ըսած էիր թէ պէտք է կարգուիլն
Ըշտապով կըլլայ,

Պէտք է ճանչնալ մարդն ու անկից ճանչցուիլ...
Եւ ճանչնալը դեռ ինչ է...»։
Ու իր դէմքին մէգին մէջ քաղցրը մրտածում մը յանկարծ
Պայծառ երևցաւ։
Այսպէս երբ առտուն՝ անձրև է եկած,

Ծաղիկները կը տեսնուին ընկղմած
Պղտոր ջուրին տակ։
Միրէյօի մայրն իրաւունք տրուաւ էնոր ըսածին,
Եւ ձիապահը, ծպտելով,
—«Ռամոն վարպետ, ըսաւ, ես ետ կը կենամ.
Որովհետև ձիապահ մը Քամարկցի,
Գիտցած եղէք, լաւ կը ճանչնայ խայթուածքը մժղուկին։

Նոյն ամառուան մէջ՝ Սովաժի [1]) արօտներէն՝
Ուրիասը եղնավար
Ագարակն եկաւ, Միրէյօն տեսնել։
Սև ու չար են, համբաւաւոր,
Սովաժի եղնելն...
Հրատոչոր, արևուն տակ ու եղեամին,
Հեղեղահոս անձրևներուն բաղխումին տակ։

Հոն, մինակ իր կովերուն հետ,
Ամբողջ տարին կ'արծէր զանոնք Ուրիաս,
Ծընած՝ հօտին մէջ, եղներու հետ մեծցած,
Կապմբուածքը ունէր եզի,
Սևութիւնն ու ուչքը վայրի,
Ժանտ կերպարանքն ու կարծր հոգին։
Ձեռքը ջալոտ մ' ու հագուստը գետին նետած,

Ո՜րքան անգամ, դաժան քեցող,
Հորթերը իրենց մօրն ըստինքներէն
Քաշեր զատեր էր
Ու զայրացած մօրը վրայ
Խուրձ մը բիր կոտրեր,

---

[1]) Սոված, ընդարձակ ամայի երկրամաս մը, որ փոքր Քամարկ ալ կը կոչուի. Արևելքէն իր սահմանը կը գծէ փոքր Ռոնը, որ զայն կը բաժնէ մեծ Քամարկէն, հարաւէն՝ Միջերկրականը, Արևմուտքէն և Հիւսիսէն՝ մեռած Ռոնը և էկ-Մորթի ջրանցքը։ Վայրենի սև ցուլերուն գլխաւոր բնակավայրն է։

Մինչև որ ան՝ հարուածներու փոթորիկէն՝
Փախչէր ոռնալով, մերթ ետ նայելով՝ շոճերուն մէջէն։

Ո՛րքան երինջներ ու զրաարակներ
«Ֆերրատ»-ներուն [1]) մէջ Քամարկեան,
Եղջիւրներնէն բռներ գետին էր նետեր.
Եւ տակից էր որ յօնքերուն մէջտեղը ճեղք մ'էր մընացեր՝
Ինչպէս կայծակն որ ամպերը կը պատռէ.
Եւ անջրդի մատիտեղներն ու օշնաններն
Ներկուեր էին՝ ժամանակաւ՝ իր յորդահոս արիւնէն։

Աղուոր օր մ'էր մեծ «Ֆերրատ»-ի։
Հաւաքելու համար եզներն,
Էկ-Մորթը և Աւպորունը, Ֆարամանն ու Լի Սանթօն
Ղրկեր էին դէպի հողերը խոպան
Հարիւր հատն իրենց ամենէն ամուր ձիաւորներէն։
Բայց որոշուած տեղն
Ուր ժողովուրդ մը խելացնոր կը լեցընէ կրկէսը լայն,

Ընդոստ արթնցած՝ աղաղաշտին մէջ,
Ու հալածուած սուր երեքժանիէն
Որով զիրենք արշաւնուն մէջ կը խրթէ
Եզողն աշխոյժ, եկեր էին երինջները և ցուլերն՝
Վազքով մը խենթ, մրընչիւնով մը հովու,
Տերեփուկներն ու տիփասները ճղմելով,
Եկեր էին՝ երեք հարիւր՝ նշանակուած տեղն հաւաքուիլ։

Եղջերաւոր ամբոխը
Դանդ կառնէ, համր ու շլաարած,
Բայց խրթանի հարուածներով,
Երեք հեղ ալ զայն կը ստիպեն ծայրէ ծայր
Կտրել շրջանակն ամփիթատրոնին,
Ինչպէս շունը կըզաքիսին ետևէն,
Ինչպէս Լիւպրոնի արծիւն ետևէն հողմավարներուն։

Զըհաւատալոր բան։ Կ'իջնէ Ուրիաս իր սամբիկէն վար,
Սովորութեան հակառակ։

---

[1]) «Ֆերրատ»-ը հովուական մեծ արարողութիւն մըն է, զոր կը տօնեն Արլի մէջ, և որու միջոցին որոշ տեղ մը կը հաւաքեն բոլոր դեռատի եզները և անոնց վրայ հրաշէկ երկաթով իրենց տիրոջ նշանագիրը կը դրոշմեն։

Դիզուած՝ մուտքին մօտ կրկէսին,
Եզներն յանկարծ ահեղաբար կը շարժին,
Ու կրկէսին մէջ արագ կը սուրան
Հինգ ընջուղներ որոնց աչքերը կը վառին
Եւ որ երկինքն իրենց շրջեղ գլուխներովը կը ճեղքեն։

Ինչպէս հով մը, կը սրլանտայ Ուրիաս.
Ինչպէս հով մը որ ամպերը կը հալածէ,
Կը հետապնդի անոնց ետևէն, կը խրթէ զանոնք,
Մերթ անոնցմէ առաջ կ'անցնի վազքին մէջ.
Ու մերթ նիզակովն անոնց կը զարնէ,
Մերթ կը պարէ անոնց առջև,
Ու մերթ զանոնք կռուփի ուժեղ հարուածով մը կը սանձէ։

Ա՜, մատ կը զարնէ ժողովուրդն ամբողջ.
Ուրիաս, ճեպ-ճերմակ եղած ոլիմպական փոշիով,
Վազքին մէջ հուսկ ապա կ'բռնէ անոնցմէ մին եղջիւրներէն,
Եւ գլուխ ու ցուկ, ուժ ուժի դէմ։
Կ'ուզէ սև հրէշն իր վեր դարձած եղջիւրները ազատել,
Եւ գաւակը կը գալարէ,
Ու մոլեգին կը բառաչէ, արիւն ու մուխ կը փրչէ։

Զուր մոլեգնութիւն, ունայն ոստումներ։
Անդէորդը, հարուածով մը խորամանկ,
Անասունին գլուխն ահռելի կը կրթընցնէ իր ուսին,
Անոր վիզը պրկելով.
Եւ ուժգնապէս, դէպ ի միւս կողմ
Հրրելով զայն,
Պատնէշի մ՚ պէս՝ մարդն ու ցուլը թաւալգլոր գետին կ'իյնան։

Մոշենիները կը դողան
Այն խելայեղ աղաղակէն զոր ամենքը կ'արձակեն՝
«Ապրի, ապրի Ուրիասը»։ Ու հինգ թիկնեղ կտրիճներ
Ցուլը կը բռնեն, դրոշմելու համար
Անոր վրայ նշանն իր յաղթանակին.
Ինքն իսկ Ուրիաս երկաթը կ'առնէ
Ու կ'խարանէ տաք երկաթով գաւակն անոր։

Խումբ մը ձի հեծած Արլի աղջիկներ,
Կուրծքերնին թունդ եւած սաստիկ յուզմունքէ,
Իրենց ճերմակ հեգնաներուն քառասլացքէն կարմրած,

Կուգան բերել անոր եղջիւր մը խոշոր՝
Մինչև բերան գինով լեցուն. ու դաշտին մէջ,
Տեսէք, յորձանքը վերբստին կ'շոգիանայ.
Խումբ մը ձիաւոր երիտասարդներ, կը սուրան. հրավառ,
Էնոնց ետևէն։

Ուրիաս եղներն գետին զլնելու միակ կը մտածէ.
Տակաւին չորս հատ կը մընար.
Բայց ինչպէս արտունձն, որ խար կը կտրէ,
Այնքան շատ եռանդ ցոյց կուտայ որքան գործը շատ ըլլայ,
Պայքարին կարծը ճիգերուն
Հետզհետէ աւելի պինդ կը տոկար,
Ու չորսին ալ մէջքը կոտրեց։

Սէգ եղջիւրներով, ըսպիտակախայտ,
Անոնց վերջինը դալարիքը կը խուզէր։
—Հերիք, Ո՛ւրիաս, գոչեցին բոլոր
Ծեր կովարածներն։ Զուր շունչ հատցուցին։
Ըսպիտակախայտ ցուլին վրայ արդէն ան կը խոյանար,
Երեքժանին կրթընցուցած իր ազդրին,
Քրտնաթաթախ ու կուրծքը մերկ։

Զաթ... երբ ցըռուկին հարուածն իջեցուց,
Երեքժանին կըտոր կըտոր փշրեցաւ.
Վայրագ վէրքէն՝ ցուլը դարձաւ դիւահար.
Մէկ ոստումով եղնավարը եղջիւրներէն զայն բռնեց,
Ու միասին կը սըլանան, ու դաշտին
Օշնանները կ'աւրըշտրկեն միասին։
Զիով, իրենց խըթաններուն երկայն բունին կրթընած,

Արլի մ'էկ-Մորթի կովարածները
Կը դիտէին կըռիւն հըզօր։
Երկուքն ալ կատղած՝ յաղթելու տենչով,
Մարդը սանձելով եզը բառաչող,
Եզն իր հետ մարդը քաշելով տանելով,
Ու փրփրալից թանձրը լեզուով մը՝ վազքին մէջ՝
Լիզելով ցռուկն իր արիւնոտ։

Տէր Աստուած... եզն ահա կ'յաղթէ։
Ճղճիմ փոցղի պէս մարդն անոր ոտքերուն տակ գլորեցաւ՝
Իր խոյանքէն մղուելով...

—«Մեռած ձևացիր, մեռած ձևացիր»։
Եղն իր պոզերով զանիկա գետնէն վեր կը վերցընէ,
Եւ իր դաժան գլուխն՝ օդին մէջ
Եօթը կանգուն բարձրութեամբ վեր կը նետէ զայն։

Մոլենիները կը դողան
Այն խելայեղ աղաղակէն զոր ամենքը կ'արձակեն...
Խեղճը հեռուն երեսի վրայ կ'երթայ կ'իյնայ ջախջախուած։
Անկից ի վեր էր որ իր դէմքն այլանդակող
Ըսպին կը կրէր։
—Իր զամբիկին վրայ հեծած, եկաւ ան,
Նիզակը ձեռքը, Միրէյօի մօտ։

Դեռատի կոյսն այդ առտու
Մինակ գացեր էր աղբիւրը.
Սօթտած թևերն ու փէշերը,
Զիագիոնը ողորկիչ
Քամոցները կը մաքրէր։
Սուրբ Աստուած, ինչ գեղեցիկ էր,
Պայծառ ջուրին մէջ տոտիկները ցայելէն։

—«Աղուոր աղջիկ, բարև՛, ըսաւ Ուրիաս.
Քամոցները կը ցօղուես.
Եթէ թոյլ տաս, այս աղբիւրին մէջ մաքուր
Ճերմակ ձիուս պիտի քիչ մը ջուր խմցընեմ»։
—«Հուր չի պակսիր այստեղ, ըսաւ Էնիկա.
Սահմանը տար ձիդ,
Ուզածին չափ թող խըմէ։»

—«Աղուոր աղջիկ, ըսաւ տղամարդը վայրենի,
Իբր ամուսին կամ ուղևոր՝ օր մ'եթէ գաս Սիլվարէալ [1]),
Ուր ծովուն ձայնը կը լսուի,
Աղուոր աղջիկ, պիտի չնեղուիս.
Վասըն զի սև կոշը այնտեղ
Կը պըտըտի, ազատ, դաժան, ու զայն երբէք չեն կրթեր։
Կիներն հոն շատ ատեն ունին ըզբօսնելու։»

—«Ա՛յ տըղամարդ, այդ երկրին մէջ եղներու,
Աղջիկները ձանձրութենէ կը մեռնին։»

---

[1]) Սիլվարէալ, անտառ հովանոցաձև շոճիներու, կը գտնուի փոքր քամարկին մէջ։

—«Աղուոր աղջիկ, երկու հոգւով՝ կարելի չէ ձանձրանալ»։
—Ա՜յ տըղամարդ, այդ հեռաւոր տեղերնուն մէջ մոլորողը
Կ'ըսեն թէ լեղի ջուր մը կը խըմէ
Եւ արևն անոր երեսը կ'այրէ։»
—Աղուոր աղջիկ, կրնաս շուք տեղ շոճիներուն տակ կենալ։»

—«Ա՜յ տըղամարդ, կ'ըսեն թէ այդ շոճերն ի վեր
Կը բարձրանան կանանչ օձի գալարներ։»
—«Աղուոր աղջիկ, փիւնակաթեն ու ճայն ունինք,
Որ պարզելով իրենց լոդիկը վարդագոյն,
Ռոնի ափին՝ կ'որսան զանոնք։»
—«Ա՜յ տըղամարդ, մըտիկ ըրէ,—խօսքըդ կտրեմ—
Այդ քու շոճիներդ շատ հեռու են իմ լտտենիներէս։»

—«Աղուոր աղջիկ, քահանաներն ու աղջիկներն,
Ինչպէս առածը կ'ըսէ, չեն գիտեր թէ ո՞ւր պիտի երթան
Օր մ'իրենց հացն ուտելու։»
—«Հերիք է որ իմ սիրածիս հետ ուտեմ,
Ա՜յ տըղամարդ, ալ ուրիշ բան չեմ ուզեր՝
Հեռանալու համար բոյնէս։»
—Աղուոր աղջիկ, եթէ այդպէս է, սիրտդ ուրեմն ինծի տուր։»

—«Ա՜յ տըղամարդ, կուտամ, ըսաւ Միրէյօ,
Բայց պէտք է որ անկէց առաջ սա կոկոռներն
Աղաւնեգոյն խաղող բերեն.
Անկէց առաջ պէտք է որ քու երեքժանիդ ծաղիկներ
Արձըկէ,
Այս բըլուրներն մեղրամոմի պէս հալին
Եւ այստեղէն ծովով մինչև Պօ երթըցուի։»

ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆԵԱՆ



ԱՇԽԱՏԵԼՈՒ ԱՐՈՒԵՍՏԸ

(Պրոֆ. Դր. Կ. Հելտի)

I

Աշխատելու արուեստը բոլոր արուեստներից ամենագլխաւորն է, որովհետև, եթէ մարդ ուղիղ մտքով այդ հասկանալ կարողանայ, այն ժամանակ միւս բոլոր գիտութիւններն անսահման կերպով կդիւրանան։ Չնայած դորան, հաւեմատական չափով շատ քչերը ուղիղ աշխատել գիտեն և այդ այն ժամանակ, երբ «աշխատանքի» և «աշխատաւորների» մասին աւելի քան երբէք խօսւում է։ Յատկապէս այդ արուեստի տարածումն ու աճումը խիստ կերպով աչքի չէ ընկնում, այլ ընդհակառակը, աւելի շուտ բոլորը ծգտում են որքան հնարաւոր է քիչ աշխատել կեանքի մեջ, իսկ սորա մնացած միւս մասը հանգստութեան նուիրել։

Արդ, ուրեմն, աշխատանք և հանգիստ—իրար հակապատկերը են և միմեանց չնչում են։ Ամենից առաջ քննութեան արժանին այս է, որովհետև աշխատանքը լոկ գովելը, որի համար իւրաքանչիւր ոք պատրաստ է, աշխատելու ցանկութիւն չէ զարթեցնում։ Եւ քանի որ աշխատելու մէջ չկամութիւնը իբրև մի տարածուած չարիք,—իբրև մի հիւանդութիւն կմնայ ներկայ ժողովրդեան համար, և իւրաքանչիւր ոք աւելի շուտ քան կարելի է տեսականապէս գոված իրը գործնականապէս ձեռք բերել կաշխատէ, սոցիալական դրութեան որևէ բարելաւման մասին խօսք լինել չի կարող։ Այդ իրօք կատարելապէս անըժշկելի կմնար, եթէ դրքա հակադիր իրեր լինէին։

Բայց մարդկային ամեն մի սիրտ հանգստութեան է կա-

բասում։ Ամենաչնչին արարածն ու հոգով աղքատը ճանաչում է այդ կարիքը և բարձրաթռիչ հոգին անդուլ աշխատանք չէ փնտրում։ Նոյն իսկ մարդու երևակայութիւնը ապագայ երջանիկ կեանքի համար ուրիշ ոչ մի յարմար խօսք չէ գտել քան «յաւիտենական հանգիստը»։ Եթէ աշխատելը կարևոր է և հանգիստը նորա հակադիրն է, այն ժամանակ «ճակատիդ քրտինքով պէտք է քո հացն ուտես» իսկապէս մի դառն անէծք է և երկիրս կատարելապէս արտասունքի հովիտ։ Որովհետև մարդկային ցեղի մէջ շատ քչերը կարող են միշտ «մարդուն արժանի» կեանք վարել, և սոքա, որոնց իսկապէս այդ անէծքը վերաբերում է, նորանով են կատարում, որ նոքա իրենց նմաններին աշխատել են ստիպում և աշխատանքի ստրկութեան մէջ պահում։ Եւ իրօք այդ հայեացքն են ունեցել հին աշխարհի գիտնականները։ Կոպիտ, յուսահատ աշխատելու ստրկութիւնը շատերից միայն մէկին է միջոց տալիս ըստ ամենայնի կրթուած աղատ քաղաքացու կեանք վարել, մինչդեռ ժողովուրդները մեր դարում ունին մի մեծ հասարակապետութիւն, որին ղեկավարում է մինչև իսկ քրիստոնեայ հոգևորականութիւնը աւետարանը ձեռքին, այն միտքը պաշտպանելու, որ մարդկային որոշ ցեղ միւսների համար ժառանգաբար աշխատանքի է դատապարտուած։ Քաղաքակրթութիւնը աճում է միայն հարստութեան հողի վերայ, հարստութիւնը միայն դրամագլխի միջոցով, իսկ վերջինս շահագործութեամբ նոցա, որոնք աշխատանքի համար արդար վաստակ չեն ստանում,—ergo անարդարութիւնից։ Սոքա նախադասութիւններ են, որոնք քննութեան հիմնակէտն են կազմում։ Մենք այդ տողերի յարաբերական կամ կատարեալ ճշմարտութիւնը չենք ուզում ցոյց տալ, այլ միայն այսքանը հաստատել՝ եթէ բոլորը ուղիղ աշխատեն, այն ժամանակ այսպէս կոչուած սոցիալական հարցը վճռուած կլինի, և ուրիշ ոչ մի ճանապարհով նա չի լուծուի։ Լոկ միայն ենշմամբ սակայն շատ դժուար, երբևիցէ կարող է այդ կատարուել, եթէ նոյն իսկ մի որևէ ենշման բոլոր ֆիզիքական միջոցները ձեռքի տակ ունենանք, դարձեալ ոչ մի արդիւնաւոր աշխատանք չի լինիլ։

Ուրեմն, պէտք է մարդկանց մէջ ղէպի աշխատանքը սէր զարթեցնել և դորանով մենք «մանկավարժական» իսկական հողի վերայ ենք տեղափոխւում։

Աշխատելու հաճոյքը առաջ կգայ ոչ թէ ուսուցմամբ և կամ օրինակով, այլ խորհրդով և փորձառութեամբ։ Իսկ փորձառութիւնը հեռևեալն է ցոյց տալիս իւրաքանչիւր մէկի, որը իւր վերայ փորձել է կամենում։

Ամենից առաջ փնտրած հանդստութիւնը ոչ թէ հոգւոյ և մարմնի կատարեալ կամ կարելիին չափ մեծ անգործութեան մէջ է, այլ ընդհակառակը՝ երկուսի էլ չափաւոր կանոնաւոր գործունէութեան մէջ է դտնւում։ Մարդու ամբողջ ընութիւնը գործունէութեան է յարմարեցրած և նա դառն կերպով պատժւում է, եթէ այդ փոխել է կամենում։ Ճշմարիտ է, նա հանդստութեան դրախտից դուրս է ծդուած, բայց Աստուած նորան աշխատելու պատուէր է տուել հետն էլ դորա համար հարկաւոր ուիոփանքը։ Այդ պատճառով իսկական հանդստութիւնը առաջ է դալիս միայն գործունէութեան մէջ, մի որևէ աշխատանքի յաջող ելքը մտքով տեսնելու մէջ, որևէ ծանր խնդրի լուծման մէջ, մարմնի բնական հանդստութեան բոպէներում, ամենօրուայ քնի մէջ, կերակուր ուտելու ժամանակ և կիրակնօրեայ անփոխարինելի հանդստութեան—օտղիսի մէջ։ Գործունէութեան այսպիսի մի հաստատուն, օգտակար և միայն բնական դադարումներով ընդհատուած դրութիւնն է երջանիկը, որը երկրի վերայ միայն դոյութիւն ունի, մարդ արտաքին ուրիշ ոչ մի երջանկութիւն չպէտք է ցանկանայ։ Այո, նոյն իսկ կարելի է մի քայլ ևս առաջ դնալ և ասել՝ գործունէութեան բնութիւնից շատ բան չէ կախուած։ Իւրաքանչիւր իսկական գործունէութեան, որը լոկ խաղալիք չէ, հետաքրքիր լինելու յատկութիւն ունի, հէնց որ մարդ լուրջ կերպով նորա մէջ է խորասուզւում, ոչ թէ գործունէութեան եղանակն է երջանիկ դարձնում, այլ գործելու և յաջողութիւն ունենալու ուրախութիւնը։ Ամենամեծ դժբաղդութիւնը, որ դոյութիւն ունի, առանց աշխատանքի և առանց սորա պտղի՝ իւր վախճանում կանգնած կեանքն է։ Ուստի կայ և պէտք է լինի

իրաւունք աշխատանքի վերայ. սա նոյն իսկ մարդկային բոլոր իրաւունքներից նախնականն է։

«Անդործները աշխարհիս վերայ ճշմարիտ դժբախտներն են։ Բայց դոքա այնքան շատ են և աւելի բարձր դասակարգի մէջ քան ստորին, որոնց կարիքը դէպի աշխատանք է մղում, մինչդեռ ուրիշները կեղծ կրթութեան, նախապաշարմունքի և ամենաղօրեղ սովորութիւնների շնորհիւ, որոնք որոշ շրջաններում սեպհական աշխատանքը մերժում են, համարեա այդ անյոյս և ժառանգական մեծ դժբաղդութեանն են դատապարտուած։ Մենք տեսնում ենք, այո, ամեն տարի նոցա ներքին դասակարգութիւնը և ծանծրոյթը մեր լեռներն ու ամառանոցները տեղափոխուած, որոնցից նոքա իզուր կաղդուրումն են սպասում։ Դեռ ևս ամբողջ ամառը բաւական է դոնեա իրենց հիւանդութիւնից ծագած անդործութիւնը ֆիզիքական որ և է ջանքի շնորհիւ առողջացնելու. դորանից յետոյ պէտք է նոքա ծմեռն ևս անցնեն, և մօտիկ ապագայում հիւանդանոցները,— որոնց համար են համարեա ստեղծել նոքա մեր գեղեցիկ դրամները,— բայց պիտի լինին ամբողջ տարին այդպիսի անհանգիստ մարդկանց համար, որոնք ամեն տեղ հանգստութիւն են փընտրում և ոչ մի տեղ չեն դտնում,— որովհետև նոքա այդ աշխատանքի մէջ չեն փնտրում։ «Վեց օր պէտք է դու աշխատես», ոչ պակաս և ոչ աւելի։ Մեր ժամանակի ջղային հիւանդութիւններից շատերը այս դեղատոմսով պէտք է բժշկուին, եթէ որ նոքա անդործ ծնողների սերունդի անէծք չեն և ամարանոցային ու խելադարների բժշկներից շատերը նոցա վերայ իրենց փորձերը չեն կատարում։ Կեանքն ընդհանրապէս մարդ չպէտք է «ճաշակէ», այլ պէտք է պաղաբեր դարձնէ։ Ով այդ չդիտէ, նա արդէն իւր հոգեկան առողջութիւնը կորցրել է, և անկարելի է, որ նա մարմնականն ևս այնքան պահել կարողանայ քան այդ բնական յատկութեանց շնորհիւ և կեանքի ուղիղ եղանակով կարելի կլինի [1]։ Մեր

[1]) Գործունեայ մարդկանցից մէկը՝ Լէվինգստոնն ասում է. «Ճակատի քրտինքը, երբ մարդ Աստուծոյ համար է աշխատում, ամրացնում է ջղերը», և մեր ժամանակի նշանաւոր մի գիտնական,

կեանքը տևում է 70 կամ շատը 80 տարի և եթէ նա ջանքի և աշխատանքի մէջ է եղել, ապա ուրեմն խիստ օգտակար է եղել։ Այդպէս պէտք է հնչէ առածը։ Գուցէ այդ էլ նորա սկզբնական իմաստի մէջ է գտնուում։

Իսկապէս մենք լաւ ենք գործում, հէնց որ մի ճշդրիտ սահման ենք որոշում։ Բոլոր աշխատանքները միմեանց նման չեն, կայ և երևութական աշխատանք, այսինքն այնպիսին, որ երևոյթի վերայ է հիմնուած կամ թէ չէ առերևոյթ է ծեռքի տակ։ Մի մասը այսպէս ասած «կանանց ծեռագործների», որը լոկ միայն զինուորական խաղ է, ինչպէս որ սոքա սկզբում առաջ են եկել, «արուեստաներին» վերաբերեալ զբաղմունքների մեծ մասը, որը կայանում է դաշնամուրի անբաւարար և անպտուղ նուագելուն մէջ, որսի և այսպէս ասած «զուարճութիւնների» կարևոր մի մասը, նոյնպէս և ամենաքիչը սեպհական կարողութեան «անտեսութիւնը» անգամ չէ պատկանում դորան։ Խոհեմ և գործունեայ մարդը պարտաւոր է մի աւելի գոհացուցիչ բան փնտրել [1]։

Հէնց այդ է պատճառը թէ ինչու մեքենաների վերայի աշխատանքը, մեքենան և հատ ու կտոր աշխատանքները ընդհանրապէս այդքան քիչ են բաւականութիւն տալիս, և արուեստաւորը կամ երկրագործը աւելի գոհ է քան գործարանի բա-

---

կցում է դորան, «Մարդ կարող է խղճով հանգիստ լինել հոգւոյ անդադրում աշխատանքի մէջ»։ Երկուսն էլ թէև խօսում են իրենց սեպհական աշխատանքից, բայց յայտնապէս սեպհական փորձառութեան հիման վերայ։

[1]) Շուարիայի առանձնայատուկ Ֆլատտիս քահանան իւր երկրի մի սպայի մասին հետևեալն է պատմում, որը դքսի համար աննպատակ կօշկակարութեան մէջ իրեն դժբաղդ էր զգում և իւր ցաւի պատճառները չէր ճանաչում։ Նա համոզեց սպային նորանով, որ մի փոքրիկ աղջիկ կանչեց և խոստացաւ տալ նորան մի ֆեօրին, եթէ աղջիկը մի ամբողջ օր, արծաթեայ գդալը ձեռքին աթոռի վերայ նստած կմնայ։ Ինչպէս որ նա գուշակել էր, կէս ժամ չանցած, ձգեց աղջիկը ձեռքից գդալը և ասաց, որ այդպիսի մի անօգուտ աշխատանք չի կատարի և չէ հաւատում, որ դորա համար անպատճառ կվարձատրուի։ Ահա այդ է պատճառը, թէ ինչու մարդկանցից շատերը իրենց «աշխատանքի» մէջ ուրախութիւն չեն գտնում։ Այդ էլ նոյն օրինակի համար է։

նուորը, որի պատճառով և սոցիալական շարժումներն են առաջ եկել։ Այդ բանուորները իրենց աշխատանքի արդիւնքը շատ քիչ են զտնում։ Մեքենան աշխատում է. մարդս միայն նորա ենթադրեալ մի գործիքն է կամ միշտ միմիայն նորա որևէ պատուտակն է ուղղում, սակայն մի ամբողջ ժամացոյց չէ արտադրում նա, որը արուեստի մի ուրախալի արդասիք, մարդկային ճշմարիտ աշխատանքի մի վաստակ է։ Այսպիսի մի մեքենական աշխատանք մեղանչում է մարդկային արժանապատուութեան մասին ունեցած բնական հասկացողութեան դէմ, որն ամենաչնչին իրին յատուկ է, սակայն ճշմարտապէս նորան բաւականութիւն տալ չէ կարողանում։

Այն աշխատաւորներն են, ընդհակառակ, ամենից երջանիկը, որոնք ամբողջովին իրենց աշխատանքի մէջ են խորասուզուում, նորանով բարձրանալ կարողանալու, արուեստագէտները՝ որոնց հոգին ամբողջովին իրենց առարկայով լեցուած է, երբ նոքա նորան ըմբռնում և ներկայացնում են, գիտնականները՝ որոնք բացի իրենց առարկայից ուրիշ բանի համար մի րոպէ ժամանակ չունին։ Այո, նոյն իսկ բոլոր ամուսիններից «օրինակելիները», որոնք միասին մի փոքրիկ գործունէութեան շրջանում, իրենց համար փոքրիկ աշխարհ են ստեղծել։

Դոքա բոլորը—դուցէ անաչառ վերցրած նոյն իսկ սնարդար կերպով—ունեն աշխատութեան զգացմունքը, աշխարհին ոչ թէ խաղ՝ այլ ճշմարիտ, օգտակար, հարկաւոր աշխատանք տալու համար և նոցանից շատերը այդպիսի յարատև, յողնեցուցիչ և դուցէ նոյն իսկ ֆիզիքապէս քիչ առողջ գործունէութեան մէջ հասակի ամենաբարձր աստիճանին են հասնում, մինչդեռ քիչ զբաղուած բարձր դասակարգի մարդիկ և նորածևութիւն սիրող կանայք, մի և նոյն ժամանակ ամենից անօգուտները, սկզբունքով ներկայ դարուս ամենից քիչ աշխատող մարդկային դասակարգն են ներկայացնում և միշտ իրենց առողջութիւնը վերականգնելով են զբաղուած։

Ամենից առաջ, այսօր ինչ որ մեր աշխարհին հարկաւոր է, փորձառութեան և այն մտածողութեան ընդհանրացումն է, որ առանց բացառութեան, բոլոր մարդկանց մարմնական և հո-

դեռ առողջութեան համար կարևորը — հետևապէս նոցա երջանկութիւնն — չափաւոր աշխատանքն է։

Սորանից հաստատապէս հետևում է, որ կոչումով դասարկաշրջիկները ոչ թէ մի նախամեծար, «ականաւոր» դասակարգի են պատկանում, այլ նոցա վերայ պէտք է նայել իբրև հոդեպէս անկատար կամ վատառոյգ մարդկանց վերայ, որոնք ուղիղ կենցաղավարութիւնը կորցրել են։ Հէնց որ սովորութիւնը, որ ընդհանուր, հասատատուն մի համոզման արտայայտութիւն է, նոցա մէջ յայտնուած կլինի, այդ ժամանակ և միայն այդ ժամանակ աշխարհի համար նոր և լաւ դարեշրջան կսկսուի։ Բայց մինչ այդ նորան վերասում է մէկի անպատշաճ և միւսի անբաւական աշխատանքը, որոնք երկուստէք պայմանաւորուում են, և դեռ հարց է թէ այդ երկու կողմերից որն արդարապէս աւելի դժբաղդն է։

Ինչո՞ւ համար են այս մտքերը, հարցնում ենք, որոնք հաղարաւոր տարիների փորձառութեան հիմք ունին, որոնց իւրաքանչիւր ոք իւր վերայ ամենայն օր, երբ նա աշխատում կամ չէ աշխատում, փորձել կարող է, և բոլոր կրօններն ու փիլիսոփայութիւնները քարոզում են այնպիսի ձևով, որ, օրինակ, դեռ ևս հազարաւոր «կանայք» կան, որոնք աստուածաշնչի վերայ մեծ յոյս են դնում, յուիտենական դատաստանը շատ եռանդով պաշտպանում են, բայց խղճի զարմանալի հանգստութեամբ մի ընդորդվին պարզ պատուիրանի հակառակ, ամենաշատը մի օր — աշխատում են և վեց օր իրենց հանգրստութեան նուիրում։ Գլխաւորապէս այդ առաջ է գալիս աշխատանքի անարդար բաժանումից և կարգաւորումից, որն անպայման պարզապէս այդ ձևով բեռը կդառնայ, որով և մենք մեր բնագրի վերնագրին ենք վերադառնում։

Այստեղ միայն մի ճշմարիտ հրահանգ հնարաւոր է այն մարդու դէմ, որը սկզբունքով մի որ և է աշխատանքի կարիքի համոզումն ունի և հաճոյքով այն սկսել կը կամենար, եթէ զարմանալի կերպով նորան միշտ մի որևէ բան չխանգարէր։

(վերջը միւս անգամ)

ԳԵՐՄ. Թ. ԱՐՏԱԿ. Վ. ՍՄԲԱՏԵԱՆՑ

ԵՐԱԶԵԱԼ ՈՍԿԵԴԱՐ

III

Միջին դարերի աղանդները.—Վերածնութեան շրջան.—Թոմաս Մոռ և նրա ուտոպիան.—

Միջին դարերում լոյս չի տեսել ոչ մի շարադրութիւն, որ յատկապէս նուիրուած լինէր անցեալ կամ ապագայ ոսկեդարի նկարագրութեան. բայց սխալ կլինէր ասել, որ ոսկեդարի գաղափարը խսպառ մոռացուած էր: Նա միայն երևան էր գալիս միջին դարերու յատուկ կրօնական երևոյթների ուշարժումների մէջ, որոնց թուին են պատկանում խաչակրաց արշաւանքները և բազմաթիւ աղանդները և հերետիկոսական վարդապետութիւնները: Յայտնի է, որ վերջիններս գլխաւորապէս յաջողութիւն էին գտնում տնտեսապէս և բարոյապէս ճնշուած դիւղացի և մանր արհեստաւոր տարրերի մէջ, խոստանալով նրանց ոչ միայն երկնային երանութիւն, այլ և երկրիս վերայ եղբայրութիւն և տնտեսական հաւասարութիւն, մի խօսքով ոսկեդարեան երջանկութիւն: «Առաքելական եղբայրները» (պաթառենները) նպատակ էին դրել բարեփոխել մարդկային կեանքը ռամկավարական սկզբունքների հիման վերայ և XIV-րդ դարում այդ ուղղութեամբ մի անյաջող փորձ էլ արին (Դոլչինոյի հռչակաւոր ապստամբութիւնը և նրա եղերական մահը 1307 թ.): Բէգգարդների աղանդը պահանջում էր թէ ստացուածքի և թէ կանանց հանրութիւն: Նրանք կատարեալ հաւասարութիւն էին քարոզում և դէմ էին ամեն տեսակ իշխանութեան: Միջին դարերի վերջին մենք տեսնում ենք, որ դիւղացիները—որոնց տնտեսական և իրաւական դրութիւնը այդ միջոցին շատ աւելի վատացել էր—ամէն տեղ ապստամբում են կրօնական դրօշակի տակ, բայց իրապէս իրոնց

տնտեսական վիճակը և իրաւական դրութիւնը բարւոքելու նպատակով (Լոլլարդները—Անգլիայում, բաբօրիդները—Բոհեմիայում, վերջապէս նշանաւոր գիւղական ապստամբութիւնը Գերմանիայում)։

Եկեղեցական վերանորոգութեան (Ռեֆօրմացիայի) շրջանում տեղի ունեցած Եան Մատիսէնի, Թօմաս Միւնցէրի և Իօան Լէյդէնցու ապստամբութիւնները պէտք է բացատրել ոչ միայն նրա կրօնական ֆանատիկոսութեամբ, այլ և այն հաւատով, որը տարածուած էր ժողովրդի մէջ, և որով առաջնորդուած էին և նրանք՝ թէ ոչնչացնելով հին տնտեսական և հասարակական կարգերը, կարելի է ստեղծել նոր, երջանիկ կեանք։ Հետաքրքրականը այն է, որ դրանց բոլորի իդէալը— կոմմունիզմն էր, մասնաւոր կամ կատարեալ. և այդ իդէալն էր, որ նրանք ուզում էին իրականացած տեսնել կեանքի մէջ։ Սակայն, ինչպէս յայտնի է, այդ բոլոր փորձերը հէնց սկզբում խեղդուեցին իշխանների, ազնուականների և բուրժուազիայի հոգևորականների ձեռքով, որոնց շարքումն էր Լուտերը։

Կրօնական էնդուզիաստների ու նրա ջանքերով կազմուած համայնքների անյաջողութիւնը այնուամենայնիւ չմեռցրեց ժողովրդի մէջ երազեալ ոսկէդարի, Պղատօնի իդէալական պետութեան կամ առաջին քրիստոնեաների փայփայած երկնային թագաւորութեան գաղափարը։ Վերածնութեան շրջանը, իր նոր գիւտերով ու նոր հորիզոններով ընդհակառակը նոր սրնունդ էր տալիս մարդկային երևակայութեան, իսկ նոր բացուած աշխարհների նկարագրութիւնները համոզում էին նրանց, որ երջանիկ աշխարհ ասածդ—երազ կամ հէքիաթ չէ, որ իրօք հեռու, անյայտ ու մինչև օրս անծանօթ երկիրներում գոյութիւն ունի գրախտային կեանք, առաս, անհոգ և երջանիկ։

Ճանապարհորդները հաղար ու մի գոյներով նկարագրում էին իրանց արկածները, տեսած հրաշալի կղզիները, նորագիւտ Ամերիկան, նրա բնիկների կազմակերպութիւնը, կեանքը և այլն և խոր կերպով ազդում էին ընթերցողների երևակայութեան վերայ։ Համոզմունք էր ստեղծուել, որ նորագիւտ երկիրների ժողովուրդների կազմակերպութիւնը աւելի կատարեալ է և

ընդունակ երջանկացնելու նաև եւրոպացիներին, եթէ Եւրոպայումն էլ նոյն կարգերը մացուեն։ Ահա այդ ժամանակ երեւան է գալիս մի շարադրութիւն, որը ըստ երեւոյթին պատմում է այդպիսի նորագիւտ կղզու և նրա բնակչութեան կազմակերպութիւն, տնտեսական դրութեան, ընտանեկան յարաբերութիւնների մասին և այն, մինչդեռ իսկապէս հեղինակը նկարագրում է երեւակայական կղզի ու բնակչութիւն, իդեալական պետութիւն ու կազմակերպութիւն։

Դա Թոմաս Մօռի ուտոպիան էր *), որը լոյս տեսաւ 1516 թուականին։ Թ. Մօռը ծնուած էր 1478 թ. Լօնդոնում և ժամանակի կրթուած մարդկանցից մէկն էր. նա տաղանդաւոր փաստաբան էր և զանազան հարուստ վաճառականական տների դաւատարմատար։ 26 տարեկան հասակում նա արդէն ընտրւում է պարլամէնտի անդամ և իր ընդունակութիւնների շնորհիւ հրաւիրուեց պետական-արքունական պաշտօնավարութեան, ուր կարճ միջոցում հասաւ ամենաբարձր աստիճանների և պատասխանատու պաշտօնների։ 1599 թուին նա լորդ կանցլերի պաշտօնը ստացաւ։ Դա այն ժամանակն էր, երբ Հենրիկոս VIII-ը որոշեց անջատուել Հռոմի եկեղեցուց. Թ. Մօռը ընդդիմադրում էր թագաւորի քմահաճութեանը, մասնաւորապէս նրա ամուսնական արկածներին և երբ 1631 թուին անգլիական հոգեւորականութիւնը Հենրիկոսին եկեղեցու գլուխ և պետ հռչակեց—Թոմաս Մօռը հրաժարուեց պաշտօնից։ Մօռի շիտակութիւնը, յամառութիւնը և օպպոզիցիան թագաւորին դուր չէր գալիս. նա հակառակորդներ չէր կարող մարսել։ Եւ ահա հնարւում է կեղտոտ ամբաստանութիւն, տեղի է ունենում պատասխանական կատակերգութիւն և թագաւորի հրամանով Մօռը գլխատւում է 1535 թուին։ Իր հռչակաւոր շարադրութիւնը Մօռը գրել է

*) Գրքի վերնագիրն էր՝ De optimo Reipublical statu, deque nova insula utopia libellus vere aureus (Ոսկէ գիրք կատարեալ պետութեան կազմակերպութեան և Ուտոպիա նոր կղզու մասին)։ Utopia բառը յունարէն ou (ոչ) և topos (տեղ) բառերից է և պէտք է նշանակէ «ոչ մի տեղ» «անտեղ», «գոյութիւն չունեցող»։

Հոլլանդիայում, ուր եկել էր նա առևտրական դաշնագիր կապելու յանձնաժողովի հետ։ Թէ այստեղ և թէ Անգղիայում Մօռը մշտական յարաբերութիւնների մէջ էր ճանապարհորդների, հեռաւոր երկիրների հետ առևտուր անողների և հումանիստների հետ, որոնց ազդեցութիւնը չի կարելի չնկատել նրա այդ շարադրութեան մէջ։ Նրա Ուտոպիան մեծ ընդունելութիւն գտաւ ընթերցող հասարակութեան մէջ և ոչ միայն Անգղիայում, այլ և ամբողջ Եւրոպայում։ Ըստ երևոյթին Թ. Մօռը բաւարարութիւն էր տալիս ժամանակի պահանջին։ Ահա այդ գրքի բովանդակութիւնը։

Մօռը պատմում է, թէ ինչպէս նա Ֆլանդրիայի Անտվերպէն քաղաքում պատահում է իր ընկերոջ Պետրոս Գելիսին, որը զբօսնում էր Ռափայել Հիտլոդէյ ճանապարհորդի հետ։ Վերջինս Ամերիգօ Վէսպուչչիի ընկերներից է եղել և նրանից բաժանուելով Բրազիլիայի ափերին այցելել է շատ նոր տեղեր, ի միջի այլոց Ուտոպիա կղզին և Հնդկաստանի վրայով վերադարձել է տուն։ Մօռը իր ընկերոջը և Հիտլոդէյին հրաւիրում է իր մօտ հիւր և այստեղ, ճաշի սեղանին, նրանք սկսում են զրոյց անել նախ անգղիական օրէնսդրութեան մասին։ Հիտլոդէյը Անգղիայի դաժան օրէնքները և մահուան պատիժը գողերի և ուապակների համար—աննպաստակ է դտնում։ Հարկաւոր է, ժողովուրդը այնպիսի պայմանների մէջ դնել, որ նա ստիպուած չլինի գողանալու։ Մինչդեռ Անգղիայի այժմեան օրէնքները պաշտպանում են տիրող տնտեսական դրութիւնը, որը հարստացնում է հարուստներին և զօրեղներին և ընդհակառակը սնանկացնում է թոյլերին և ստիպում են նրանց գողութիւն անել *)։ Նրան հակաճառում են և նա ոգեւորուած սկսում է քննադատել Եւրոպական բոլոր կարգ ու սարքերը, թէ տնտեսական և թէ իրաւական ու այն համոզմունքն է յայտնում, որ Պղատօնը իրաւացի է եղել, երբ ա-

*) Այստեղ ի միջի այլոց այն կարծիքն է յայտնում, որ պառաւներին և աշխատելու անընդունակներին պետութիւնը պէտք է թոշակ նշանակէ. մի միտք, որը իրագործուեց Անգղիայում միայն նորերս։

սելէ թէ փրկութեան և երջանկութեան միակ ճանապարհը անտեսական հաւասարութեան մէջ է»։ Տիրող անարդարութիւնը վերացնելու միակ ճանապարհը—մասնաւոր սեփականութեան ոչնչացումն է». ասում է նա։ Այդ բանի դէմ բողոքում է Մօրը, որովհետև այդպիսի կարգերը ընդհանուր ծուլութիւն առաջ կբերեն, չի լինի ոչ մի յառաջադիմութիւն և այլն։

—«Քո այդ կարծիքներդ ինձ չեն զարմացնում, ասում է Հիտլոդէյը, որովհետև դու չես եղել Ուտոպիա կղզու վերայ, ուր ես անցկացրի հինգ տարի. եթէ դու ծանօթանաս նրա կարգերի, օրէնքների և բարքերի հետ, դու կհամոզուես, որ այնտեղի հասարակութիւնը ամենալաւ կերպով է կազմակերպուած»։

Այդ խօսքերից յետոյ նա սկսում է նկարագրել Ուտոպիայ կազմակերպութիւնը։

Ուտոպիան-կղզի է, որի վրայ 55 միատեսակ քաղաք կայ՝ Ամարօտ մայրաքաղաքով։ Ամեն քաղաք իր շուրջը փրուած մշակելու հողեր ունի. գիւղական աշխատանքներով պարապողները ապրում են քաղաքից դուրս մեծ ընտանիքներով, ոչ պակաս քան 40 կին և տղամարդուց բաղկացած։ Երկու տարի գիւղում ապրելուց յետոյ այդ ընտանիքի կէսը տեղափոխւում է քաղաք, իսկ քաղաքից գալիս են նոյն թուով նորերը, որոնք պարտական են երկու տարի գիւղացիութիւն անել ու այնպէս ամեն տարի գիւղերի և քաղաքների միջև աշխատողների փոխարինութիւն է լինում։ Այսպէս ուրեմն բոլոր ուտոպիացիները և գիւղացիներ են և քաղաքացիներ։ Գիւղի արտադրութիւնը տեղացիներին բաւականութիւն տալուց յետոյ ուղարկւում է քաղաք, որտեղից գիւղը ստանում է այն բոլորը, ինչ որ հարկաւոր է կեանքի համար։ Ամեն մարդ բացի հողագործութիւնով պարապելուց պարտական է նաև զբաղուել մի որ և է արհեստով։ Ամենքն էլ պարտական են աշխատել. այդ բանի վրայ հսկողներ կան։ Բայց աշխատանքը շատ չափաւոր է և օրական վեց ժամից աւել չէ։ Ամբողջ կղզու արդիւնաբերութիւնը—թէ գործարանների, թէ գիւղա-

տնտեսական և իր արհեստաւորների—ենթարկուած է որոշ տնօրինութեան։

Ուտոպիայում փող գոյութիւն չունի. ամեն մարդ ստանում է իր թաղի շուկայից ինչ որ իրեն հարկաւոր է. և ընդհակառակը ամեն մարդ իր աշխատանքի արդիւնքը—ապրանքը—տանում է այդ շուկան և դարսում է հասարակական շտեմարաններում և պահեստներում։ Ոչ ոք պէտքից աւելի չի վերցնում, որովհետև ապահովութիւն ասած բանդ նրանք չգիտեն. իսկ չգիտեն, որովհետև ոչ կարող են աւելորդ ապրանքով առևտուր անել, ոչ էլ պէտք եղած ժամանակը պակասութիւն դդալ։

Կերած խմածները բոլորինը համայնական է և կազմակերպուած է այս ձևով։ Ամեն մի փողոցի վրայ շինուած է մի մի ընդարձակ պալատ ուր որոշ ժամին բնակիչները հաւաքւում են սեղանի շուրջը։ Կերակուր պատրաստողները—կանայք են. սպասաւորները—երիտասարդներ։ Սեղանատան կարգերը—վանական սեղանատուն են յիշեցնում։ Քաղաքի, ընտանիքի, ընտանիքի անդամների թիւը սահմանափակ է և ենթարկուած է որոշ սիստեմի։

Ընտանիքի մէջ 10—16 չափահաս անդամից աւել լինելու չէ. աւելին տեղաւորւում է ուրիշ ընտանիքներում։ Քաղաքը իր գիւղերով 6000 ընտանիքից աւել ունենալու չէ. աւելիներից նոր դաղութներ են կազմում։ Աղջիկները 18 տարեկանից առաջ, իսկ տղամարդիկ 22—իրաւունք չունեն ամուսնանալ. միակնութիւնը պահւում է սրբութեամբ. ամուսնական անհաւատարմութիւնը պատժւում է՝ առաջին անդամ—գերի են դարձնում, երկրորդ անդամ—մահուան պատժի ենթարկւում։ Ապահարզանը շատ դժուար է։ Ամեն մի ընտանիքի մէջ փոքրները ենթարկւում են մեծերի իշխանութեան, կանայք—ամուսինների, երեխաները—ծնողների։

30 ընտանիք ընտրում են իրանց միջից մի պեա՝ ֆիլարխ անունով, որը առանձնապէս հսկում է իր անդամների աշխատանքների վրայ և առհասարակ տնտեսական յարաբերութիւնների։ Ամեն մի 300 ընտանիք իրանց տասը ֆիլարխնե-

րով ենթարկուում են մի պրոտոֆիլարխի։ Բոլոր ֆիլարխները միասին հաւաքուելով ընտրում են ժողովրդի առաջարկած թեկնածուներից մի իշխան կամ քաղաքապետ։ Իշխանը պրոտոֆիլարխների հետ երեք օրը մի անգամ նիստ է կազմում և դրաղուում է վարչական գործերով։ Բոլոր քաղաքները ուղարկում են մայրաքաղաք երեքական ամենախելացի ծերունիներ, որոնք գլխաւորապէս զբաղուած են ժողովրդի տնտեսական կեանքը կարգաւորելով, բնակչութեան և արդիւնաբերութեան վերաբերեալ վիճակագրական տեղեկութիւններ հաւաքելով և այդ մասին կարգադրութիւններ անելով։

Խոշոր պաշտօնեաները ընտրուում են մի տարի ժամանակով, բացի իշխաններից և քաղաքապետներից, որոնք ընտրուում են ցմահ։

Հաւատը մասնաւոր գործ է ճանաչուում և կղզու վերայ զանազան կրօններ կան. բայց անհաւատները ոչ մի վարկ չունեն։ Քահանաները ընտրուում են և մեծ պատիւ են վայելում։ Կանայք էլ կարող են քահանայ ընտրուել։ Գիտութիւնը ազատ է. ով ինչ գիտութիւնով որ ուզում է պարապում է. բայց տերութիւնը հսկում է, որ անընդունակները գիտութիւնով չզբաղուեն, որովհետև գիտնականները շատ յարգի են և ֆիզիքական աշխատանքից ազատուած են։ Ուտոպիացիները պատերազմի դէմ են, բայց երբ իրենց վրայ յարձակուում են— պարտականութիւն են համարում ամբողջ ընտանիքով գնալ պատերազմի դաշտը։

Վերջացնելով իր նկարագրութիւնը, Հիթլոդէյը եզրափակում է՝ «միայն ուտոպիայում ամենքը աշխատում են ընդհանուրի օգտին, որովհետև այնտեղ ոչ փող կայ, ոչ մասնաւոր սեփականութիւն և ուր ամեն ոք հաւատացած է, որ նա ինքն էլ, իր ընտանիքն էլ, կատանան հասարակական պահեստներից այն բոլորը, ինչ որ իրանց հարկաւոր է։ Այնտեղ տիրում է կատարեալ հաւասարութիւն և թէպէտև սեփականութիւն չկայ, բայց ամենքն էլ հարուստ են։ Ամենքն էլ ապրում են ուրախ և անհոգ, որովհետև վաղուայ մասին հարկաւոր չէ

մտածել։ Այնտեղ թոյլի և աշխատելու անընդունակի մասին նոյնչափ հոգս են քաշում, որչափ և ուրիշների մասին։

Իսկ ձեզ մօտ. ո՞ւր է ձեզ մօտ արդարութիւնը, երբ ծրիակեր հարուստները և ազնուականները փարթամ և ճոխ կեանք են վարում, իսկ խեղճ արհեստաւորները, բանուորները, գիւղացիները և այլ աշխատաւոր տարրը տաւարից աւելի բանելով, տաւարից վատ է ապրում... դա արդարութիւն չէ դա հարուստների դաւադրութիւն է։ Եւ ինչ զարմանք որ ձեզ մօտ անպակաս են գողութիւնը, աւազակութիւնը, վիրաւորանքները, սպանութիւնները և այլն։ Եւ այս բոլորը աղքատութեան հետ միասին կ'ոչնչանար, եթէ վերացուեն անհատական սեփականութիւնը և փողը»։

«Թէպէտև, վերջացնում է իր գիրքը Թ. Մօռը, ես համաձայն չեմ Հիտլոդէի յայտնած կարծիքների հետ, բայց կարծում եմ, որ մենք ուտոպիացիներից կարող էինք շատ փոխառնել...»։

Ինչպէս տեսնում է ընթերցողը հեղինակն այս շարադրութիւնով տալիս է մեզ իդէալական կաղմակերպութեան պատկերը, որը դուցէ իր շատ կողմերով չի կարող գոհացնել արդի մարդկութեան պահանջները, բայց այնուամենայնիւ ներկայացնում է մի կատարեալ հասարակական կաղմակերպութիւն, որի անդամները յամենայն դէպս XVI դարու եւրոպացիներից աւելի երջանիկ պէտք է լինէին։ Իսկ այդ իդէալական պետութեան կաղմակերպութեան հիմքը—այժմս էլ շատերի իդէալն է խօսքս սոցիալ-դէմօկրատների մասին է, որոնց ապադայ պետութիւնը, ըստ Կարլ Մարկսի, հիմնուած պիտի լինի տընտեսական յարաբերութիւնների կանոնաւոր անօրինութեան և հանրակեցութեան վերայ առանց մասնաւոր սեփականութեան։

Մեր արած ընդհանուր պատմական տեսութիւնից ընթերցողը տեսնում է, որ դա նոր միտք չէր և որ մինչև իսկ իրագործւում էր կեանքում, Թէպէտ և ոչ լիովին և կանոնաւոր ձևով։ Բայց առաջին անգամ այդ բոլորը ձևակերպեց ու իրագործելի երաղ դարձրեց—Թովմաս Մօռը իր Ուտոպիայով։ այդ պատճառով ուտոպիան էլ հասարակ անուն դարձաւ և

այժմ նշանակում է այն բոլոր աշխատութիւնները (կամ գաղափարները, ձեւակերպութիւնները), որոնք իդէալական բնաւորութիւն ունեն և կեանքի մէջ իրագործուելու ոչ մի և կամ շատ քիչ շանսեր ունեն, յամենայն դէպս մօտ ապագայում։

Թ. Մօռի ուտոպիան հետևողներ առաջացրեց, որոնց երկար շարքը մինչև մեր օրերն է հասնում։ Մենք կխօսենք նրանց մասին էլ, բայց առանձնապէս կանգ կառնենք միայն այն գրուածքների վերայ, որոնք նշանակութիւն ունեն կամ քաղաքակրթութեանը պատմութեան տեսակէտից և կամ մեծ ժողովրդականութիւն են վայելել ընթերցող շրջանների մէջ։

ՄԻՆԱՍ ԲԵՐԲԵՐԵԱՆ

ՅՈՒՇԵՐ

Ամառային մի ոսկէվառ առաւօտ
Թողած իւր բոյն, լեռան գագաթ, ծառի ոստ,
Փամբակ ձորի մեղմ ու պայծառ երերում
Լի բերկրութեամբ անհոգ բազէն էր ճախրում:

Դիտում էի անդ սլացող թեւերը
Ու նոր յիշում կեանքիս անցած օրերը.
Երբ ես անհոգ բազէի պէս ու ազատ
Ապրում էի, յոյսեր տածում հարազատ:

ՋՕՆ

29 օգոստ. 1908

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ

ԴԻՒԱՆ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

գիրք է.

Դաւիթ կաթողիկոս մ. II

մի վիմատիպ Գերմանով

ԳԻՆՆ Է 4 Ռ

ստանալ կարելի է «Լուսայ»-ի խմբագրատանը.

Վաճառւում է

Լուսաւորչի մեծադիր իւղաներկ պատկերը

Թղթի վրայ՝ 3 ռ.

կտաւի վրայ՝ 15 ռ.

Շուտով լոյս կը տեսնի

ՄՕՒՐԱՑԱՆԻ

Երկասիրութիւններ հատոր Բ.

1, Իմ պատասխանը քննադատներին.

2, Ռուզան (փոփոխուած).

3, Անդրէաս երէց։

պատրաստւում է տպագրութեան համար

ՆՈՐ ԹՈՒՐՔ-ՀԱՅ ԲԱՌԳԻՐՔ

Բազմաթիւ պատկերներով զարդարուած

աշխ. Վարդգէս Աղանեանի

(ուս. Մոսկ. համալսար. լեզ. բաժնի)

Այս մասին կտրուի առանձին և ընդարձակ ծանուցում։

1909-14 ՏԱՐԻ

„ԼՈՒՄԱՅ“

ԳՐԱԿԱՆ-ՊԱՏՄԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

ԲԱԺՆԷԳԻՆԸ

ԻՋԵՑՐԱԾ Է

5 ՐՈՒԲԼՈՒ

«Հայրենիք» շաբաթաթերթի բաժանորդների համար 4 ռուբլի։

Ապառիկ ոչ ոքի չի ուղարկուում

Լուման ժամանակաւորապէս լոյս կտեսնի տետրերով 32-ից մինչ 48 երես։ Հարկաւոր դէպքում կը տրուին պատկերներ և առանձին յաւելուածներ։

ԳԱՅՄԱՆՆԵՐ

1. Նիւթերը պիտի գրուած լինին մի էջի վրայ և ոչ աւելի քան 32 տպագրական երեսից բաղկացած։

2. Արտատպութիւն ոչ մի դէպքում չի տրուում աշխատակիցներին։

3. Նիւթերը չեն վերադարձուում։

4. Զպուող նիւթերի մասին ծանուցում է տրուում ամսագրի մէջ պատասխանների բաժնում։

5. Թարգմանական նիւթեր ընդունուում են շատ կարճ և ընտիր հեղինակների։